


ԱՐԿԱՆԵՐԻ

ԵՐԿՐՆԵՐ


ԵՎ

ԺՈՂՈՎԱՌՈՒՄՆԵՐ

IV















Ժողովածուն նվիրված է Իրանի նոր ու նորագույն շրջանի պատմության, տնտեսության և մշակույթի մի շարք հրատապ պրոբլեմների ուսումնասիրմանը, ինչպես նաև նրա ներքին ու արտաքին քաղաքականության հարցերին:

Հուսարանվում են ազրարային և դասակարգային հարաբերությունները, տարբեր ցեղերի քաղաքական դերը, Իրանում հայկական գաղութի հետ կապված հարցերը և այլն:

Сборник посвящен новой и новейшей истории Ирана. изучению ряда актуальных проблем экономики и культуры, а также вопросам его внутренней и внешней политики.

Освещаются аграрные и классовые отношения, политическая роль различных племен; вопросы, связанные с армянской колонией Ирана, и др.

Խմբագրական կոլեգիա

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ, Հ. Մ. ԵԳԱՆՅԱՆ  
(պատ. խմբագիր), Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ, ՀԱԶԻԵ ԶՆԴԻ

Редакционная коллегия

О. Г. ИНДЖИКЯН, Г. М. ЕГАНЯН  
(ответ. редактор), Н. О. ОГАНЕСЯН,  
Е. К. САРКИСЯН, АДЖИЕ ДЖНДИ

THE COUNTRIES AND PEOPLES  
OF THE NEAR AND MIDDLE EAST

IV

IRAN

Publishing house of the Academy  
of sciences of the Armenian SSR  
Erevan, 1969



ԻՐԱՆՈՒՄ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ 1905—1914 ԹԹ.

Այ դարի սկզբին գլխավոր իմպերիալիստական պետությունները տենդորեն սկսեցին նախապատրաստվել վճռական պայքարի՝ աշխարհը վերաբաժանելու և ազգեցություն նոր դոտիններ ձեռք բերելու համար: Այդ պայքարին մեծագույն եռանդով և հետևողականությամբ սկսեց նախապատրաստվել նաև իմպերիալիստական հիմանիան, որը XIX դարի վերջերից իր ռազմական և տնտեսական հզորության տեսակետից աշխարհում արդեն զրավում էր առաջատար տեղերից մեկը:

1894 թվականից գաղութային զավթումները դառնում են Գերմանիայի արտաքին քաղաքականության գլխավոր նպատակը: Այդ ժամանակաշրջանից սկսած գերմանական իմպերիալիզմը սկսեց մշակել և գործնականում իրագործել արևելքի նկատմամբ ակտիվ քաղաքականություն, որը դարձավ վիլհելմյան Գերմանիայի քաղաքական հավատամքը «օրիենտալիտիկ» անունով:

Գերմանական իմպերիալիզմը մեծ ակտիվություն էր դրսևորում Մերձավոր և Միջին արևելք ներթափանցելու և այդ շրջանում տնտեսական ու քաղաքական գերակշռություն ձեռք բերելու ուղղությամբ: Բնականաբար իրանը չէր կարող դուրս մնալ Գերմանիայի հետաքրքրությունների շրջանակից: Նրա առաջին ակտիվ փորձերը իրան ներթափանցելու ուղղությամբ վերաբերում են անցյալ դարի 70-ական թթ.: 1873 թ. Գերմանիային հաջողվեց իրանի հետ կնքել «բարեկամության, առևտրի և ծովագնացության մասին» պայմանագիր, որը սկիզբ դրեց այդ երկու երկրների միջև անմիջական հարաբերությունների հաստատմանը: «Պայմանագիրը Գերմանիային տրամադրում էր դիվանագիտական և առևտրական հարաբերություններում առավելագույն բարենպաստ պայմաններ: Ըստ պայմանագրի Գերմանիան ստանում էր ազատ առևտրի և նավագնա-

ցության իրավունք, կապիտուլյացիոն արտոնութիւններ, ինչպես նաև Բեհհրանում, Քավրիզում և Բուշիրում հյուպատոսութիւններ քաց անելու թույլտւութիւն: Պայմանագրի 13-րդ հոդվածը նախատեսում էր Գերմանիայի միջնորդութիւնը այն դեպքում՝ եթե Իրանը վեճի կամ ընդհարման մեջ մտնելու որևէից երրորդ պետութիւն հետ<sup>1</sup>:

Կնքելով հիշյալ պայմանագիրը, Գերմանիան ձգտում էր ամրապնդվել Իրանում և հող նախապատրաստել իր հետագա առաջխաղացման համար դեպի Միջագետք և Միջերկրական ծովի ավազանը:

Մինչև XIX դարի վերջը Իրանի նկատմամբ գերմանական քաղաքականութիւնը մեջ առանձին ակտիվութիւն չի նկատվում: Գերմանիան այդ ժամանակամիջոցում ղլխավորապես տարված էր Օսմանյան կայսրութիւնում ամրապնդվելու խնդրով: Միայն XX դարի սկզբին գերմանական կառավարող շրջանները իրենց ուշադրութիւնը կրկին բեռնեցին Իրանի վրա: 1902 թ. հունվարին Բեռլինում ցարական կառավարութիւնը դեսպան Օստեն-Սակենը արտաքին գործերի մինիստր Լամզգորֆին գրած նամակում հայտնում էր, որ կանցլեր Բերհնարդ Ֆոն Բյուլովը Ռայխստագում արտասանած իր ճառում խոսելով Գերմանիայի համար առևտրական շուկաների ավելացման անհրաժեշտութիւնը մասին, որպես գերմանական ապրանքների նոր ու ցանկալի շուկայի, ի թիվս այլ երկրների, նշել էր նաև Իրանը<sup>2</sup>:

Կանցլերի նման հայտարարութիւնը չէր կարող աննկատ անցնել, Գերմանական կառավարական շրջաններին մոտ կանգնած ամսագրերից մեկը՝ «Der Tag»-ը անմիջապես հրատարակում է մի հոդված «Գերմանական համաշխարհային քաղաքականութիւնը նրա պատկանելիքը» խորագրով, որի մեջ զարգացվում էր Իրանը գերմանական տնտեսական ազդեցութիւնը ենթարկելու անհրաժեշտութիւնը գաղափարը<sup>3</sup>:

Հասկանալի է, որ Գերմանիայում այդ ժամանակ դեռ չէր կարող մշակված լինել Իրանի նկատմամբ տնտեսական քաղաքակա-

<sup>1</sup> Motamen-ol-molk, Recueil des traités de l'Empire persan avec les pays étranger, Teheran, 1908, p. 1—13, տես նաև Г. В. Шитов, Персия под властью последних каджаров, Л., 1933, стр. 37.

<sup>2</sup> АВПР, ф. «Канцелярия МИД», 1902. д. 14, л. 6.

<sup>3</sup> Նույն տեղում:

նության կոնկրետ ծրագիր, սակայն կարելի էր այնուամենայնիվ, կանխատեսել, թե իրանական շուկա Գերմանիայի տնտեսական ներխուժման ինչպիսի հնարավոր ուղիներ կարող են լինել: Օստեն-Սակենր, օրինակ, իր 1902 թ. գրած հաղորդագրության մեջ նշում էր այն գլխավոր ուղիները, որոնցով գերմանական առևտրական քաղաքականությունը ձգտում էր թափանցել Իրան: Դա Հյուսիսային Իրանն էր, հատկապես՝ Տրապիզոն, էրզրում, Բայազեդ ուղին և Պարսից ծոցը, որտեղ դերմանացիները, նրա հայտարարությամբ, ցանկանում են իրենց ձեռքը վերցնել ծովային առևտրի մի մասը:

Իրանում գերմանական քաղաքականության հետագա ակտիվացումը մեծապես նպաստեց Բաղդադի երկաթուղու նախագծի իրականացումը: 1903 թ. կնքվեց գերմանո-թուրքական վերջնական կունվենցիան Բաղդադի երկաթուղու վերաբերյալ: Գերմանական կապիտալը իր ձեռքն էր վերցնում Կոնիա — Ադանա — Մոսուլ — Բաղդադ — Բասրա ամբողջ դժի շինարարությունը: Պանդերմանական գաղափարախոսները ցնծությամբ հայտարարում էին, թե «Բաղդադի երկաթուղին մեզ համար ձանապարհ կբացի դեպի Իրան և Աֆղանստան: Նա կլինի Բրիտանական Հնդկաստանի վրա կախված մի մերկացված սուր»<sup>2</sup>:

Գերմանական իմպերիալիզմի արևելյան քաղաքականության սկստվածացումը հանգեցրեց նրան, որ Մերձավոր ու Միջին արևելքում իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականության մեջ սկսվեց միանգամայն նոր շրջան: Սրվեցին հակասությունները Ռուսաստանի և Գերմանիայի, Անգլիայի և Ռուսաստանի, Գերմանիայի և Անգլիայի միջև: Այս երեք պետություններից յուրաքանչյուրը փորձում էր ամրապնդել իր սեփական դիրքերը և միաժամանակ խորացնել հակասությունները մյուս երկու պետությունների միջև: Գերմանական դիվանագիտությունը իր հաշիվները կառուցում էր հիմնականում երկու մրցակից պետությունների՝ Անգլիայի և Ռուսաստանի հակասությունների վրա, միաժամանակ աշխատելով նրանցից յուրաքանչյուրին հավատացնել, որ ինքը նրա բնական դաշնակիցն ու բարեկամն է: Օգտագործելով նշված տակտիկան, գերմանական իմպերիալիզմը միաժամանակ աշխատում էր ուժեղացնել անգլո-ռուսական փոխադարձ բախումները Մերձավոր

<sup>1</sup> Նույն տեղում, լս. 77, 78.

<sup>2</sup> Бондаревский Г. Л., Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток, (1888—1903), Ташкент, 1955, стр. 46.



և Միջին արևելքում, որը հնարավորություն կար նրան հաղթահարել այդ երկու պետությունների դիմադրությունը Բաղդադի երկաթուղու նախագծի իրականացման հարցում: «Երբ բրիտանացիներն ու ռուսները կսկսեն կրծոտել միմյանց,— գրում էր Վիլհելմ 11,— այնժամ մենք կկարողանանք Բաղդադի ձևնապարհը դնել մեր գրպանը»<sup>1</sup>:

Մինչև 1904—1905 թթ. Գերմանիան թեև տարեցտարի ուժեղացնում էր իր ազդեցությունը Իրանում, սակայն նրա գործունեությունը ծավալվում էր գլխավորապես տնտեսական բնագավառում: Գերմանիային հաջողվեց իրանական մի շարք քաղաքներում հիմնել առևտրական ֆիրմաներ: Մասնավորապես Համբուրգի առևտրական ընկերությունները կանոնավոր առևտրական կապեր հաստատեցին Բուշիրի, Լենգեյի, Մոհամմարայի, Բասրայի և Բահրեյն կղզու հետ<sup>2</sup>:

Սակայն գերմանական կապիտալը տենչում էր Իրանում ծավալել առավել լայն գործունեություն: Նա ցանկանում էր իր բաժինն ունենալ Իրանի բնական հարստությունների շահագործման մեջ: Այդ նպատակով նա ժամանակ առ ժամանակ շոշափում էր իրանական կառավարող շրջանների տրամադրությունը, բայց և միշտ հանդիպում էր անգլո-ռուսական դիմադրությանը, որը հաղթահարելու նպատակով Գերմանիան առաջ քաշեց մի լողունդ. «Իրանը անկախ երկիր է, և որպես այդպիսին պետք է բաց լինի բոլորի համար»<sup>3</sup>: Սակայն տնտեսական տեսակետից բոլոր ազգերի «ազատության և հավասարության» գերմանական այդ քաղաքականությունը ևս չըտվեց ցանկալի արդյունքներ, որովհետև Գերմանիայի ամրապնդվելը Իրանում Անգլիայի և Ռուսաստանի կողմից դիմավում էր որպես իրենց շահերին անմիջական սպառնալիք ոչ միայն այդ երկրում, այլև ամբողջ Մերձավոր ու Միջին արևելքում:

Վերոհիշյալ պետությունների սահմանափակումներն Իրանում հաղթահարելու համար, ռուս-ճապոնական պատերազմի տարիներին Գերմանիան նոր գրոհ նախաձեռնեց: Սակայն նրա համար առավել բարենպաստ իրադրություն ստեղծվեց պատերազմի ավարտից հետո: Երբ որոշվեց ռուս-ճապոնական պատերազմի բախտը և

<sup>1</sup> „Die Grosse Politik der Europaischen Kabinette. 1871—1914“. Sammlung der Diplomatischen Akten des Aus-Wärtigen Amtes (GP), bd. 17, № 5213, s. 375.

<sup>2</sup> ЦГИА, ф. 560, д. 359, л. 107—108.

<sup>3</sup> А. Ф у к с. Германская политика в Персии, «Новый Восток», № 12 20—21, 1928, стр. 112



Ուսուստանը դգաց, որ ինքը դուրս է քշվում Հեռավոր արևելքից, և թիւ ոչ առհասարակ, դոնե անորոշ ժամանակով, Պետերբուրգում նորից աշխուժացավ դեպի Մերձավոր ու Միջին արևելք շարժվելու ավանդական քաղաքականութունը: Պետք էր շտապել Մերձավոր և Ուիջին արևելք, որովհետև Գերմանիան և Անգլիան աշխատում էին կանխել իրեն ինչպես Իրանում, այնպես էլ Թուրքիայում<sup>1</sup>: Պատերազմից հետո դեպի Հնդկաստանի սահմանները Ռուսաստանի շարժման հնարավորության հարցը դարձավ Անգլիայի ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական շրջանների հատուկ ուսումնասիրության առարկան: Անգլիայի անհանդսառութունը ավելի էր ուժեղանում դերմանական տարրեր հեղինակների և պաշտոնական ու կիսապաշտոնական մամուլի հողվածների հետևանքով, որտեղ տեսական դատողութուններ էին արվում ռուս-ճապոնական պատերազմից հետո ռուսական քաղաքականության հնարավոր տրամաբանական ընթացքի մասին: Այդ հողվածներն ուղղակի կրակի վրայուղ էին ավելացնում: Այսպես, գերմանական «Asien» հատուկ ամսագրում հայտնվում էր այն տեսակետը, որ Ռուսաստանը պետք է սեանշի գիմի Միջին Ասիայում: Բացի դրանից, գերմանացիների կարծիքով, Ռուսաստանին ոչինչ չէր մնում, քան ելք փնտրել դեպի ծով՝ Պարսից ծոցի ուղղությամբ: Գերմանիան գտնում էր, որ Անգլիայի և Ռուսաստանի միջև ռազմական բախումը եթե ոչ հիմա, ապա համենայն դեպս մոտիկ ապագայում անխուսափելի է և միաժամանակ շեշտում էր Անգլիայի դերը ռուս-ճապոնական պատերազմում<sup>2</sup>:

Նման դատողութունները վերջնականապես անհանգստացրին անգլիացիներին և ռազմական «Army and Navy» ամսագիրը հրատարակեց մի մարտական հողված այն մասին, որ Հնդկաստանը ձեռք է բերված սրով և պետք է պահպանվի նույնպես սրով<sup>3</sup>:

Ռուս-անգլիական բախումը հասունացնելու քաղաքական գծի պրակտիկ իրականացման նպատակով, գերմանական կառավարող շրջաններն առաջ էին քաշում կոնկրետ նախագծեր, որոնց ղգալի մասը ավելի շուտ հետապնդում էին Անգլիային սպառնալու նպատակներ, քան կարող էին գործնականում իրագործվել: Այս տեսակետից չափազանց հատկանշական է 1905 թ. հրապարակված գեր-

<sup>1</sup> Ենրկրի ձայնը» (շաբաթաթերթ, Բ. տարի, № 30, 1907 թ. հոկտ. 23):

<sup>2</sup> К. Смирнов, Оборона Индии «Известия штаба Кавказского военного округа». №№ 13—14, Тифлис, 1906, стр. 41—42.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 42:

մանական գիտնական էմիլ Վեխտերի նախագիծը Կասպից ծովի և Պարսից ծոցի միջև ջրանցքների մի ամբողջ սիստեմ կառուցելու վերաբերյալ<sup>1</sup>։

Այս նախագծի հիմնական նպատակն էր Իրանում և Միջագետքում բրիտանական քաղաքականության հաջողություններին հակադրի ստեղծելը և Եվրոպայի ցամաքային պետություններին՝ Ֆրանսիայի, Ավստրիայի, Գերմանիայի և Ռուսաստանի միջև շահերի միասնություն հաստատելը ընդգեմ Անգլիայի։

Մանրամասն վերլուծության ենթարկելով անգլիական ինժեներ Վիլկոկսի նախագիծը Եփրատի ու Տիգրիսի միջև նավարկելի ջրանցք կառուցելու, ինչպես նաև Զմյուռնիայից Փոքր Ասիայի վրայով դեպի Միջին Ասիա երկաթուղային ճանապարհ կառուցելու անգլիական պլանները, էմիլ Վեխտերը Գերմանիայի կառավարող շրջանների անունից հայտարարում էր, որ այդ նախագծերի իրականացումով կստեղծվի մի նոր անգլիական առևտրական ուղի, որը կոչված է մրցակցել Բաղդադի երկաթուղու հետ։ Սակայն ցույց տալու համար, որ նախագծվող երկաթուղին սպառնում է ոչ միայն Գերմանիայի, այլև Եվրոպայի ցամաքային պետությունների շահերին, այն առումով, որ նրանք ընդամիշտ կղրկվեն Բաղդադի ու Բանդար-Աբբասի ճանապարհով Հնդկաստանի, Զոնդյան կղզիների ու Հեռավոր արևելքի հետ առևտուր անելու հնարավորությունից, գերմանական գիտնական-քաղաքադետը կոչ էր անում ցամաքային պետություններին՝ միավորվել Անգլիայի դեմ։ Ընդ որում հենց ինքն էլ կատարում էր վերոհիշյալ պետությունների միջև պարտականությունների բաժանում։ Ֆրանսիային առաջարկում էր շարժվել դեպի Հալեպ ու Քասրա։ Գերմանիայի առջև խնդիր էր դնում ավարտել Կ. Պոլիս—Բանդար-Աբբաս երկաթուղին, գրավել Բանդար-Աբբասը և իր ձեռքը վերցնել Պարսից ծոց դուրս գալու բանալին։ Ռուսաստանին առաջարկում էր ջրանցք կառուցել էնզելիի և Բաղդադի միջև, եթե նա ցանկանում է, որպեսզի իրեն թույլ տան իր ռազմական նավատորմը հանել Հնդկական օվկիանոս։

«Գերմանիայի կողմից առաջնորդվող (ընդգծումը մերն է —Վ. Բ.) մայր ցամաքի մեծ պետությունները, — ասվում էր գերմանական այդ առաջարկությունում, — դեռևս կարող են հարված հասցը-

<sup>1</sup> Տե՛ս «Известия штаба Кавказского военного округа», № 22, 1-я треть, Тифлис, 1908. стр. 19—33.

նել Բրիտանական համաշխարհային կայսրության անկյուններից մեկին առավել շուտ, քան այդ շենքի կառուցումը կհասնի իր ավարտին: Իհարկե դա վտանգավոր է... սակայն այժմ կամ երբեք»<sup>1</sup>:

Գերմանական այս սլաններում պարզորոշ երևում է Անգլիային Միջադեպից ու Պարսից ծոցի ավազանից դուրս մղելու և այդ «ավտոյաց երկրում» իր «Ծգիպտոսը» ստեղծելու գերմանական այն հանրահայտ ծրագիրը, սրի մասին եվրոպական մամուլը ժամանակին մեծ աղմուկ էր բարձրացրել<sup>2</sup>:

XX դարի առաջին տասնամյակի անդր-դերմանական հարարությունների հարցը հետևյալ ցինիկ գնահատականն է ստացել կանցլեր Բերնհարդ Ֆոն Բյուլովի կողմից. «Մենք պահանջ չենք ներկայացնում անգլիական տիրապետությունների նկատմամբ, միայն ցանկանում ենք, որ մեզ հանգիստ թողնեն և որպեսզի Անգլիան, եթե նա ուզում է ուտել ուրիշի պնակից, որը պատկանում է թույլ սլետություն, մեզ ևս թողնի միասին ուտելու: Համաձայնությունը այս իմաստով մեղ համար կարող է լինել միայն ցանկալի»<sup>3</sup>:

Գերմանական այս երկդիմի քաղաքականությունը առավել յայտուն դրսևորվում էր իրանում: 1905 թ. վերջերից, օգտվելով իր համար ստեղծված բարենպաստ իրադրությունից, Գերմանիան ըսկըսեց մեծ ակտիվություն ցուցաբերել իրանական կառավարությունից կոնցեսիաներ ստանալու ուղղությամբ:

1905 թ. ցարական կառավարությունը մերժեց շահի խնդրանքը փոխառություն տրամադրելու վերաբերյալ, իսկ Անգլիան նույնպես ընդառաջ չգնաց այդ խնդրանքին: Շահը ստիպված էր դիմել Գերմանիային, որպեսզի ինչ-որ ձևով ևլք գտնի վերահաս ֆինանսական կրախից և երկրում սկսված հեղափոխությունից փրկվելու համար: Գերմանական կառավարությունը, իհարկե, անմիջապես օգտըվեց առիթից և 1905 թ. վերջին, 1906 թ, սկզբին Թեհրանում գերմանական գործերի հավատարմատար կոմս Ռեքսի և իրանական կառավարության միջև սկսվեցին համապատասխան բանակցություններ, որոնց արդյունքի մասին իր 1906 թ. մայիսի 31-ի թվակիր հեռագրում Փարիզից նեկլյուզովը հաղորդում էր, որ Գերմա-

1 «Известия штаба...», № 22, стр. 30—33.

2 Տե՛ս Ալեքսանդր Յուլև, Գերմանական համաշխարհային քաղաքականությունը և մահմեդական աշխարհը («Մուրճ», № 7, 1905 թ. հուլիս, նոր շերտան, 5-րդ տարի):

3 Беригард Бюлов, Воспоминания, М—Л., 1935, стр. 10.



նիան շահի համար հաջողեցրեց 25 միլիոն մարկի փոխառութիւն<sup>1</sup>։ Նույն հեռագրում հայտնվում էր նաև փոխառութիւնի պայմանների մասին։ Շահական կառավարութիւնը, որպես «փոխհատուցում» պարտավորվում էր բավարարել Գերմանիայի հետևյալ պահանջները. գերմանական «Համբուրգ-Ամերիկա» նավային ընկերութիւնը Համբուրգ — Պարսից ծոց գծի համար իրանական տերիտորիայում տրամադրել նավահանգիստ կամ քարածխային պահեստ. Գերմանիան ստանում էր նաև Բաղդադից մինչև իրանական տերիտորիան կառուցվող խճուղային ճանապարհը մինչև Քերմանշահ կամ Համադան շարունակելու իրավունք։

Սակայն Գերմանիայի այս պահանջները միանգամից հարվածում էին և Ռուսաստանի և Անգլիայի շահերին։ Առավել ևս, որ վերջիններս չէին կարող անտարբերութեամբ նայել գերմանական հետու գնացող այդ նախաձեռնութիւններին։ Այդ պատճառով Անգլիան և Ռուսաստանը ձախողեցին այդ գործարքը։

Սակայն գերմանական կապիտալը չէր վհատվում իրանում խոշոր կոնցեսիաներ ստանալու և մասնավորապես իրանական ֆինանսների վրա իր հսկողութիւնը սահմանելու լայնահուն սլաններին։ Դեռևս 1905 թ. Մողաֆֆեր-էդ-Դին շահը սկզբունքային համաձայնութիւն տվեց Թեհրանում գերմանական բանկ հիմնելու վերաբերյալ։ Սակայն միայն 1906 թ. կեսերին իրանում գերմանական գործերի հավատարմատար բարոն Ռիխտոֆենը առաջին քայլերը ձեռնարկեց այդ ուղղութեամբ։ 1906 թ. հուլիսի 1-ին իրանական կառավարութիւնը խոստանալով փոխառութիւն, նրան հաջողվեց արտաքին գործերի մինիստր Նասրոլլա խան Մոշիր-էդ Դոլեի հետ կնքել գաղտնի համաձայնագիր Թեհրանում գերմանական բանկ հիմնելու վերաբերյալ<sup>2</sup>։

Սակայն այս անգամ ևս Գերմանիային չհաջողվեց հասնել իր նպատակին։ Դրա հիմնական պատճառը այն էր, որ այդ շրջանում մեջլիսը գեռ չէր հուսահատվել սեփական ջանքերով իրանում ազգային բանկ ստեղծելու մտադրութիւնից և այդ պատճառով թշնամաբար էր վերաբերվում դեպի ամեն տեսակի օտարերկրյա փոխառութիւնները<sup>3</sup>։

1 А. Попов, Царская Россия и Персия в эпоху русско-японской войны, «Красный архив», № 53, 1932, стр. 31.

2 ЦГИА, ф. 600, д. 345, л. 14—15.

3 Ա. Ֆոկս, նշվ. աշխ., էջ 116։



Այս խառնուրդը հաղթահարելու նպատակով գերմանական դիվանագիտությունը ուժեղացրեց մեջլիսի պատգամավորների շըրջանում դերմանոֆիլ կուսակցություն ստեղծելու աշխատանքները: Այդ քաղաքականությունը որոշակի հաջողություն ունեցավ: Ստեղծվեց դերմանոֆիլ ուժեղ կուսակցություն, որին հարեցին բարձր պետական պաշտոններ զբաղեցնող այնպիսի ազդեցիկ քաղաքական դեմքեր, ինչպես կաջարական արքայազն Զել էս-Սուլթանը, Սալար Էդ-Նուրին, առաջին մեջլիսի նախագահներ Սանի էդ-Պուլին և էհթեշամ-էս-Սալթանեն, լուսավորության մինիստր Մոխրբեր-էս-Սալթանեն, Ալա-էլ-Մուլքը, ներքին գործերի մինիստրի տեղակալ Մոհթեշամ-էս-Սալթանեն, արդարադատության մինիստր Մոայեդ-էս-Սալթանեն և շատ ուրիշներ<sup>1</sup>, որոնք կողմնորոշվում էին դեպի Գերմանիան և Անգլիայի ու Ռուսաստանի դեմ սյաջբարում ցանկանում էին լայնորեն օգտագործել Գերմանիային:

Դեռևս 1906 թ. վերջերին ղգալով սնզլո-ռուսական մերձեցման բացահայտ տենդենցները, գերմանական դիվանագիտությունը տենդագին գործունեություն ծավալեց Իրանում, աշխատելով ստեղծել կայուն բազա այդ երկրի գործերին ակտիվ միջամտություն ցույց տալու համար այն սահմաններում, երբ հարց բարձրացվի Իրանի վերաբերյալ Անգլիայի և Ռուսաստանի միջև համաձայնության մասին:

Բանդար-Բուշիրում, որտեղ գերմանացիներն արդեն ունեին հյուպատոսություն, պահանջվեց նաև առևտրական ֆակտորիա բաց անելու իրավունք: Երկրում սկսեցին համառ լուրեր շրջել այն մասին, թե հնարավոր է՝ որ բելգիական մաքսային աստիճանավորները փոխարինվեն գերմանական խորհրդականներով: Շատերը հակված էին նույնիսկ կանխատեսելու, որ գերմանական ազդեցությունը շատ շուտով կսկսի թափանցել նաև Իրանի ռազմական շրջանները: Նույնիսկ խոսում էին այն մասին, որ բանակի վերակազմավորման հանձնաժողովի մեջ գործունե մասնակցություն են ունենալու գերմանական սպաները<sup>2</sup>:

1907 թ. Գերմանիան Իրանում նոր, առավել ուժեղ հարձակում նախաձեռնեց անդլո-ռուսական դիրքերի դեմ: Այդ գործում բացառիկ հուանդ էր դրսևորում ինքը՝ կայզերը, որը Օստեն-Սակենի բնորոշմամբ «նման գործերում հակված էր գերմանական ազդեցիկ

<sup>1</sup> М. С. Ива н о в, Иранская революция 1905—1911 гг., М., 1957, стр. 210. տե՛ս նաև АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 913, л. 2106.

<sup>2</sup> «Известия штаба...», № 22, стр. 1.

Ֆինանսական և արդյունաբերական գործիչների կողմը<sup>1</sup>: Մանթանալով Իրանում գերմանական դեսպանորդ Շտեմրիխի զեկուցագրի հետ Թեհրանում գերմանական բանկ բաց անելու անհրաժեշտության մասին<sup>2</sup>, կայզերը ոգևորվեց այդ գաղափարով և կարգադրեց առանց հապաղելու զբաղվել հիշյալ գործով:

1907 թ. ապրիլին Թեհրան ժամանեց գերմանական խոշոր ֆինանսիստ, «Գերմանական արևելյան բանկի» դիրեկտոր Հերբերտ Գուտմանը: Վերջինս հենվելով 1906 թ. հուլիսի 1-ի գերմանո-իրանական գաղտնի կոնվենցիայի վրա, իր բանկի անունից դիմեց շահին՝ խնդրելով տալ իրեն Թեհրանում գերմանական բանկ բաց անելու թույլտվություն: Իր ներկայացրած նախագծում Գուտմանը պահանջում էր գերմանական բանկին իրավունք տալ 60 տարի ժամկետով Իրանում կատարել բանկային օպերացիաներ, նահանգական քաղաքներում բաց անել բանկի բաժանմունքներ: Բանկը իրավունք էր ստանալու Թեհրանում և Թավրիզում ձեռք բերել հողամասեր, Լորանի տարբեր քաղաքներում հիմնել առևտրական, արդյունաբերական ձեռնարկություններ և ֆինանսական հիմնարկություններ: Գերմանացիները պահանջում էին բանկն ու նրա բաժանմունքներն ազատել ամեն տեսակի հարկերից ու տուրքերից, իրենց կողմից ներմուծված ապրանքների համար չգանձել մաքսատուրքեր, բանկին իրավունք տալ կատարել իրանական գանձարանի բոլոր տեսակի վճարումները արտասահմանում, կտրել իրանական արծաթյա դրամ, բանկին տալ ամբողջ Իրանում հանքային հանածոների հետախուզման մենաշնորհային իրավունք: Գուտմանը պահանջում էր նաև հատուկ հողային բանկեր կազմակերպելու, ոռոգման աշխատանքներ կատարելու, ջրային ուժերի շահագործման, ոռոգման և ջրմուղի սխտեմներ կառուցելու կոնցեսիաներ: Գերմանական առաջարկություններում նախատեսվում էր նաև Պարսից ծոցում բաց անել առևտրական դեպո (Բանդար — Բուշիրում) և միաժամանակ կանոնավոր հաղորդակցութայն Պարսից ծոցի նավահանգիստները կապել գերմանական ջրերի հետ: Այնուհետև գերմանացիները ձգտում էին երկաթուղային ճանապարհով Թեհրանը կապել իրանա-թուրքական սահմանի հետ իբր թե հեշտացնելու համար ուխտագնացությունը դեպի շիթնների սրբազան քաղաքներ՝ Քարբալա և Նաջաֆ, սակայն իրականում հետապնդելով տնտեսական.

<sup>1</sup> АВПР, ф. «Канцелярия МИД», д. 17, л. 251 об.

<sup>2</sup> Նույն տեղում:

րադաքական և ռադմագիտական նպատակներ: Ընդ որում ըստ նախնական նախագծերի այդ ճանապարհը անցնելու էր Քերմանշահի և նավթաբեր շրջանի վրայով դեպի Բաղդադի երկաթուղու հետ միացման կետը: Մի այլ գծով Գերմանիան մտադիր էր Թեհրանը կապել Պարսից ծոցի հետ<sup>1</sup>:

Գերմանական այս պլանները լուրջ անհանգստութուն պատճառեցին Անգլիային և Ռուսաստանին: Անգլիական թերթերը անմիջապես աղմուկ բարձրացրին, որ գերմանական բանկը մտադիր է վարկավորել աղզային շարժումը Իրանում<sup>2</sup>: Ռուսաստանը ևս փնտրեցին հանգստեան հանգուցը, հայտարարելով, որ գերմանական նախագծի հաստատման դեպքում ինքը կպահանջի համապատասխան փոխհատուցում ռուսական բանկի համար<sup>3</sup>: Դեռևս մինչև Գուտմանի Թեհրան մեկնելը, նրա միսիայի կապակցութեամբ Օստին-Սակենը Բեռլինում ղրույց է ունենում նախկին արտաքին գործերի մինիստր կոմս Ֆոն Չիրսկու հետ, որտեղ նա հայտարարում է, որ «Ռուսաստանի և Գերմանիայի առևտրական շահերը մինչև այժմ ոչ մի տեղ չեն բախվել: Չի կարելի վիճարկել մեր կենսական շահերը Պարսկաստանում, որոնք սլայմտնավորված են մեր աշխարհագրական դիրքով: Հետևաբար ցանկալի էր, որ Գերմանիան իր արտադրանքների վաճառքի համար փնտրեր այլ շուկաներ»: Դրան Ֆոն Չիրսկին պատասխանում է, որ Իրանը անկախ երկիր է, և այդ պատճառով չի կարելի արգելակել մյուս պետությունների մուտքը իրանական շուկաները<sup>4</sup>:

Ի վերջո անգլո-ռուսական ձևման տակ շահական կառավարութունը ստիպված էր մերժել Գուտմանի առաջարկը: Բայց և նա չէր կարող հաշվի չնստել Իրանի քաղաքական շրջանների վրա Գերմանիայի ունեցած ազդեցության հետ: Այդ իսկ պատճառով գերմանական կառավարութեանը ինչ-որ չափով գոհացնելու նպատակով շահը թույլատրեց տալ մի փոքրիկ բանկային կոնցեսիա<sup>5</sup>,

1 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 913, лл. 230—232, ЦГИА, ф. 560, д. 359, л. 15—17, 59, 62—64, 67—69, 77—79, 94—95, տե՛ս նաև «Известия штаба Кавказского военного округа», 1907, № 19, 1-я треть, стр. 57.

2 К. Смирнов, Немечкая школа в Тегеране, «Известия штаба Кавказского военного округа», № 22, стр. 1.

3 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 913, л. 229.

4 АВПР, ф. «Канцелярия МИД», 1907, д. 17, л. 251 об.

5 «Գերմանական արևելյան բանկի» և իրանական կառավարության միջև կնքված համաձայնագրի տեքստը տե՛ս АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 913, л. 230—232.



որի մասին Գարտվիզը տեղեկացնում էր արտաքին գործերի մի-  
նիստրութեանը (Գարտվիզի 1907 թ. հուլիսի 25-ի № 333 հեռագի-  
րը). «Երեկ ստորագրվեց գերմանական բանկի վերաբերյալ պայ-  
մանագիր գուտ առևտրական հիմքի վրա, առանց որևիցե կոնցե-  
սիոն արտոնությունների: Պայմանագրի ժամկետն է 45 տարի: Հիմ-  
նական կապիտալն է մեկ միլիոն թուման: Բանկի վրա սահմանվում  
է շահական կառավարության հսկողությունը»<sup>1</sup>:

Այսպիսով իրանական ֆինանսների վրա հսկողություն սահ-  
մանելու և Իրանը տնտեսապես իրեն ենթարկելու գերմանական այս  
փորձը ես ավարտվեց լրիվ անհաջողությունով:

1907 թ. գարնանից Գերմանիան լայն հարձակում ծավալեց  
Անգլիայի դիրքերի դեմ Պարսից ծոցի շրջանում: Գերմանական կա-  
ռավարող շրջանները պահանջում էին «իրավահավասար» վիճակ  
Պարսից ծոցի շրջրում, հակառակ դեպքում սպառնալով դենքի գի-  
մել իրենց «իրավունքները» պաշտպանելու համար:

Օգտագործելով Թուրքիայի վրա ունեցած իր մեծ ազդեցություն-  
ներ, գերմանական կառավարությանը հաջողվեց ստանալ Պարսից  
ծոցում Թուրքիային նոմինալ ձևով պատկանող Ֆարուրի կղզում  
ծովային կայան կառուցելու իրավունք: Կայզերի հրամանով գեր-  
մանական նավատորմը տեղորոհն նախապատրաստվում էր ռադ-  
մական ցուլցի Պարսից ծոցի թուրքական շրջրում: Անգլիան, բնա-  
կանաբար, չէր վարող անտարբերություն մնալ գերմանական այս  
ոտնձգություններին իր տիրապետությունների «սրբազան վայրե-  
րում, և արտաքին գործերի մինիստր Գրեյը ի լուր ամբողջ աշխարհի  
կրկին հաստատեց մարկիզ Լանդստուունի այն հայտնի դեկլարա-  
ցիան, որ որևիցե մեկի կողմից Պարսից ծոցում հիմնավորվելու  
փորձը Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից կդիտվի որպես  
«կազուս բելլի»: Այդ հայտարարությանը հետևեց բրիտանական  
ռազմա-ծովային նավատորմի նոր միավորների ժամանումը Պար-  
սից ծոց: Եվ Գերմանիան ստիպված էր զիջել:

Ռուս-ճապոնական պատերազմից հետո ստեղծված միջազգա-  
յին նոր իրադրությունը և հատկապես գերմանական քաղաքակա-  
նության ակտիվացումը ստիպեց Անգլիային բանակցությունների  
մեջ մտնել Ռուսաստանի հետ անգլո-ռուսական համաձայնագիր  
կնքելու վերաբերյալ: Այդ նպատակով 1906 թ. մայիսին Պետեր-  
բուրգ ժամանեց անգլիական դեսպան Ա. Նիկոլսոնը, որից հետո

<sup>1</sup> Ա. Ֆ ու կ ս, նշվ. աշխ., էջ 118:



ոկսվեցին անգլո-ռուսական բանակցութիւնները<sup>1</sup>: Բանակցութիւններ սկսելով Անգլիայի հետ, ցարական կառավարութիւնը միաժամանակ գտնում էր, որ անհրաժեշտ է շարել հարաբերութիւնները Գերմանիայի հետ: Այդ քաղաքական գիծը իրագործելու նպատակով 1906 թ. հոկտեմբերին Իվլովսկին մեկնեց Բեռլին: Այստեղ ռուսական արտաքին գործերի մինիստրը աշխատում էր համոզել Բլուլովին, որ Անգլիայի հետ բանակցութիւնները բնավ ուղղված չեն Գերմանիայի դեմ և առհասարակ չեն շոշափում ընդհանուր քաղաքականութեան հարցերը: Միաժամանակ Իվլովսկին Բեռլինում ցանկանում էր ձեռք բերել մի այնպիսի համաձայնութիւն, որն ապահովեր ռուսական շահերն Իրանում՝ գերմանական ոտնձգութիւններին<sup>2</sup>:

Այդ նոյասուկով նա առաջարկեց կնքել ռուս գերմանական համաձայնագիր Բաղդադի երկաթուղու և Իրանի վերաբերյալ: Իերմանական կողմը տվեց իր համաձայնութիւնը<sup>3</sup>: 1907 թ. փետրուարի 20-ին հակառակ անգլիացիների ցանկութեան Իվլովսկին Պետերբուրգում գերմանական դեսպանին հանձնեց ռուս-գերմանական համաձայնագրի նախագիծը: Ռուսաստանը Գերմանիայից պահանջում էր իրանական սահմանի մոտ և Իրանի տերիտորիայում չկառուցել Բաղդադի երկաթուղու ձյուղավորումներ, պաշտոնապես հայտարարել, որ Գերմանիան Իրանում չունի քաղաքական շահեր և ճանաչել ռուսական այդպիսի շահերի առկայութիւնը Հյուսիսային Իրանում: Ռուսաստանը Գերմանիայից պահանջում էր նաև Իրանի այդ մասում փորձեր չկատարել կոնցեսիաներ ստանալու ուղղութեամբ: Փոխարենը նա խոստանում էր արգելքներ չհարուցել Բաղդադի երկաթուղու շինարարութեան գործում<sup>4</sup>:

Գերմանիան սակայն այս նախագիծի որոշ «ուղղումների» ստորվակի տակ ըստ էութեան ներկայացրեց սեփական նախագիծ, որտեղ ոչ միայն չէր հրաժարվում Իրանում երկաթուղիներ կառուցելու իր պլաններից, այլև կոնկրետ առաջարկներ էր անում Թեհրանից մինչև Բաղդադի մագիստրալը երկաթուղային գիծ կառուցելու վերաբերյալ<sup>5</sup>:

Ցարական կառավարութիւնը մերժեց այդ առաջարկը: Անգլո-ռուսական բանակցութիւնների հաջող ընթացքը, սակայն, ստիպեց


1 «История дипломатия», т II, М., 1963, стр. 608.

2 նույն տեղում, էջ 614:

3 „Die Grosse Politik“, Bd. XXV, т. I, № 8649, ss. 231—234.

4 ibid, № 8580, s. 123—124.

5 ibid, № 8588, s. 137—141.



գերմանական կառավարութեանը իր շահերի տեսակետից միանգամայն զգաստորեն գնահատել անգլո-ռուսական Անտանտի ըստեղծման ապագա հետևանքները:

Յվ թերևս այդ էր պատճառը, որ 1907 թ. կեսերից իրանական գործերի վերարերյալ գերմանական քաղաքականութեան մեջ նկատվում է որոշ փոփոխություն: Կայսերական արտաքին գործերի միսիստրութունում մշակվում է անգլո-ռուսական մերձեցումը խոչընդոտելու և Ռուսաստանի հետ գերմանո-ռուսական հարաբերությունների վիճելի հարցերի վերաբերյալ համաձայնութեան գալու գիծ: 1907 թ. հունիսի 18-ին Գերմանիան գիմում է Պետերբուրգին հետևյալ առաջարկութեամբ. գերմանական կառավարութունը պարտավորվում է ոչ ուղղակի և ոչ էլ անուղղակի ձևով, իր հպատակներին միջոցով, փորձեր չկատարել Հյուսիսային Իրանում երկաթուղային, խճուղային կամ հեռագրական կոնցեսիաներ ստանալու ուղղութեամբ, պայմանով, որ Ռուսաստանը կղադարեցնի իր դիմագրութունը Բաղդադի երկաթուղու շինարարութեան հարցում և իրանական տերիտորիայում կհոգա կառուցել Քեհրան-Խանեկին երկաթուղային գիծը, որը թուրք-իրանական սահմանի մոտ կմիանա Բաղդադի երկաթուղու Սեղիչե-Խանեկին գծի հետ: Գերմանիան առաջարկում էր նաև երաշխիքներ տալ, որ թուրքիայի և Իրանի հաղորդակցութեան ճանապարհների միջև չեն սահմանվի տրանզիտային մաքսատուրքեր և դիֆերենցիալ տարիֆներ և որ գերմանական առևտուրը Իրանում կօգտվի լրիվ ազատութունից<sup>1</sup>:

Սակայն գերմանական այս առաջարկութունը անպատասխան թողնվեց Պետերբուրգի կողմից, որովհետև նախ ղա դիտվեց որպես շատ հեռու գնացող նախագիծ, և ապա այդ ժամանակ Անգլիայի և Ռուսաստանի միջև Իրանը ազդեցութեան գոտիների բաժանելու բանակցութուններն ավարտվում էին: Վերջապես 1907 թ. օգոստոսի 31-ին կնքվեց անգլո-ռուսական համաձայնագիրը:

Այսպիսով գերմանական վտանգը և ազգային-ազատագրական պայքարի վերելքը Իրանում պայմաններ ստեղծեցին երկու վաղեմի մրցակիցների՝ Անգլիայի և Ռուսաստանի համագործակցութեան համար: Այս երկու պետութունները պարտավորվում էին փոխադարձ աջակցութեամբ խափանել իրենց «ազդեցութեան շրջանակում» ամեն մի օտար ոտնձգութուն:

<sup>1</sup> ЦГИА, ф. 1276, д. 929, л. 272—273.

Գերմանական դիվանագիտական շրջաններում անգլո-ռուսական համաձայնագիրը մեկնաբանվեց որպես Իրանում գերմանական շահերի դեմ ուղղված մի ակտ: Այդ պատճառով գերմանական մամուլը անմիջապես լայն կամպանիա ծավալեց անգլո-ռուսական բլոկի դեմ:

Գերմանիան անմիջապես կառնեց երկրում լայն տարածում ստացած «Իրանը իրանցիների համար» լոզունգից, օգտագործելով Իրանի ժողովուրդների ազգային զգացումներն ու հակաիմպերիալիստական տրամադրությունները Անգլիայի և Ռուսաստանի դեմ: Գերմանական այս քաղաքականությունը հետևյալ ձևով է բնութագրել Իրանում ռուսական դեսպան Գարտվիդը իր 1908 թ. փետրվարի 14-ի հեռագրում. «...Իրանում, ինչպես և Թուրքիայում իրենց ներկայացնելով որպես մահմեդականների անկեղծ բարեկաս ու հովանավորող, գերմանացիները եռանդազին լուրեր են տարածում այն մասին, որ իբր Իրանում գերմանական քաղաքականության նպատակը հենց այն է, որ պաշտպանեն նրա ինքնուրույնության և անկախության իրավունքները Ռուսաստանի և Անգլիայի ոտնձգություններից: Որ հիշյալ երկու պետությունները տասնյակ տարիների ընթացքում մեծ ջանքեր էին գործադրում, որպեսզի Իրանը ենթարկեն իրենց բացառիկ ազդեցությանը, կասեցնելով նրա գործողությունների ազատությունը, արգելակելով նրա առաջադիմության ճանապարհը, ղրկելով նրան հաղորդակցության ճանապարհների՝ կուլտուրայի և քաղաքակրթության այդ հաղորդիչների կառուցման իրավունքներից»<sup>1</sup>:

Գերմանական դործակալներն աշխատում էին երկրում ստեղծել այնպիսի տպավորություն, թե իբր Գերմանիան համակրում է իրանական սահմանադրական ու ազգային շարժմանը և շահագրգռված է Իրանի տնտեսական ու քաղաքական ինքնուրույնության ամրապնդման մեջ: Իրանական ազգայնականներին իրենց կողմը գրավելու նպատակով գերմանական ներկայացուցիչները հանդես էին գալիս իրանական սահմանադրության պաշտպանի դերում<sup>2</sup>: Գերմանական այդ քաղաքականության իմաստը համապարփակ ձևով բացահայտել է Գարտվիգն իր վերոհիշյալ հեռագրում, որտեղ նա գրում էր, որ մինչև այժմ Իրանում շունենալով ուղղակի շահեր և հատկապես ոչ կոնցեսիաներ, ոչ արդյունաբերական ձեռ-

<sup>1</sup> АВПР, ф. «Персидский стол», 1908. д. 915, л. 124—125 об.

<sup>2</sup> Széu «Представители Турции и Германии в Персии в роли защитников персидской конституции», «Известия штаба...», № 22, стр. 34—35.



էարկություններ, ոչ հիմնարկություններ, գերմանացիները կարող են միանգամայն անտարբեր նայել զարգացող իրադարձություններին, միաժամանակ շողոքորթելով և՛ հեղափոխական էնջումեններին, և՛ մեջլիսին, և՛ մինիստրներին, և՛ հենց իրեն շահին, սպասելով իրադարձությունների հետագա պարզեցմանը: Նրանք այն աստիճանի հանգիստ են պահում իրենց, որ ընկալվում է որպես նրանց կողմից Իրանի ներքին գործերին ամենաշնչին շփով իսկ շփիչամտելու ապացույց<sup>1</sup>:

Այս ցկուն քաղաքականությունը Գերմանիային բերում էր որոշակի հաջողություն:

Այս տեսակետից իրենց հովանավորողներինց ետ չէին մնում երիտթուրքական գործիչները: Քողարկվելով «հեղափոխական» լուզունգներով և ներկայանալով որպես «Ծղբայրակից» տղզի ույալքարի ջերմ կողմնակիցներ ընդդեմ իսլամի թշնամիների՝ Անգլիայի և Ռուսաստանի, նրանք ես սիրախաղ էին անում իրանական հեղափոխականների հետ: Խոսելով այդ մասին, Քալրիդի ռուսական գլխավոր հյուպատոսության կառավարիչ Ա. Միլլերը 1909 թ. հունիսի 4-ին հայտնում էր իր կառավարութայնը, որ նույնիսկ իրանական լիբերալ կոմիտեների գլխավոր խորհուրդը երիտթուրքական հայտնի գործիչ Ահմեդ Ռիզա բեյին ընտրել է իրանական ժողովրդի ներկայացուցիչ ե պաշտպան ամբողջ աշխարհի պառլամենտների առջև<sup>2</sup>:

1907 թ. անգլո-ռուսական համաձայնագիրը ղայրույթի փոթորիկ առաջացրեց Գերմանիայում: Կառավարութայն մոտ կանգնած դերմանական մամուլը վճռական հակահարձակման անցավ այդ համաձայնագրի դեմ, պահանջելով Գերմանիային հանձնել այդ համաձայնագրով սահմանված այսպես կոչված «չեղք գոտին»<sup>3</sup>: Միաժամանակ Քահրանում գերմանական գործերի հավատարմատար բարոն Րիխտհոֆենը Իտալիայի և Ալստրիայի մասնակցութայմբ նույնպիսի կամպանիա ծավալեց Իրանում, մեղադրելով Ռուսաստանին և Անգլիային Իրանը բաժանելու ձգտման մեջ:

Ստամբուլում ռուսական դեսպան Զինովկը իր 1907 թ. հոկտեմբերի 1-ի և 8-ի հաղորդագրություններում հայտնում էր իր կառավարութայնը, որ հենվելով մեջլիսի գերմանոֆիլ խմբի վրա

<sup>1</sup> АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 915, л. 125—125 об.

<sup>2</sup> АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 540, л. 52.

<sup>3</sup> АВПР, ф. «Канцелярня МИД», 1907, д. 17, л. 251.



Րիխտհոֆենը իրանում նախապատրաստում է պետական հեղաշրջում և որ այն իրագործելու համար գերմանացիներն աշխատում են ներգրավել նաև սուլթանին<sup>1</sup>։ Ըստ երևույթին գերմանական գործերի հավատարմատարն այն աստիճան համոզված էր այդ հեղաշրջման հաջողության մեջ, որ հավատացնում էր Քեհրանում հուլանգական դեսպանորդին, թե շուտով Բեռլինի փողոցներում թերթերը կազդարարեն անգլո-ռուսական համաձայնագրի ոչնչացման մասին<sup>2</sup>։

Այդ նպատակով Րիխտհոֆենը մասնակցում է նաև մեջլիսի դադտնի նիստին, որին ներկա էին միայն գերմանացիների կողմնակից պատգամավորները էհթեշամ-էս-Սալթաննի գլխավորությամբ։

Նիստում Րիխտհոֆենը խորհուրդ էր տալիս նրանց բոյկոտի Լնթարկել անգլո-ռուսական համաձայնագիրը և հույս դնել վիլհելմ կայսեր հզոր աջակցության վրա<sup>3</sup>։

Սակայն չկարողանալով ի կատար ածել իր այդ մտադրությունները, առավել ևս ձախողվելով խոշոր կոնցեսիաներ ձեռք բերելու գործում, Գերմանիան որոշ շահով փոխեց իր գործելակերպը, հիմնական ուղադրությունը գարձնելով իրանում իր կողմնակիցների թիվը մեծացնելու և գերմանոֆիլ տրամադրություններ ունեցող մշտավորականության մի ամբողջ բանակ ստեղծելու հարցի վրա։ Այս տեսակետից խիստ կարևոր նվաճում էր 1907 թ. սեպտեմբերին Քեհրանում գերմանական արական դպրոցի հիմնումը։ Դպրոցը հիմնականում ֆինանսավորվելու էր գերմանական կառավարության կայսերական ֆոնդի կողմից, որը այդ նպատակի համար բաց էր թողնելու տարեկան 30 հազար մարկ։ Նույնպիսի քանակությամբ դումար տալու էր նաև իրանական կառավարությունը<sup>4</sup>։ Դպրոցի լրացուցիչ ծախսերը հողալու համար նախատեսված էր նաև օգտագործել իրանում ապրող գերմանացիների նվիրատվությունները։ Դրպրոցում հիմնականում սովորում էին պետական ծառայության մեջ գտնվող աստիճանավորների, մեծահարուստ վաճառականների ու հողատերերի զավակները։ Այդ հանդամանքը հնարավորություն էր տալիս գերմանացիներին ազդեցություն ձեռք բերել վերոհիշյալ

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 252, նաև Ա. Ֆոլկս, նշվ. աշխ., էջ 124։

<sup>2</sup> АВПР, ф. «Перендеский стол», 1907, д. 914, л. 335 об—336.

<sup>3</sup> Նույն տեղում։

<sup>4</sup> ЦГИА, ф. 560, д. 369, л. 1—4. АВПР, ф. «Перендеский стол», д. 915, л. 220—223.

խավերի շրջաններում, և նրանց օգտագործել իրանում գերմանական քաղաքականության նվաճումների համար:

Ռուսաստանը և Անգլիան մեծապես անհանգստացած էին այդ դպրոցի ստեղծումով: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ այն հանդիսանալու էր Գերմանիայի քաղաքական ազդեցության ուժեղացման գործիք իրանում, այլև այն բանի հետևանքով, որ ինչպես նշվեց, Գերմանիան բացահայտ աշխատում էր թափանցել շեզոք գոտին: «Ակամայից մտածում ես,— գրում էր ցարական կառավարության արտաքին քաղաքականության տեսաբաններից մեկը,— որ դա Գերմանիայի միջոցառումների առաջին քայլն է իրանում, որ նա ազատորեն կարող է իրագործել այն գոտում, որն ըստ անգլո-ռուսական համաձայնագրի մնացել է շեզոք: Ըստ որոշ թերթերի, այն արդեն հանդիսանում է Գերմանիայի տենչանքների առարկան: Այդ գոտին այնպիսի ավետյաց հողեր է պարունակում, ինչպիսիք են նավթաբեր շրջանը թուրք-իրանական սահմանի մոտ, իրանի միակ նավարկելի գետի՝ Կարունի ավազանը, ամբողջ Պարսից ծոցի առափնյա շրջանը Բանդար-Բուշիր նավահանգստով և Ֆարսի մեծ մասը Շիրազ քաղաքով»<sup>1</sup>:

Իր քաղաքական նպատակները իրանում իրագործելու համար Գերմանիան լայնորեն օգտագործում էր նաև Թուրքիային: 1905 թ. ռուսական պարտությունը Հեռավոր արևելքում կենդանացրեց նաև «հիվանդ մարդուն» և դրդեց նրան տերիտորիալ զավթումներ կատարել իրանի հաշվին: 1905 թ. աշնանը թուրքական զորքերն անցան իրանա-թուրքական սահմանը և ղավթեցին մի շարք սահմանամերձ տերիտորիաներ: Գերմանիան կենսապես շահագրգռված էր Թուրքիայի այդ քայլով, որովհետև նախագգում էր, որ Անգլիան և Ռուսաստանը փոխադարձ համաձայնություն մտք է շտապեին պինդ փակել իր առաջ իրանի դռները և փշրել իր երազը՝ Բաղդադի երկաթուղին երկարաձգել մինչև իրան: Միաժամանակ Գերմանիան իր հաշիվները կառուցում էր այն բանի վրա, որ Թուրքիայի միջոցով ձևշում կգործադրի Անգլիայի և Ռուսաստանի վրա և ընդհանուր որսից կունենա իր բաժինը:

Սկզբնական շրջանում Գերմանիան այդ քայլը աշխատում էր իրագործել առաջարկելով իր միջնորդությունը թուրք-իրանական սահմանային վեճում:

<sup>1</sup> К. Смирнов, Немечкая школа в Тегеране. «Известия штаба...», № 22, стр. 10.

1906 թ. Իրանում ոռոսական հյուպատոսները հայտնում էին իրենց կառավարությունը, որ իրենք ավելի ու ավելի են համոզվում, որ թուրք-իրանական վեճում Գերմանիան որոշակիորեն խաղում է գրգռիչ դեր, հույս ունենալով Դուան վրա անգլո-ռուսական աղ-դեցություն անհաջողության դեպքում, հարմար պահին հանդես գալ միջնորդի, առավելապես Իրանի փրկարարի դերում, դրա համար, իհարկե, պահանջելով համապատասխան վարձատրություն: Գերմանիան իր այսպիսի միջնորդության իրավունքը հիմնավորում էր 1873 թ. Իրանի հետ կնքած պայմանագրի 18-րդ հոդվածով, որը իրավունք էր տալիս իրեն Իրանի վեճի կամ տարածայնության դեպքում որևէ երրորդ պետության հետ հանգես գալ միջնորդի դերում<sup>1</sup>:

1907 թ. Թուրքիան ուժեղացրեց իր ագրեսիվ գործողությունները Իրանի նկատմամբ: Դա ըստ էության Գերմանիայի բողոքի արտահայտությունն էր անգլո-ռուսական համաձայնագրի դեմ<sup>2</sup>: Անգլիական դիվանագիտությունը անմիջապես շտապեց այդ վեճի բորբոքման պատճառները բարդել Գերմանիայի և Ռուսաստանի վրա: 1907 թ. հոկտեմբերի 24-ին «Թայմս»-ը հանդես եկավ մի խմբագրականով, որտեղ շարադրվում էր Անգլիայի տեսակետը թուրք-իրանական կոնֆլիկտի բորբոքման վերաբերյալ: Այնտեղ ասված է. «Անգլո-ռուսական բանակցությունները համաձայնագիր կնքելու վերաբերյալ... ուղղակի համընկան Իրանի և Թուրքիայի միջև փոխհարաբերությունների ճգնաժամի հետ: Ներկայումս համաշխարհային քաղաքականության ծանրության կենտրոնը ընկած է երկաթուղիների երկու ապագա գծերի միջև. Թուրք-գերմանական, որը շարունակվելով Մոսուլից, պետք է անցնի Տիգրիսի հովտով մինչև Քուվեյթ, և ոռոս-պարսկական, որը անցնելու է Զուլֆայից Արաք և ապա ուղիղ գծով Թավրիդի վրայով մինչև Պարսից ծոց (Բուշիր): Նախագծելով այդ երկու երկաթուղային գծերը Գերմանիան և Ռուսաստանը բնականաբար նկատի ունեին Իրանի արևմրտյան մասի՝ Ուրմիա լճի շրջակայքի հարստությունները: Այստեղից էլ այդ երկրում հիշյալ երկու պետությունների շահերի բախումը<sup>3</sup>:

<sup>1</sup> АВІР, ф. «Персидский стол», 1906, д. 908, л. 207—209.

<sup>2</sup> X a n - 3 a d e, Положение в Персии «Тифлисский листок», 9 ноября 1907 г.

<sup>3</sup> М. Арда тов. Турецко-персидский пограничный конфликт («Известия штаба Кавказского военного округа», 1907, № 21, 3-я треть, Тифлис, 1908, стр. 1—3.



Այսպիսով անգլիական կառավարությունը փաստորեն հայտարարում էր, որ ինքը թուրք-իրանական վեհի հարցում որևէ շահ չունի, հետևաբար ձեռնպահ է մնալու Ռուսաստանի հետ համագործակցելուց: Բացահայտելով Անգլիայի այս քաղաքականության մեջ ինչ ծալքերը, Քերմանում ռուսական հյուպատոս Աղամովը գրում էր. «Մեծ Բրիտանիայի կառավարությունը բանակցությունների մեջ լ մտել Թուրքիայի հետ Բաղդադի երկաթուղու հարցում զիջումներ ստանալու վերաբերյալ, փոխարենը խոստանալով հրաժարվել սահմանային վեճին միջամտելուց...»<sup>1</sup>:

1907 թ. վերջերին և 1908 թ. սկզբներին իրանա-թուրքական վեճը էլ ավելի բորբոքվեց: Վերլուծության ենթարկելով Մերձավոր և Միջին արևելքում ստեղծված քաղաքական իրավիճակը, գերմանական դիվանագիտությունը որոշեց առավել ակտիվորեն օգտագործել Թուրքիային՝ Անգլիայի և Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու նպատակով: Գերմանիան ուղղակի սկսեց հրահրել Թուրքիային տերիտորիալ ղավթումներ կատարել Իրանում և Ռուսաստանի դիմված դիմադրություն դեպքում նույնիսկ պատերազմ ըսկրսել նրա դեմ: Թուրքիայում գտնվող ռուսական հյուպատոսները 1908 թ. գարնանը անընդհատ հաղորդում էին իրենց կառավարությանը Թուրքիայի ռազմական պատրաստությունների մասին: Ներանք հայանում էին նաև, որ Թուրքիայում շրջում են համառ շշուկներ մոտակա ռուս-թուրքական պատերազմի մասին<sup>2</sup>:

Միաժամանակ գերմանական հետախուզությունը իրանական Ադրբեջանում և Քուրդիստանում յայն գործունեություն ծավալեց տեղական բնակչության մեջ հակառուսական տրամադրություններ բորբոքելու և այգ շրջանների վերաբերյալ ռազմա-քաղաքական հետախուզական տվյալներ հավաքելու ուղղությամբ<sup>3</sup>: Թուրքական էմիսարները, որոնց ղեկավարում էին գերմանական հետախույզները, Ադրբեջանում լայն ագիտացիա ծավալեցին, կոչ անելով կաղմակերպել համընդհանուր ապստամբություն ինքնավարություն ձեռք բերելու նպատակով: Նրանց կողմից նույնիսկ մշակված էր ապստամբության մանրամասն պլան, որն իրագործելու համար մեծ քանակությամբ դրամ, դենք ու զինամթերք էր<sup>4</sup> մատակարար-

<sup>1</sup> Турецко-персидская пограничная спорная полоса, «Сборник Главно-го управления Генерального штаба», вып. 58, март 1914, СПб, стр. 79.

<sup>2</sup> ЦГИА Груз. ССР. ф. 15, д. 67, л. 104об, 117, 117об.

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 253:

<sup>4</sup> Автономия Азербайджана, «Тифлисский листок», 1908, 11 октября.



վում տարբեր էնչումեններին: Նման միջոցառումների նպատակն էր իրանական ժողովուրդների աղգային-աղատագրական շարժումն օգտագործել իրենց քաղաքական ծրագրերն իրագործելու համար:

Օրինակ, ակնհայտ փաստ է, որ գերմանական ու թուրքական գործակալներն ուժգին թափով պանիսլամիստական պրոպագանդա էին մղում Այրբեջանի Թուրքիային միացնելու օգտին<sup>1</sup>:

1909 թ. գարնանը ռուսական զորքերի մուտքը Ադրբեջան է՛լ ավելի ուժեղացրեց տեղի բնակչության հակառուսական տրամադրությունները, որից անմիջապես օգտվեցին գերմանացիները, ծավալելով բուռն ագիտացիա այն մասին, թե ռուսական կառավարությունը ցանկանում է Ադրբեջանը միացնել Ռուսաստանին (տե՛ս Արևելքի 1909 թ. ապրիլի 26-ի թվակիր հեռագիրը)<sup>2</sup>: Բեռլինում անմիջապես կաղամակերսյվեց այսպես կոչված «Պարսիկ ժողովրդի շահերի պաշտպանություն կոմիտե», որը հայտարարեց, թե Իրանի դրավումը որևէ մեկի կողմից անխուսափելիորեն կհարուցի միջադատյին կոնֆլիկտ<sup>3</sup>:

Պանդերմանսիական մամուլը կատաղի կամայանիա ծավալեց Իրանում անզու-ռուսական քաղաքականության դեմ, միաժամանակ հորդորելով Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությանը ավելի եռանդուն քաղաքականություն վարել Իրանում, շեշտելով, որ Գերմանիան չափազանց շահագրգռված է այդ երկրի ձեկատագրով:

Վերահիշյալ իրադարձությունների կասկեցությունը 1909 թ. Թուրքիան կրկին ընդարձակեց իր տերիտորիալ վավթումները Իրանում: Թուրքական մամուլը Գերմանիայի թելագրանքով հասկացնում էր Ռուսաստանին, որ Ք. Դուռը որոշել է դուրս չհանել դրքերը իրանական տերիտորիայից, մինչև որ վերջին ռուսական ղինվսրը դուրս չգա այնտեղից:

Ռուսաստանի համար լուրքական սպառնալիքը ուժեղացնելու նպատակով գերմանական դիվանագիտությունը ճնշում էր գործ գնում թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս կրկնապատկի Կովկասի դեմ կանդնած թուրքական 4-րդ կորպուսի կաղմը: Այդ առթիվ 1909 թ. մայիսի 15-ի N 89 դաղտնի հաղորդագրության մեջ Զինովկը դրում էր.

1 Մ. Ս. Իվանով, նշվ. աշխ., էջ 329—330:

2 Ա. Յուրկու, նշվ. աշխ., էջ 126:

3 «Тифлисский листок», 1909, 17 июня.

4 «Тифлисский листок», 1910, 12 октября.

«...Գերմանական կառավարությունը արդեն բանիցս Բ. Դուան ուշադրությունը հրավիրում է թուրքական 4-րդ կորպուսում բարեփոխություններ կատարելու անհրաժեշտության վրա այն կրկնապատկելու հմաստով: Ինչպես երևում է Բեռլինում թուրքական դեսպանի մայիսի 12-ի իմ կողմից ձեռք բերած գաղտնի հեռագրից, գերմանական արտաքին գործերի պետական քարտուղարը Օսման նիգամի փաշայից ցանկացել է իմանալ, թե թուրքական կառավարությունը մտադի՞ր է արդյոք հետևել Գերմանիայի խորհուրդներին: Թուրքական դեսպանին հանձնարարված է եղել հաղորդել Բեռլինի կարինետին, որ Օսմանյան կառավարությունը չի հապալի դբաղվել հիշյալ հարցի քննարկմամբ և որ ընդհատված բանակցությունները կվերսկսվեն, հենց որ թուրքական դեսպանության մայոր էնվեր բեյը, որը ներկայումս գտնվում է Կ. Պոլսում, վերադառնա Բեռլին<sup>1</sup>:

Գերմանական իմպերիալիզմն առանձնակի եռանդով խրախուսում էր Իթթիհատի պանիսլամիստական ելույթներն Իրանում: Սակայն ի տարբերություն Աբդուլ Համիդի կողմից խրախուսվող կրոնական պանիսլամիզմի, երիտթուրքական պանիսլամիստական քարոզչությունը կրում էր ոչ թե կրոնական ֆանատիզմի բնույթ, այլ քաղաքական, ազատագրական, մասնավորապես մահմեդական պետություններին զինելու տենդենց՝ ընդդեմ իսլամի առաջին թըշնամիները Անգլիայի և Ռուսաստանի, մի քան, որ խրախուսվում էր գերմանական կառավարության կողմից:

Անդրադառնալով այդ հարցին, Չարիքովը 1909 թ. դեկտեմբերին Ստամբուլից հաղորդում էր. «Երիտթուրքական ռազմական ապստամբությունից հետո որոշ քանակությամբ սպաներ ուղարկվեցին Աֆղանստան, Պարսկաստան և Մարոկկո, մահմեդական գործի բարելավմանը նպաստելու համար: Իրանում գործում էին երեք սպաներ. Սալունիկի կենտրոնական երիտթուրքական կոմիտեի երեք ղեկավարներից մեկը՝ Նաջի-բեյը, որն աշխատում էր Թեհրան արշավող բախտիարների ջոկատում, ինչպես նաև Սագիկ-բեյը և Նաֆիզ-բեյը: Այս երեքը ներկայումս գտնվում են Կ. Պոլսում, սակայն Պարսկաստանում եղած ժամանակ ծպտված էին որպես պարսկական ուլմաներ»<sup>2</sup>:

Սալունիկի երիտթուրքերի կոմիտեի հրամանով Թավրիզ էին ուղարկվել նաև կոմիտեի շորս պատգամավորներ՝ Իրանում երիտ-

<sup>1</sup> ЦГИА Груз. ССР. ф. 15, д. 187, л. 35.

<sup>2</sup> АВПР, ф «Политархив». 1909, д. 1035, л. 64.

Թուրքերի կոսիտեի նման մի կենտրոն կազմակերպելու նպատակով<sup>1</sup>։

Գերմանիան և Թուրքիան եռանդուն աշխատանք էին տանում նաև Իրանի ընակչության լայն խավերի մեջ պանիսլամիզմի դադափարները բորբոքելու ուղղությամբ։ Դա անշուշտ տալիս էր իր որոշակի պտուղները։ Իրանական թերթերում սկսեցին տպագրվել մեծ քանակությամբ հողվածներ բոլոր մահմեդականների միավորման հնարավորության մասին։ Ընդ որում Թուրքիայի հետ կապված «Մողաֆֆերի» ամսագրի խմբագիր, իրանական պանիսլամիստական շրջաններում հայտնի Միրզա Ալի-աղա-Շիրազին առաջ էր քաշում Մեկկայում միջազգային մահմեդական պառլամենտի հիմնադրման մի առաջարկ, որը միավորելու էր Մերձավոր և Միջին արևելքի բոլոր մահմեդականներին<sup>2</sup>։

Գերմանիան և Թուրքիան ճարպկորեն օգտագործում էին նաև Քարրալայի և Նաջաֆի իրանական մոջթեհիդների հակառուսական տրամադրությունները, մինչև իսկ հորդորելով նրանց ուսաների դեմ հայտարարել սրբազան պատերազմ (ջիհադ) սկզբում Կովկասում և ապա Իրանում<sup>3</sup>։

Գերմանիան լայն ճակատով հարձակում սկսեց նաև Հյուսիսային Իրանում, դրսևորելով այդ շրջանում տնտեսական նվաճումներ կատարելու նոր, բուռն ձգտում։ 1909 թվականից այնտեղ սկսեց գործել «Մոսսիֆ և Շյունեման» ընկերությունը, որը հանդիսանում էր գերմանական «լեանտյան գծի» բաժանմունքներից մեկը։ Հիշյալ ընկերությունը հաջողությամբ սկսեց դուրս մղել «Պարսկական փոխադրամիջոցների ուսական բյուրոյին», որն օգտվում էր իրանական ապրանքների փոխադրման մենաշնորհային իրավունքից, և Իրանում սկսեց տարածել մեծ քանակությամբ գերմանական ապրանքներ<sup>4</sup>։ Նույն թվականին իրանական ներքին գործերի մինիստրությունից այսպես կոչված իրանա-դերմանական ընկերությունը ստացավ Ուրմիա լճի շահագործման կոնցեսիան։

Գերմանացիները Թավրիզում կառուցեցին նաև մեխանիկական ալրաղաց, կոճակի գործարան, կառքեր, զանազան սայլեր,

✓ 1 «Սշակ», 1909, ապրիլի 28.

2 Проект интернационального мусульманского парламента («Известия штаба Кавказского военного округа», № 25, Тифлис, 1909, стр. 92).

3 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 511, л. 21—23об.

4 А. Х а щ а б, Экономическое положение современной Персии и ее торговли с прочими странами, «Мир ислама», СПб, 1912, т. 1, № 2, стр. 171.



գյուղատնտեսական գործիքներ պատրաստող արհեստանոց և բազմաթիվ այլ ձեռնարկություններ<sup>1</sup>:

Իրանական հեղափոխության և Գերմանիայի ու Թուրքիայի ակտիվ քաղաքականության հետևանքով անգլո-ռուսական բլոկի դիրքերը Իրանում նշանակալիորեն թուլացան և ընդհակառակը Գերմանիային հաջողվեց պարտագրել իր մրցակիցներին բազմաթիվ հարցերում իրեն ճանաչել որպես Իրանում հավասար իրավունքներ ունեցող կողմ: Իր այդ հաջողությունները Գերմանիան նշանակալից շահով պարտական էր նաև Անգլիային: 1909 թ. վերջերին այս երկու պետությունները համաձայնության եկան Բաղդադի երկաթուղու հարցում: Այդ առթիվ Կ. Պոլսի ռուսական դեսպանին ուղղված 1909 թ. նոյեմբերի 10-ի իր հեռագրում Իվվոլսկին հաղորդում էր, որ Գերմանիան Անգլիային է հանձնում Բաղդադից մինչև Պարսից ծոց երկաթուղու կոնցեսիայի բոլոր իրավունքները, պայմանով, որ Անգլիան հրաժարվի ձեռնարկության այն մասի մասնակցությունից, որը վերաբերում է Բաղդադից հյուսիս ընկած գծին<sup>2</sup>:

Անգլո-գերմանական այս որոշակի մերձեցումից հետո Անգլիան Գերմանիայի պահանջով առաջարկեց Ռուսաստանին Իրանի վերաբերյալ անգլո-ռուսական կոնվենցիային վերաբերող բոլոր հարցերում խորհրդակցել գերմանական կառավարության հետ<sup>3</sup>:

Ցարական կառավարության համար ստեղծված այս ծայրահեղ անբարենպաստ իրադրության պայմաններում Պետերբուրգի կաբինետը որոշեց, որ անհրաժեշտ է անհապաղ բանակցությունների մեջ մտնել Գերմանիայի հետ, հակառակ դեպքում Անգլիան ինքը համաձայնություն կկնքի նրա հետ ի հաշիվ Ռուսաստանի: 1910 թ. հոկտեմբերի 28-ին գումարվեց ցարական կառավարության հատուկ նիստ, որտեղ որոշվեց իրանական գործերի վերաբերյալ բանակցություններ սկսել Գերմանիայի հետ<sup>4</sup>: նույն թվականի նոյեմբերին Պետրոգրադում նիկոլայ 11-ի և Վիլհելմ 11-ի միջև սկսվեցին բանակցություններ: Իրականում այդ բանակցությունները դուրս էին դալիս Իրանում ռուս-գերմանական բախումների շրջանակներից: Գերմանական կառավարությունն առաջարկում էր կնքել ընդհանուր քաղաքական դաշինք Ռուսաստանի և Գերմանիայի միջև:

1 «Մշակ», 1910, հունվարի 16:

2 Ա. Յոսկուս, Նշվ. աշխ., էջ 128:

3 նույն տեղում, նաև տե՛ս Իվվոլսկու 1910 թ. մարտի 10-ի № 380 հեռագիրը Լոնդոնի ռուսական դեսպանին:

4 Տե՛ս «Красный архив», 1933, т 3 (58), стр. 52—57.



Գտնվելով դժվարին կացության մեջ ցարական կառավարությունը տատանվում էր վճռական և կտրուկ ձևով մերժել այդ առաջարկը: Բանակցությունների ժամանակ ուսական արտաքին գործերի մինիստր Սազոնովը հայտարարեց, որ Գերմանիան Իրանի ուսական գոտում չպետք է ունենա երկաթուղային, խճուղային և հեռագրական կոնցեսիաներ: Այդ պայմանը ընդունելու դեպքում Ռուսաստանը այլևս արդելիքներ չի հարուցի Բաղդադի երկաթուղու շինարարությանը: Ռուսաստանը ընդառաջ կզնա գերմանական ցանկություններին և ուսական սահմանից մինչև Թեհրան նախագծվող երկաթուղին կառուցելուց հետո, երկաթուղային ճանապարհով Թեհրանը կմիացնի Խանեկիին, այսինքն Բաղդադի մագիստրալի հետ: Ռուսաստանը չի սահմանափակի գերմանական առևտուրն Իրանում: Դրա փոխարեն Սազոնովը պահանջում էր, որ Գերմանիան պարտավորվի ուսական գոտում Խանեկիինից հյուսիս չպահանջել Իրանի հետ միացող Բաղդադի երկաթուղու այլ ճյուղավորումներ կառուցելու իրավունքներ<sup>1</sup>:

Բանակցությունների վերջում ոչ մի գրավոր համաձայնագիր չկնքվեց: Կողմերը սահմանափակվեցին բանավոր զրույցներով: Նոյեմբերի 15-ին գերմանական կառավարությունը Պետերբուրգում իր դեսպան Պուրտալիսին ուղարկեց ուս-գերմանական համաձայնագրի մի նախագիծ: Այդ նախագիծում Բեռլինի կաբինետը մըտցրել էր նաև մի շարք կետեր, որոնց նպատակն էր ստիպել Ռուսաստանին, որպեսզի վերջինս ճանաչի Գերմանիայի քաղաքական իրավունքներն Իրանում: Մասնավորապես Գերմանիան առաջարկում էր, որպեսզի կողմերը պարտավորվեն հարգել Իրանի ամբողջահանութունն ու անկախութունը<sup>2</sup>: Իս գերմանական կառավարությանը կտար ձայնի իրավունք Իրանի քաղաքական գործերում և այդ երկրի հետ Ռուսաստանի հարաբերություններին միջամտելու հնարավորություն այն պատրվակով, որ Ռուսաստանի այս կամ այն քայլը կարող է ազդել Իրանի ամբողջականության կամ անկախության վրա: Ցարական կառավարությունը բնականաբար չէր կարող համաձայնվել այս առաջարկությունների հետ, մանավանդ որ դա փաստորեն կնշանակեր անգլո-ուսական հա-

<sup>1</sup> „Die Grosse Politik“, Bd. XXVII, т. II, № 10152—10155 ss. 835—842.

<sup>2</sup> Տե՛ս արտաքին գործերի մինիստրության ժամանակավոր կառավարիչ Նեբատովի զեկուցագիրը Նիկոլայ II-ին (Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств (1878—1917), серия II, 1900—1913, т. XVIII, ч. 1, 1938, стр. 171.

մաձայնագրի խզում: Եվ այդ պատճառով իր հերթին նա ներկայացրեց համաձայնագրի մի կոնտր-նախագիծ, որի վրա նիկոլայ II-ը մակագրեց «հավանություն եմ տալիս»<sup>1</sup>: Ի վերջո կողմերի միջև 1911 թ. օգոստոսի 19-ին Պետերբուրգում իրանական գործերի վերաբերյալ համաձայնություն կնքվեց: Այդ համաձայնագիրը հայտնի է Պոտսդամյան անունով, որովհետև նրա պայմանները մշակվել էին հիշյալ վայրում: Ըստ համաձայնագրի Գերմանիան պարտավորվում էր սահմանափակել իր գործունեությունը Հյուսիսային Իրանում, մասնավորապես այնտեղ չպահանջել երկաթուղային և այլ կոնցեսիաներ, իսկ Ռուսաստանը պարտավորվում էր այլևս խոչընդոտներ չհարուցել Բաղդադի երկաթուղու կառուցման դեմ և իր կողմից Իրանում կառուցել երկաթուղային գիծ, որը Իհհհհհհհ կապեր հաննկինի՝ այսինքն Բաղդադի երկաթուղու հետ<sup>2</sup>: Ցարական կառավարությունը ստացավ նաև Գերմանիայի բանավոր և խիստ զաղտնի խոստումը չկառուցել Բազադի երկաթուղու ճյուղեր Արևելեյան Անատոլիայում: Գերմանիան պարտավորվեց նաև հաննկինից հյուսիս, Բաղդադի մագիստրալից, ռուսական և իրանական սահմանների ուղղությամբ չկառուցել ոչ մի գիծ<sup>3</sup>: Ռուսաստանի այս պահանջը ուղղված էր նաև երիտթուրքական կառավարության դեմ, որովհետև վերջինս դեռևս 1909 թ. մշակել էր Թուրքիայում երկաթուղային շինարարության մեծ պլան, որը նախատեսում էր Անատոլիայում գոյություն ունեցող գծերը շարունակել դեպի Արևելք՝ Ռուսաստանի և Իրանի սահմանները, դեպի հարավ-արևելք՝ Բաղդադի ուղղությամբ և ապա դեպի Պարսից ծոց<sup>4</sup>:

Պոտսդամում Վիլհելմ II-ի, արտաքին դործերի մինիստր Կիդերլին Վեխտերի, կանցլեր Բեռնան Լոլվեգի և Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովի պաշտոնական զրույցի ժամանակ բացի վերոհիշյալ հարցերից քննարկվեցին նաև իրանական գործերի վերաբերյալ կողմերին հետաքրքրող հույժ հրատապ և կարևոր մի շարք հարցեր: Այդ առթիվ նիկոլայ II-ին ներկայացրած իր զեկուցագրում Ռուսաստանի արտաքին գործերի ղեկավարը գրում էր. «...Նս աշխատեցի նորին գերազանցության ուշադրությունը հրավիրել Ռուսաստանի շահերի տեսակետից վտանգավոր

1 Նույն տեղում, էջ 174—175:

2 «Международные отношения...», серия II, т. XVIII, ч. 1, стр. 354—355.

3 Նույն տեղում, էջ 35:

4 А. Д. Н о в и ч е в, Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, стр. 158

այանիսլամիստական քարոզչութիւնի զարգացման վրա, որը գալիս է Կ. Պոլսից և աստիճանաբար ընդգրկում է այն բոլոր երկրները, որտեղ ապրում է մահմեդական բնակչութիւն: ...Նոր «Բեռլինյան» խալիֆաթի երևան գալը, — նկատեցի ես, — չի կարող շանհանգրս-աացնել Ռուսաստանին, որն ունի ավելի քան 20 միլիոն մահմեդական հպատակներ<sup>1</sup>:

Զրուցի ընթացքում Սագոնովը պահանջեց նաև որպեսզի գերմանական կառավարութիւնը ճնշում դործադրի Թուրքիայի վրա, դադարեցնելու համար Թուրք-իրանական սահմանային գոտում նրա դավթումները: Վիլհելմ II-ն այդ «անսպասելի» հարցից զարմացածի տեսք ընդունելով, հայտարարեց, որ Գերմանիան ոչ մի անշուքութուն չունի դրա հետ: Սակայն ի վերջո ռուսական կառավարութիւնի համառ պնդումների ճնշման տակ գերմանական կողմը համաձայնվեց համաձայնագրի մեջ մտցնել մի կետ, որի մեջ ասվում էր. «Քանի որ երկու պետութիւնները (Գերմանիան և Ռուսաստանը) շահագրգռված են Իրանի անձեռնմխելիութիւնը պահպանելու և այդ հրկրում կարգ ու կանոնը վերականգնելու մեջ, նրանք պարտավորվում են այդ երկրում շխրախուսել որևէ պետութիւն, և հատկապես Թուրքիայի դավթողական ձգտումները»<sup>2</sup>:

Հիշյալ կետը ռուսական դիվանագիտական շրջաններում դիտվեց որպես բանակցութիւնների ընթացքում ձեռք բերված կարևոր հաջողութիւն, որովհետև համաձայնագրի կնքումից անմիջապես հետո Թուրքական կառավարութիւնը սկզբունքային համաձայնութիւն տվեց իր զորքերը դուրս բերել իրանական տերիտորիայից<sup>3</sup>: Սագոնովը բողոքեց նաև այն բանի դեմ, որ Գերմանիան պարսիկներին զրգռում է Ռուսաստանի դեմ: Բնտման Հովվեզը դա ժխտեց, ավելացնելով, որ Գերմանիան իրանում պահանջում է միայն առևտրի բնագավառում իրավահավասարութիւն<sup>4</sup>:

Ամբողջութեամբ վերցրած Պոտսդամի համաձայնագիրը իրենից ներկայացնում էր ցարական Ռուսաստանի նահանջը գերմանական իմպերիալիզմի առջև: Ռուսաստանը խոշոր զիջում էր անում Գերմանիային, պաշտոնապես ճանաչելով իրանում բաց դռների սկզբունքը, և Գերմանիայի առջև լայնորին բաց էր անում Հյուսիս-

1 Доклады бывшего министра иностранных дел С. Д. Сазонова Николаю Романову, 1910—1912 гг., «Красный Архив», 1923, № 3. стр. 6.

2 Նույն տեղում, էջ 10:

3 «Международные отношения...», серия II, т. XVIII, ч. I, стр. 33.

4 „Die Grosse Politik“, Bd. XXVII, т. II, № 10152—10155 ss. 835—842.



սային Իրանի դռները: Յարական կառավարութիւնը Պոստղամում փաստորեն ընդունեց դեռևս 1907 թ. Գերմանիայի կողմից իրեն ներկայացրած այն պահանջները, որոնք ընդամենը չորս տարի առաջ Պետերբուրգի կաբինետի կողմից դիտվեցին որպէս Ռուսաստանի արժանապատվութիւնը ոտնահարող առաջարկութիւններ: Պատահական չէ, որ ուս-գերմանական համաձայնագրի հրապարակումը գոհունակութիւնով ընդունվեց գերմանական բուրժուական և նույնիսկ պանգերմանական մամուլի կողմից<sup>1</sup>: Այդ համաձայնագիրը միաժամանակ «Եռյակ դաշինքի» և «Եռյակ համաձայնութեան» պետութիւնների միջև ներքին դաշնակցային կարգապահութեան խախտումն առավել բնորոշ օրինակներից մեկն էր, որովհետև առանց հաշվի առնելու Անտանտի գծով իր դաշնակիցների կարծիքը, Ռուսաստանը բանակցութիւնների մեջ մտավ թշնամական բլոկի ղեկավար պետութեան հետ:

Սակայն շնայած գերմանական կառավարութեան Պոստղամում ձեռք բերած ակներև հաջողութիւններին, վերջինիս շահողվեց իրագործել իր ամենամիտրական բաղձանքը, այն է՝ Ռուսաստանի հետ կնքել ընդհանուր քաղաքական դաշինք, կտրել նրան Անտանտից և ներգրավել իր կողմը կամ ծայրահեղ դեպքում շեղութեանը ու մեկուսացնել նրան:

Հասկանալի է, որ այս համաձայնագիրը ուղղակի դիպչում էր Ռուսաստանի դաշնակիցների և առաջին հերթին՝ Անգլիայի շահերին: Պատահական չէր, որ Անգլիայի կառավարող շրջանները լարված ուշադրութեամբ հետևում էին բանակցութիւնների ընթացքին:

Վախենալով, որ Ռուսաստանի դեմ կտրուկ ելույթի դեպքում վերջինս ավելի կմերձանա Գերմանիայի հետ, անգլիական կառավարութիւնը աշխատում էր հանգիստ ձևանալ և համոզել իր երկրի բնակչութեանը, թե իբր Պոստղամյան բանակցութիւնները առանձնապէս ոչ մի էական նշանակութիւն չունեն: Այս հարցի վերաբերյալ համայնքների պալատում հանդես գալով մի ընդարձակ ճառով, արտաքին գործերի մինիստր էդուարդ Գրեյը հայտարարեց, որ Պոստղամում Ռուսաստանի և Գերմանիայի բարեկամական մտքերի փոխանակութիւնը ամենևին չազդեց ուսական կառավարութեան նկատմամբ Անգլիայի և Ֆրանսիայի սրտագին վերաբերմունքի վրա<sup>2</sup>: Սակայն իրականում Անգլիայի իմպերիալիստական շրջանները լըր-

<sup>1</sup> АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 18, л. 175—176.

<sup>2</sup> «Тифлисский листок», 1911, 3 марта.



չորեն անհանգստացած էին Պոտսդամյան բանակցութիւններով: Պոտսդամյան հանդիպման ժամանակ Բենկենդորֆը Լոնդոնից հայտնում էր իր կառավարութեանը, որ Խանեկինը երկաթուղու միջոցով Թեհրանի հետ կապելու վերաբերյալ Գերմանիային տրված Ռուսաստանի համաձայնութիւնը Անգլիայի կողմից դիտվում է որպէս գերմանական շահերին ընդառաջ գնալու մի միջոցառում, ի վնաս անգլիական հատուկ շահերի, որոնք սեղմվում են հարավում և Եփրատի հովտում և այն էլ առաւել մեծ շահերով, քան դա. կարող է հայտնի լինել ուրիշներին: Այդ պատճառով Անգլիան չի կարող համաձայնվել, որ Իրանի հարավը բաց մնա Գերմանիայի առջև<sup>1</sup>:

Անգլիական մամուլը խիստ քննադատութեան ենթարկեց Տորին Օֆիսին և նրա ղեկավարին: «Դեյլի մեյլ» թերթը հրապարակեց մի առաջնորդող «Արտաքին գործերի մինիստրութեան թուլութիւնը» վերնադրով, որտեղ հայտարարում էր, որ եթե «Պարսից ծոցի շրջանում Բրիտանական կայսրութեան շահերը պետք է մնան անպաշտպան, ապա անհրաժեշտ է վերջ դնել Անգլիայի արտաքին գործերի մինիստրութեան թույլ և անորոշ քաղաքականութեանը»<sup>2</sup>:

Անգլիական պաշտոնական շրջանները աշխատում էին նաև խոցել թուրքական կառավարութեան ինքնասիրութիւնը, որպէսզի վերջինս հանդես գար Պոտսդամի համաձայնագրի և նրա ստորագրողների դեմ:

Բրիտանական կապիտալը Իրանում երկաթուղային շինարարութեան ուսուցիչական նախագծերին հակադրում էր իր հակաանախագծերը, այն է՝ կառուցել Տրապիզոն—Թավրիզ երկաթուղային գիծը և Բաթումը հայտարարել աղատ նավահանգիստ, մի բան, որ հնարավորութիւն կտար արևմտյան պետութիւններին ընդլայնել իրենց առևտրական կապերը Իրանի, հատկապես նրա հյուսիսի հետ: Այդպիսի հակաանախագծերից մեկում ասվում էր, որ Ռուսաստանը առարկում է Տրապիզոն—էրզրում—Թավրիզ երկաթուղու դեմ, վկայակոչելով ռազմագիտական տեսակետից նրա վնասակարութիւնը Ռուսաստանի հարավի ապահովութեան համար: «Սակայն միջազգային շահերը չեն կարող հաշտեցվել «ռազմագիտական» պատճառների հետ,— ճշում էր անգլիական կապիտալը,— քանի որ այդ պատճառները հանդիսանում են միջազգային երկաթուղային ճանապարհի եկամուտների կողոպտման համար լուրջ օրի-

<sup>1</sup> «Международные отношения...», серия II, т. XVIII, ч. I, стр. 162.

<sup>2</sup> «Тифлисский листок», 1911, 8 марта.

նական արդարացում: Եթե Տրապիզոն — Թավրիզ զիծը չկառուցվի և Բաթումը չհայտարարվի ազատ նավահանգիստ, իրանական երկաթուղային ճանապարհի շահերը էապես կտուժեն և նա կծառայի միայն Ռուսաստանի շահերին»<sup>1</sup>:

Հատկանշական է, որ այս անգամ արդեն Գերմանիայի փոխարեն Անգլիան էր հանդես դալիս որպես իրանական երկաթուղիների ինտերնացիոնալիզացման կողմնակից, հայտարարելով որ «իրանական ճանապարհը միջազգային է և այդ պատճառով նրա բարեկարգման բոլոր հարցերը պետք է քննարկվեն և դիտվեն միջազգային տեսանկյունից»<sup>2</sup>:

Անտանտի մյուս դաշնակիցը՝ Ֆրանսիան ևս չէր կարող անտարբեր վերաբերվել ռուս-գերմանական բանակցություններին: Հաշվի առնելով այդ հանգամանքը, համաձայնագիրը կնքելու նախօրեին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը հանձնարարել էր Փարիզում իր դեսպան Իդվոլսկուն պրոֆիլակտիկ միջոցառումներ ձեռնարկել ընդդեմ ֆրանսիական մամուլի և քաղաքական այն շրջանների, որոնք հավանական է, որ հանդես գային ռուսական քաղաքականության դեմ անվստահություն բորբոքողների դերում<sup>3</sup>: Հավանաբար դրուսությունը այն աստիճան սպառնալից էր, որ Իդվոլսկին Փարիզից խնդրում էր ֆինանսների մինիստր Կոկովցովից մի կլորիկ գումար ֆրանսիական մամուլի գործիչներին կաշառելու համար<sup>4</sup>:

Ռուս-գերմանական Պոտսդամյան համաձայնագիրը իմպերիալիստական երկու պետությունների ժամանակավոր գործարք էր, որը չէր կարող արմատապես լուծել նրանց հակասությունները, և փոխադարձ հարաբերությունների մեջ մտցնել որևէ էական փոփոխություն:

Գերմանիան նախկին եռանդով շարունակում էր իր գրոհը անգլո-ռուսական բլոկի դիրքերի դեմ, օգտագործելով քաղաքական նոր իրավիճակին համապատասխանող պայքարի նոր մեթոդներ:

Առաջին հերթին գերմանական կառավարությունը Թուրքիայի միջոցով լայն գործունեություն ծավալեց իրանական Քուրդիստան-

<sup>1</sup> Великий железнодорожный путь из Европы в Индию. По протоколу заседания 8 февраля 1911 г. Лондонского Среднеазиатского общества («Сборник главного управления Генерального штаба», вып. XXVII, август 1911, СПб, стр. 75).

<sup>2</sup> նույն տեղում.

<sup>3</sup> «Международные отношения...», серия II, т. XVIII, ч. I, стр. 372, 394.

<sup>4</sup> նույն տեղում, էջ 357:

նում, որը Ռուսաստանի հետ ապադա պատերազմում հանդիսանալու էր կարևոր ռազմա-ստրատեգիական հենակետ: Իրանից ռուսական ներկայացուցիչներն ահազանգում էին, որ «ներկայումս հնարավոր չէ երաշխավորել, որ քրդերը մոտակա ժամանակներում չեն գտնվի Գերմանիայի և Անգլիայի անմիջական ազդեցության տակ, մի հանգամանք, որը արմատապես դեպի վատը կփոխեր մեր վիճակը այս դիրքերում, դիրքեր, որոնք սեպի պես խրված են տընտեսական նվաճումների մեջ վարպետ այդ երկու հակառակորդների հավանական մրցակցության շրջանի մեջ»:

1911 թ. վերջերին թուրքերի հեռանալուց հետո իրանա-թուրքական սահմանամերձ շրջանների այսպես կոչված «վիճելի» տերիտորիաներից, Թուրքիան Գերմանիայի գրգամաբ ուժեղացրեց այդ շրջանների մահմեդական բնակչության մեջ պանիսլամիստական քարոզչությունը: Գերմանիան առանձնապես ճարսկորեն էր օգտագործում Բալկանյան պատերազմը պանիսլամիստական գաղափարները բորբոքելու և իրանական Քուրդիստանի ու Ադրբեջանի մահմեդական բնակչության մեջ հակառուսական տրամադրություններ առաջացնելու նպատակով<sup>2</sup>:

Թուրքերի գործունեության մասին 1913 թ. մարտի 22-ին վանից Ս. Օլֆերը հաղորդում էր. «...Չնայած Թուրքիայի ներկայիս դժվարություններին, որոնք սպառնում են նրան լրիվ քայքայմամբ, թուրքերը չեն դադարում Պարսկաստանում ագիտացիա մղել Ռուսաստանի դեմ: Իհարկե այդ ագիտացիան այլևս չունի այն բացահայտ հանդուգն բնույթը, ինչպես 2—3 տարի առաջ, բայց այնուհանդերձ այն մզվում է համառությամբ և անհասկանալի հաստատակամությամբ<sup>3</sup>: 1913 թ. հունվարին Պրեոբրաժենսկին հայտնում էր, որ Թավրիզում հայտնվել են թուրքական մոլլաներ (սուֆիներ), որոնք իրենց առջև նպատակ են դրել իսլամին սպառնացող վտանգի վերաբերյալ գաղափարների տարածումով իրենց շուրջը համախրմբել հակառուսական տրամադրություններ ունեցող տեղական բնակիչներին<sup>4</sup>: Թուրքիան միաժամանակ իրանական Քուրդիստանում

1 Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой за время с 1 по 15 февраля 1913 г. № 41, Тифлис, 1913, стр. 18.

2 Сводка сведений... По сведениям к 20 декабря 1913 г. № 57, Тифлис, 1913, стр. 1, 13, 14.

3 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912—1913 гг., д. 3573, л. 229.

4 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 372, л. 20—20а.



և Ադրբեջանում մահմեդական բնակչությանը վաճառում էր մեծ քանակությամբ զենք, որը ստացվում էր Գերմանիայից<sup>1</sup>։

Նախապատերազմյան շրջանում գերմանական կառավարությանը ամեն կերպ աշխատում էր Թուրքիայի ուշադրությունը ուղղել դեպի արևելք՝ Իրան և Ռուսաստան։ 1913 թ. «Neue Freie Presse» թերթում գեներալ Ֆոն-դեր Գուլցը հանդես եկավ մի հոդվածով «Վերջին նախազգուշացում» վերնագրով, որտեղ «խորհուրդ» էր տալիս Թուրքիային ամենից առաջ վերականգնել իր ռազմական ուժերը և հորդորում էր դրանք ուղղել դեպի այն կետերը, որոնք ամենից ավելի խոցելի են։ Նրա կարծիքով կովկասյան սահմանը ամենավիրավոր կետերից մեկն է և այնտեղ պետք է անցկացնել ռազմական նշանակություն ունեցող երկաթուղիներ։

Միաժամանակ Ֆոն դեր Գուլց «փաշան» հիշեցնում էր Թուրքիային, որ Արևմտյան Հայաստանում գոյություն ունեն կենտրոնախույզ ձգտումներ<sup>2</sup>։ Գերմանիան աշխատում էր նաև արմատներ գցել իրանա-թուրքական սահմանամերձ շրջանների վիճելի տերիտորիայում։ Առաջինն այդ վայրերում ակտիվ գործունեություն ծավալեցին հետախուզական ծառայության սպաներ Ֆոն Վեյստարուլը և էրեստ Լանգեն։ Այնուհետև սահմանամերձ շրջանները ժամանեց արտաքին գործերի մինիստրության խորհրդական Ռուդոլֆ Նագուլնին<sup>3</sup>, որին հանձնարարված էր ըստ հնարավորին խոչընդոտել և արգելակել Ռուսաստանի զզոնությունից մեծացումը սահմանամերձ գոտում։ Գերմանական գործակալությունը չափազանց կարևոր նըշանակություն էր տալիս նաև վերոհիշյալ շրջաններում Ռուսաստանի հետ առևտրի բնագավառում մրցակցելու հարցին<sup>4</sup>։

Նախապատերազմյան շրջանի գերմանական քաղաքականությունն Իրանում ընդհանուր առմամբ բնորոշվում էր նրանով, որ Գերմանիան խախտում էր Պոտսդամյան համաձայնագրով Ռուսաստանի նկատմամբ իր վրա վերցրած պարտավորությունները և Հյուսիսային Իրանում ակտիվորեն հետապնդում էր տնտեսական և քաղաքական նպատակներ։

<sup>1</sup> Сводка сведений..., за время с 1 по 15 марта 1913, № 42, Тифлис, 1913, стр. 45.

<sup>2</sup> «Մշակ», 1913, հունիսի 25:

<sup>3</sup> Տե՛ս R. N a d o l n y, Mein Beitrag, Wiesbaden, 1955.

<sup>4</sup> АВПР, ф. «Персидский стол», «Б», 1912—1915 гг., д. 142, л. 595. 619—620.

Անդրադառնալով այդ հարցին Ուրմիայի փոխ-հյուպատոս Ս. Գոլուբինովը իր 1913 թ. մայիսի 7-ի դադանի նամակում գրում էր, որ թեև Պոտսդամյան հանդիպման ժամանակ Գերմանիան համաձայնվել է ճանաչել Ռուսաստանի բացառիկ քաղաքական ազդեցությունը Իրանում, սակայն գերմանացիների կարծիքով դա դեռևս իրավունք չի տալիս Ռուսաստանին նայել այդ երկրի վրա այնպես, ինչպես Բուխարայի խանության վրա<sup>1</sup>:

1914 թ. փետրվարի 17-ին Վվեգենսկին հայտնում էր, որ Շյունեմանը «Թեհրանում իր միսիայից ստացել է խիստ կարգադրություն Ուրմիայի շրջանը իր հետաքրքրությունների շրջանակի մեջ մտցնելու մասին: Անհրաժեշտ է,— ասվում էր այդ կարգադրության մեջ,— Ուրմիայում զարգացնել ինտենսիվ գերմանական գործունեություն, այնպես, ինչպես Թավրիզում, որտեղ առանց որևէ ռազմական ուժի, միայն եռանդի ու դիվանագիտական պնդումների միջոցով կատարվում է լուրջ գերմանական գործ»: Այնուհետև Վվեգենսկին շարունակում էր, որ Շյունեմանը գումարել է մի խորհրդակցություն, որտեղ որոշվել է, որ «միայն առևտրով հնարավոր չէ բարձրացնել իրենց շահերը, այլ անհրաժեշտ է Ուրմիայի շրջանում ձեռք բերել հողեր, որը հնարավորություն կտա ուժեղացնել գերմանական հետագա ազդեցությունը և գերմանացիների հետագա ներթափանցումը Ադրբեջան<sup>2</sup>:

Հյուսիսային Իրանում գերմանական ներկայացուցիչները իրենց ավստրիական համախոհների ամենակտիվ համագործակցությամբ ևռանդագին կերպով ձեռնամուխ եղան այս ծրագրի իրագործմանը: Նրանք սկսեցին Ուրմիայի շրջակայքում ձեռք բերել հողամասեր, մշակել զանազան գործարանների կառուցման և խճուղային ճանապարհների ու տրամվայի գծերի շինարարության նախագծեր:

Իրենց տնտեսական պլանները հյուսիսային Իրանում իրագործելու համար ևս գերմանացիները լայնորեն օգտագործում էին Թուրքիային: 1914 թվականի հունվարի 7-ին Պրեռարածենսկին Թավրիզից հաղորդում էր, որ Շյունեմանը գաղտնի բանակցությունների մեջ է մտել Ուրմիա լճի սեփականատեր Իմամ-ղուլի Միրզայի հետ, լճի շահագործման կոնցեսիան վերցնելու վերաբերյալ: Այդ առթիվ հնարավորություն չունենալով անձամբ ելույթ ունենալ գերմանական ձեռնարկատերերի օգտին, Շյունեմանը խորհուրդ է տալիս

<sup>1</sup> АВПР, ф. «Персидский стол», «Б», 1912—1915 гг., д. 142, л. 596.

<sup>2</sup> Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств 1878—1917 гг. Серия III, 1914—1917, М.—Л., 1933, т. 1, стр. 392—393.

ժամ-դուրի Միրզային լճի նկատմամբ իր իրավունքները հանձնել որևէ թուրքահպատակի: Եվ քանի որ թուրքական կառավարությունը Իրանի հյուսիսում Ռուսաստանի հետ կապված չէր որևիցե համաձայնագրով, դա հնարավորություն կտար Գերմանիային այդ ճանապարհով ձեռք բերել Ուրմիա լճի նկատմամբ կոնցեսիոն իրավունքները<sup>1</sup>:

Նախապատերազմյան շրջանում Գերմանիան զգալի հաջողությունների հասավ նաև հյուսիսային Իրանում իր քաղաքական ազդեցությունը տարածելու գործում: Գերմանական դործակալությունը հատուկ հանձնարարություն ուներ քաղաքական աշխատանք ծավալել այդ շրջանի բնակչության մեջ այն առումով, որ Ռուսաստանի հետ ռազմական ընդհարման դեպքում հնարավոր լինի ոտքի հանել նրան ընդդեմ ռուսական զորքերի<sup>2</sup>: Հյուսիսային Իրանում ավելի ակտիվ գործունեություն էր ծավալել գերմանական հետախուզությունը, որը հատկապես մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Թուրքիայից իրանական սահմանը տանող ճանապարհների նկատմամբ<sup>3</sup>: Այդ գործում նրան ակտիվ աջակցություն էին ցույց տալիս Իրանում թուրքական հյուպատոսները: Իրանական Ադրբեջանում և Քուրդիստանում գերմանական գործակալության գործողությունները ղեկավարելու նպատակով գերմանական կառավարությունը 1914 թ. սկզբներին Թավրիզում բաց արեց գլխավոր հյուպատոսություն, որը ղեկավարելու էր Մերձավոր և Միջին արևելքի լավագույն գիտակ լիտտենը: Վերջինս գերմանական արտաքին գործերի մինիստրության և հետախուզական կենտրոնի հանձնարարությունները իրագործում էր Շյունեմանի միջոցով, որը հանդես էր գալիս որպես «Լոկալ-Անցեյգեր» թերթի թղթակից: Նա միաժամանակ Թավրիզում թուրքական հյուպատոսության գաղտնի խորհրդականն էր և ըստ էության գերմանական և թուրքական գործակալությունների գործողությունների կոորդինացնողը:

Թավրիզի գերմանական գլխավոր հյուպատոսությունը իր հիմնադրման հենց առաջին օրերից ակտիվ պայքար ծավալեց հյուսիսային և հյուսիս արևմտյան Իրանում Ռուսաստանի տնտեսական և քաղաքական ազդեցությունը խարխլելու ուղղությամբ: Գերմանական դիվանագիտությունը նույնիսկ լիտտենի միջոցով իրանական

<sup>1</sup> «Международные отношения...», серия III, т. I, стр. 122.

<sup>2</sup> Նույն տեղում, հ. 2, էջ 143:

<sup>3</sup> ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 366, л. 120.



կառավարութեան առջև հարց հարուցեց, Ուրմիայի շրջանի բողոքական ասորիների հովանավորութունը Գերմանիային հանձնելու վերաբերյալ, որը ռուսական քաղաքական շրջանների կողմից դիտվեց որպէս նոր և ավելի վճռական քայլ Գերմանիայի քաղաքական ազդեցութիւնը Իրանում ամրապնդելու ուղղութեամբ<sup>1</sup>։

Ռուսական կառավարութիւնը բնականաբար լրջորեն անհանդրստացած էր հյուսիսային Իրանում Գերմանիայի ձեռք բերած հաջողութիւններից և հատկապես նրա հակառուսական գործունեութիւնից։ Կովկասի փոխարքա Վորոնցով-Պաշկովը արտաքին գործերի մինիստրութեանն ուղղված իր 1914 թ. մայիսի 28-ի զեկուցագրում խնդրում էր հրավիրել արտաքին գործերի մինիստրութեան հատուկ խորհրդակցութիւն, քննարկելու համար հյուսիսային Իրանում ստեղծված դրութիւնը։ Մասնավորապես նա առաջարկում էր կտրուկ միջոցառումներ ձեռնարկել գերմանական ոտնձգութիւնների դեմ ռուսական ազդեցութեան գոտում։ «Գերմանիայի ակտիվ գործունեութիւնը,— գրում էր նա,— ի շէք է դարձնում մեր վերջին տարիների ջանքերը և կայուն համոզում չի տալիս այն մասին, որ հյուսիսային Իրանը հանդիսանում է մեր քաղաքական ազդեցութեան բացառիկ գոտին»<sup>2</sup>։

Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրութեան նյութերից ակնհայտորեն երևում է, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ցարական կառավարութիւնը չունէր մշակված ու պարզ քաղաքական գիծ այն հարցում, թե ինչպէս կարելի է Իրանը հուսալի ձևով պահել հակառակորդի՝ Գերմանիայի կողմը անցնելու վտանգից։ Արդեն 1914 թ. օգոստոսի վերջին թեհրանում ռուսական դեսպանորդ Կորոստովեցը ահազանգում էր իր կառավարութեանը, որ իրանական կառավարութիւնը հետևողականորեն փնտրում է գերմանական աջակցութիւնը՝ գիմադրելու համար ռուսական ազդեցութեանը։ Նա առաջարկում էր իրանական կառավարութեան վրա թաղել նրա համակրանքը շահելու իմաստով», ավելի կոնկրետ 1911 թ. օգոստոսի 19-ի Պոտսդամյան համաձայնագիրը չեղյալ հայտարարելու գնով<sup>3</sup>։ Այդ հարցում արտաքին գործերի մինիստր Սազանովը հակված էր կարծելու, որ փոխառութեան կանխավճարի հար-

<sup>1</sup> АВПР, ф. «Персидский стол», «Б», 1912—1915 гг., д. 142, л. 675—676.

<sup>2</sup> «Международные отношения...», серия III, т. III, стр. 249.

<sup>3</sup> U Irich Gehrke, Persien in der Deutschen Orientpolitik Während des Ersten Weltkrieges, band I, Stuttgart, s. 17 (ձեռագրի իրավունքով)։

ցում ընդառաջ գնալով Իրանին, նա կկարողանա ռուս-թուրքական կոնֆլիկտի դեպքում ապահովել իրանական կառավարության բարեհամբույր դիրքը: Գերմանական և Թուրքական ինտրիգներին ղիմադրելու նպատակով Սազոնովը լոնդոնում նույնիսկ հարց բարձրացրեց, որ անհրաժեշտ է հասկացնել իրանական կառավարությանը, որ Թուրքիայի հետ ռազմական բախման դեպքում նա Ռուսաստանին և Անգլիային աջակցություն ցույց տալու դիմաց կարող է ստանալ շիիթների սրբազան քաղաքներ Քարբալան ու Նաջաֆը: Միաժամանակ նա անհրաժեշտ համարեց դառնացնել իրանական կառավարությանը, որ «ամեն տեսակ ինտրիգները Իրանի համար կարող են ունենալ միայն կործանարար հետևանքներ»<sup>1</sup>:

Վերոհիշյալ փաստերը ակներևորեն ցույց են տալիս, որ համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիան և Թուրքիան Իրանում ակտիվորեն միջամտում էին անգլո-ռուսական քաղաքականությանը: Մասնավորապես Գերմանիան ձեռք էր բերել չափազանց ուժեղ դիրքեր և անգլո-ռուսական բլոկի կողմից ճանաչվել որպես իրավահավասար երկիր:

Գերմանական իմպերիալիզմը տենդորեն հող էր նախապատրաստում հետագա իրադարձությունների համար, որպեսզի զենքի միջոցով փորձի լուծել Արևելքում իր շահերի լինել չլինելու հարցը:

В. А. БАЙБУРТЯН

## К ВОПРОСУ ОБ ИМПЕРИАЛИСТИЧЕСКОЙ ПОЛИТИКЕ ГЕРМАНИИ В ИРАНЕ В 1905—1914 гг.

### Резюме

В начале XX в., готовясь к схватке за передел мира, германский империализм начал проводить активную политику в отношении Ближнего и Среднего Востока. Дальнейшей активизации германской политики в этом районе мира способствовало осуществление проекта Багдадской железной дороги. В планах кайзеровской Германии Иран занимал особое место, так как имел важное политическое, экономическое и стратегическое значение. В статье исследуются формы и методы проникновения германского империализма в Иран в период иран-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 17:

ской революции 1905—1911 гг. и накануне первой мировой войны. В этой связи освещается борьба ведущих империалистических держав против германского проникновения в Иран, политика Англии и России в отношении Германии.

В период иранской революции Германия стремилась использовать национальные чувства и антиимпериалистические настроения иранского народа в борьбе против Англии и России.

В результате активных мер германской дипломатии позиции англо-русского блока в Иране заметно ослабли, и, наоборот, Германии удалось принудить своих соперников в ряде случаев признать за собой одинаковые с ними права в Иране.

В статье подчеркивается, что в осуществлении своих империалистических целей в Иране Германия широко использовала Турцию, которая в данном случае выступала в качестве ее союзницы. Прикрываясь «революционными» лозунгами, младотурецкое правительство проводило в отношении Ирана захватническую политику. Одновременно германо-турецкая агентура развернула широкую деятельность среди иранского населения, и в особенности среди местных племен, с целью использования их в случае войны против России и Англии.

Германский империализм, уже накануне войны, подготавливал почву, чтобы в дальнейшем силой оружия попытаться разрешить жизненно важный для него вопрос: быть или не быть его господству на Ближнем и Среднем Востоке.



ՄՈՒԼՔԱԴԱՐԱՅԻՆ ԿԱՎԱԾԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ  
ԻՐԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԿ ԿԵՍԻՆ

XIX դարի երկրորդ կեսին Իրանի սոցիալ-տնտեսական կյանքում առաջացած մի շարք փոփոխությունները իրենց անդրադարձումը ունեցան երկրի բոլոր բնագավառների վրա: Այդ ժամանակ էլ աստիճանաբար սկսում է Իրանի գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումը: Հողատիրության կապիտալիստական ձևերը և գյուղացիության կապիտալիստական շահագործումը սկսեցին, թեկուզ սաղմնային վիճակում, մուտք գործել երկրի տնտեսության մեջ: Հասկանալի է, որ Իրանի ներգրավումը համաշխարհային առևտրական ոլորտը իր հետ բերեց գյուղատնտեսության ապրանքայնության և նրա եկամտաբերության աճ, որի հետևանքով և բարձրացավ հողի գինը: Հողագործության ասպարեզում այդպիսի փոփոխությունը փաստորեն կապիտալ ներդրման նոր ոլորտ բացեց և առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները սկսեցին մեծ հետաքրքրություն ցուցաբերել դեպի հողը, քանի որ այն շոշափելի եկամուտների աղբյուր էր դառնում: Հողային հարաբերություններում ամենակարևոր տեղաշարժը խոշոր կալվածատիրության ստեղծումն էր, երբ իշխող դասակարգերի տարրեր խավերից դուրս եկած ներկայացուցիչները հսկայական հողային սեփականություններ ձեռք բերեցին. առաջացավ հողատիրության նոր ձևը, այսպես կոչված մուլքադարային հողատիրությունը, որը մեծապես տարբերվում էր հողատիրության նախկին ձևերից, ժառանգական հողատիրությունից, թիուլից և այլն:

Ֆեոդալական ազնվական դասակարգը և նրանց շահերի պաշտպան իրանական շահը նոր պայմաններում այլևս ի վիճակի չէին խանգարել անխուսափելի այդ պրոցեսը, ընդհակառակը, նրանք իրենք էլ համակերպվելով նոր պայմաններին ընդգրկվեցին ընդարձակ հողային սեփականություններ ձեռք բերելու այդ մրցավազքի մեջ:

Մուլքադարութեան ստաշացումը և նրա հետագա զարգացումը նոր էտապ էր Իրանի հողային հարաբերութիւնների պատմութեան մէջ, որը և գրավել է մի շարք ուսումնասիրողների ուշադրութիւնը:

Որոշ աղբյուրների վկայութեամբ, Տաթհ Ալի շահի թագավորութեան շրջանում, XIX դարի սկզբներին խոշընդոտներ էին ստեղծվում խոշոր կալվածատիրութեան զարգացման համար, վախենալով նրանց քաղաքական ազդեցութեան ուժեղացումից: Սակայն հետագա ժամանակներում այդ քաղաքականութիւնը հնարավոր չեղավ իրագործել: Ականատեսների վկայութիւններ կան այն մասին, թե ինչպես ազդեցիկ և պաշտոնյա անձինք բռնի կերպով, և մանր հողատերերի նկատմամբ զանազան խոշընդոտներ և արգելքներ ստեղծելով, զավթում էին նրանց կալվածքները<sup>1</sup>:

Այդ պրոցեսը, իհարկե, ընթանում էր տարբեր եղանակներով և կրում էր տարբեր բնույթ: Այդ եղանակների ուսումնասիրումը, սնշուշտ, հետաքրքիր է և կարևոր, քանի որ այն դրսևորում է երկրում տիրող սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը:

Գոյութիւն ունեցող օրենքների համաձայն Իրանում հողային ւնեւականութիւններ կարելի էր ձեռք բերել ժառանգաբար, գնումով, թագավորի կողմից արված նվիրատուութեան կամ թե ամայի հողամասը մշակելի դարձնելու եղանակով: Այդ կարգի տարբեր ձևերը տարբեր ժամանակաշրջաններում ունեցել են իրենց ավելի նեղ կամ ավելի լայն կիրառումը: Հատկապես հետաքրքիր է այն կարգը, որի համաձայն որևէ մեկը իրավունք ուներ վերցնելով որևէ սնսւպատային կամ ամայի հողամաս, ստեղծել ջրային պաշար, մշակել այն և ստացված բերքից պետութեանը հասանելիք ընդունված հարկը տալուց հետո համարվել այդ հողամասի սեւականատեր:

Մեկ հետաքրքրող ժամանակաշրջանում ապրանքա-դրամային հարաբերութիւնների զարգացման շնորհիւ լայն տարածում է գրտնում հողի առուծախը, քանի որ կապիտալի ներդրումը հողի վրա դառնում է շահավետ: Հենց այդ պատճառով էլ XIX դարի վերջին հողային դնումները լայն շափեր են ընդունում: Էգվարդ Սթեյքը իր «Վեց ամիս Պարսկաստանում» գրքում խոսում է այդ պրոցեսի մասին: Նա բնութագրում է ոմն Լութֆ Ալի խանին, որպես «մի գործնական մարդու և իր շահերը բավարար շափով հասկացող» անձնաւորութեան, որը գնում է Աղե լեռան փեշերին գտնվող Քահնա-

<sup>1</sup> محمد علی عبادی اصلاحات ارضی در ایران تهران ۱۳۴۰ ص ۲۴

գյուղը: Գյուղի համար նա վճարում է 200 թուման, կառուցում է ամրոց, որի համար ծախսում է 250 թուման, իսկ ոռոգման կանաթի համար 1000 թուման: Այդպիսով նա դառնում է այդ վայրի միակ տերը, որից գյուղացիները ստանում էին ոչ միայն սերմացուն, այլև բանող անասունները<sup>1</sup>:

Նույնպիսի մի գործարք է կատարվել Սարգահ գյուղի նկատմամբ: Դա մի ավերված, փոքր բնակավայր էր: Գտնվում է մեկը, որը այն գնում է 700 թումանով, չհաշված այն ծախսերը, որ պահանջվում էին ավերված կանաթները նորոգելու համար: Այդ ծախսերը կաղմում էին ոչ պակաս քան մինչ այդ ստացվող տասը տարվա եկամտի չափը<sup>2</sup>:

Այսպիսի փաստերի կարելի էր հանդիպել երկրի բոլոր մասերում: Անհրաժեշտ է նշել, որ արդյունաբերության բացակայությունը Իրանում սահմանափակում էր կապիտալ ներդրումների հնարավորությունները: Մյուս կողմից Իրանը վերածվել էր եվրոպական տերությունների հումքի բազայի, և կապիտալ ունեցող անձինք գերադասում էին գումարներ հատկացնել հողային սեփականություններ ձեռք բերելու և առևտրային հողագործությամբ զբաղվելու գործին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ XIX դարի վերջերին, XX դարի սկզբներին առևտրական հողագործությունը արդեն բրոշակի դեր էր խաղում երկրի ամբողջ տնտեսական կյանքում, չնայած որ առևտրային արտադրությունը դեռևս գերիշխող չէր ամբողջ գյուղատնտեսության մեջ: Առևտրական հողագործությունը, իհարկե, առաջավոր երևույթ էր Իրանի տնտեսության մեջ: Դա, անշուշտ, օգնում էր երկրի ներքին շուկայի հետագա զարգացմանը: Առևտրական հողագործությունը մյուս կողմից նպաստում էր նաև հողերի պահանջի աճին և նրանց գների բարձրացմանը: Դրան նըսպաստում էր նաև այն փաստը, որ հողագործ աշխատուժը Իրանում շատ էժան էր և գոյություն ունեցող հողային հարաբերությունների, հողը վարձակալելու եղանակների պայմաններում այն հսկայական եկամուտներ էր խոստանում հողատիրոջը: Փաստերը ցույց են տալիս, որ խոշոր հողատերերը հսկայական եկամուտներ ձեռք բերելով, այն ոչ թե ներդնում էին գյուղատնտեսության զարգացման, այլ նորանոր հողեր ձեռք բերելու համար: Ատրպետը գրում է, որ Հաջի Սադր օլ Մուլքը 300 գյուղ ուներ և տարեկան 300 հազար թու-

<sup>1</sup> E. Stack, Six months in Persia, vol. II, London, 1882, p. 256.

<sup>2</sup> Նույն տեղում:



ձան եկամուտ էր ստանում, որի մեծ մասը հատկացնում էր նոր գյուղեր ձեռք բերելուն<sup>1</sup>։

Խոշոր կալվածատերերը միաժամանակ ընդարձակ սպեկուլյատիվ դործարքներ էին կատարում, որը մեծ եկամուտների աղբյուր էր հանդիսանում։ Այս հանդամանքը նույնպես նպաստում էր նոր հողատերերի—մուլքադարների վարչական ինքնավարութայն ուժեղացմանը, որն, անշուշտ, ուղղակիորեն կապված էր հողի նկատմամբ մասնավոր սեփականութայն աճի և երկրի ընդհանուր տնտեսական կյանքում նրանց դիրքերի ամրապնդման հետ։

Մյուս կողմից Կենտրոնական իշխանութայն թուլութայն հետևանքով հողի վարձակալները աստիճանաբար անժամկետ վարձակալներից վերածվեցին ժառանգական հողատերերի և դարձան այդ հողերի փաստական տերերը։ Հաճախ մեծ ընդհարումներ էին տեղի ունենում հարևան հողատերերի միջև, որը վերջանում էր մեկի պարտութայն և նրա հողային սեփականութայնների յուրացումով։ Կառավարութայնը ի վիճակի չէր կասեցնել այդ պրոցեսը, նա միայն բավարարվում էր այնքանով, որ նախկին վարձակալները և այսօրվա կալվածատերերը շարունակում էին պետութայնը վճարել նրան հասանելիք հարկերը։ Աստիճանաբար պետութայնը ըստիսլավոն եղավ այդ եկամուտներից չգրկվելու համար սեփականատիրական փաստաթղթեր տալ նոր հողատերերի՝ վերապահելով նրանց ժառանգելու իրավունք։ Սակայն այդ ևս չէր կարող բավարարել նոր հողատերերին, որոնք շուտով այդ հողերը դարձրին առ ու ծախի առարկա։

Իրավական տեսակետից հողային այդ նոր սեփականութայնները կայուն չէին։ Հողերի առուծախը, գյուղացիութայն ունեզրկումը, վարչական ապարատի նեխվածութայնը մեծ խճճվածութայն էր ստեղծել այդ գործում. հաճախակի կարելի էր հանդիպել այնպիսի վիճակի, երբ մի որևէ հողամասի նկատմամբ սեփականատիրական հավակնութայն հանդես էին դալիս մի քանի անձինք։

Կառավարութայնը իբր իրեն էր վերապահում հողի առ ու ծախի թուլտվութայնը։ Բայց իրականում հողատերերի մեծ ուժը նահանգներում և վարչական ապարատի նեխվածութայնը առանձնապես դժվարութայն չէր ներկայացնում այդպիսի թուլտվութայն ստացումը կամ շրջանցումը։

Պետք է նշել, որ արբաբի հողերի մի մասը այն հողերն էին,

<sup>1</sup> А т р п е т, Мамед Али шах, Александрополь, 1909, стр. 36.

որոնք ժամանակին պետութեան կողմից տրվել էին առանձին մարդկանց որպես մուլք: Օրինակ, Իրրահիմ Գեհղանը վկայում է, որ Արաքի երկու խալիսե դուղերը 70-ական թվականներին տրվել էին Սամսամ օլ Մուլքին՝ որպես մուլք<sup>1</sup>:

Սակայն դարավերջին վիճակը արդեն փոխվել էր: Եթե XIX դարի կեսերին արբաբի հողերի նշանակալից մասը շահի կողմից տրված այն մուլքերն էին, որոնք յուրացվել էին, ապա դարավերջին նրանց մեծագույն մասը արդեն գնված հողերն էին: Ճիշտ է, հողի առ ու ծախ նկատվում էր նաև XIX դարի առաջին կեսին, բայց այն մեծ չափերի հասավ 1883—84 թվականներից սկսած, երբ սկսվեց խալիսե հողերի վաճառքը:

Հողային այդ կատեգորիաները արդեն դանադանվում էին, քանի որ ժառանգաբար անցած արբաբի հողերը կոչվում էին «արբաբի ղադիմ», իսկ նոր գնված խալիսեները կոչվում էին «արբաբի ջազիդ»<sup>2</sup>:

Նորանոր հողեր ղավթելու և եղած սեփականությունները ընդարձակելու գործին նպաստում էին նաև հողային սեփականությունների ռեգիստրացիայի եղանակները: Սեփականատիրական փաստաթղթերում կամ կալվածագրերում հաճախ չէր նշվում զբրանցման ենթակա հողի տարածությունը, այլ արձանագրվում էր միայն նրա սահմանները, այն էլ այնպիսի հատկանիշներով, որոնք փոփոխական էին: Այսպես օրինակ, սահման էր համարվում ինչոր ճանապարհ, ջրանցք, ցանկապատ, առվակ, անտառամաս, որոնք հեշտութեամբ կարելի էր տեղաշարժել և այդպիսով հողատարածությունը ընդարձակել: Այստեղ ծագում էր նաև մի այլ կարգի դժվարություն: Շարիաթի և տեղական սովորությունների համաձայն հողը մշակողը հանդիսանում էր հողի տերը: Այս հանդամանքի շարաշահումից դերժ մնալու նպատակով նախքան որևէ հողամաս գնելը կամ վարձակալելը պահանջում էին ներկայացնել նահանգապետի վավերագիրը այն մասին, որ հողատերը վերջին տաս տարիների ընթացքում վճարել է պետական հարկերը, իսկ եթե ինքը չի մշակել հողամասը, ապա վավերագրով հաստատել, որ նա իր հողամասը վարձով է տվել ուրիշի: Բայց դա ևս ոչ մի երաշխիք չէր տալիս: Աղբյուրները խոսում են նաև այսպիսի գեպքերի մասին. որևէ հո-

<sup>1</sup> ابراهيم دهقان تاريخ اراک قسمت دوم، ۱۳۰۰ ص ۱۷۸

<sup>2</sup> ЦГВИА, ф. 76. л. 361. г. 24.

դամաս էր գնվում ինչ-որ խանից և այն արծանագրվում: Սակայն որոշ ժամանակ հետո խանը կարող էր ասել, որ նա այդ հողամասը վաճառել է տարիներ առաջ այնպիսի գնով, որը անհամեմատ ավելի ցածր էր այսօրվա գնից և պահանջել գումարի տարբերությունը: Եթե հողի նոր տերը չհամաձայնվեր կամ ի վիճակի չլիներ այդ գումարը վճարելու, ապա խանը վերադարձնելով ստացած գումարը նորից գրավում էր հողամասը և շեղյալ համարում գործարքը: Ահա հենց նման պատճառներով էլ մանր հողատերերը ի վիճակի չէին իրենց հողային սեփականությունները պահպանել և հեշտությամբ կլանվում էին խոշոր կալվածատերերի կողմից<sup>1</sup>:

Հողային սեփականությունների խոշոր կենտրոնացումները տեղի էին ունենում տեղաշին ձևով: Այդպիսի կենտրոնացումներ էին կատարվում բարձրաստիճան պաշտոնյաների, մինչև իսկ շահի և փոխարքայի, ինչպես նաև նոր հողատերերի՝ մուլքադարների կողմից:

Այսպիսով մուլքադարները առաջանում էին արքայազներից, պաշտոնյաներից, հոգևորականներից և առևտրականներից, որոնք համակերպվելով ստեղծված դրուձյան հետ գրավել էին և շարունակում էին գրավել գերիշխող դեր երկրում՝ թե՛ նյութական և թե՛ քաղաքական տեսակետից և ստեղծում հասարակական նոր ուժ և նոր հարաբերություններ<sup>2</sup>:

Մեծ տարածություն էր կազմում շահի հողային սեփականությունը, որը փաստորեն երկրի ամենախոշոր կալվածատերն էր: Նա այդ հողերի մի մասը տալիս էր իր մտերիմներին ժամանակավոր Եգտագործման համար՝ կամ էլ տալիս էր քոչվորներին, որոնք փոխարենը զինված հեծյալներ էին տրամադրում շահի բանակին կամ պարտավորվում պաշտպանել սահմանի այս կամ այն մասը:

Շահի հողերի վրա աշխատող գյուղացիությունը գտնվում էր շատ ծանր վիճակում: Գյուղացիների գրուձյունը նույնքան ծանր էր շահի այն հողերում, որոնք բռնագրավվել և յուրացվել էին տարրեր ժամանակներում և տարբեր եղանակներով, իսկ արևելահող

<sup>1</sup> Максимович-Васильковский, Отчет о поездке по губснаторствам Западной Персии (Азербайджана и персидского Курдистана), Тифлис, 1903, стр. 27.

<sup>2</sup> Л. Ф. Тигранов, Из общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. V.



տրվել էին տարբեր մարդկանց թիուլային իրավունքով: Այդ հողերը նույնպես փոքր տարածութիւն չէին կազմում<sup>1</sup>:

Հնդարձակ հողային տարածութիւնների էր տիրում փոխարքա Սոհամեդ Ալի Միրզան: Նազեմք օլ Իսլամ Քերմանին նշում է, որ փոխարքան բացի կաշառքների և ընծանների եղանակով ձեռք բերած հողերից, բռնի կերպով նույնպես յուրացրել էր հսկայական հողային տարածութիւններ, հատկապես Թավրիզի և Սարաբի միջև ընկած շրջանում<sup>2</sup>:

Հնդարձակ հողային սեփականութիւններ ձեռք բերեց Նտար էդ Դին շահի եղբայր Զեյ էս Սուլթանը, որը իր ժառանգներին թողեց մի քանի միլիոն արժողութիւն ունեցող հողային սեփականութիւն: Նա այդ հողերը ձեռք էր բերել կամ դնումով, կամ այնպիսի փաստաթղթերով, որ իբր այդ հողերը եղել հն խալիսե և ինչ-որ ժամանակ տրվել են արաբներին<sup>3</sup>:

Այսպիսով Զեյ էս Սուլթանը 33 տարի Ֆարսի և Իսֆահանի նահանգապետ եղած ժամանակ խալիսե կամ մասնավոր հողերի ըրոնազրավման, էժան գնով գնման և այլ եղանակներով ձեռք բերած հողերով դարձավ Իրանի ամենախոշոր հողատերերից մեկը: Նրա դնած գուղերի թիվը հարյուրներից անցնում էր<sup>4</sup>:

Հողային նման սեփականութիւններ էին ձեռք բերել նաև բազմաթիվ այլ պաշտոնյաներ: Ատրպետը հաղորդում է, որ Աթաբեկ Ազամը 1500 գուղ ուներ, որից մոտ երկու միլիոն թուման եկամտ էր ստանում<sup>5</sup>: Գիլանի Լեշտնեշան համարյա ամբողջովին Այսքր Աղամ Ամին օլ Դուլեինն էր<sup>6</sup>: Գիլանի մոսթոֆին՝ Միրզա Աբդուլ Սահիրը Գիլանի ամենախոշոր հողատերերից էր: Սեփահզար Նասր էս Սուլթանեն 1894 թ. մի տվյալի համաձայն տիրում էր ավելի քան 50 հազար ծխի<sup>7</sup>: Թալիշի խան Սեյֆ օլ Մուրք Սուլթան

<sup>1</sup> А. К. Артамонов, Персия как наш противник в Закавказье, Тифлис, 1889, стр. 14.

<sup>2</sup> ناطم اسلام كرماني تاريخ بيدارى ايرانيان تهران ص ۱۳۳۳

<sup>3</sup> Ученые записки Института востоковедения, VIII, пражский сборн. М., 1953, стр. 125.

<sup>4</sup> تاريخ سرگذشت مسعودی. تهران ۱۳۲۵ ص ۲۵

<sup>5</sup> Атрпет, Мамед Али шах, Алксандрополь, 1909, стр. 79.

<sup>6</sup> ЦГВИА, ф. 76, л. 371, л. 107.

<sup>7</sup> նույն տեղում, Գ. 179, Բ. 25:

Սահմադ խանը Արդարիլի շրջանում 109 գյուղ ուներ<sup>1</sup>։ Քայինի և Սիստանի էմիրը՝ Հեշմաթ օլ Մոլթ Միր Աղամ խանը տիրում էր մոտ 324 գյուղերի<sup>2</sup>։ 1877 թ. Ղարաղաղի հրամանատար նշանակված Ռահիմ խանը տասը տարվա ընթացքում հարյուրից ավելի գյուղերի տիրացավ։ Նա սպանում էր հողատերերին կամ բանտարկում նրանց և սևփականաիրական վավերադրեր ստանալուց հետո միայն ապստում<sup>3</sup>։

Կոստզովսկին 1896 թ. հաղորդում էր, որ մեծ վեղիր Ամին օլ Մսլթը բացի հորից ստացած ժառանգական կալվածքներից, պաշտոնը սղաագործելով մի շարք գյուղեր, հենց Թեհրանում՝ մոտ 1-րդու միլիոն ռուրլի արժեցող տներ, այդիններ էր գնել<sup>4</sup>։

Տեղական վարչական անձինք նույնպես նպաստում էին հողային սեփականությունների կենտրոնացմանը։ Նրանք ընդարձակ շրջանների հարկերի հավաքման իրավունքը գնում էին և մեծ շարաշահումներ կատարում։ Քանի որ խոշոր կալվածատերերը այնքանս ցորեղ էին, որ չէին թուլատրում ոլաշտոնյա հարկահանների մուտքը իրենց կալվածքները, ապա բեռան ամբողջ ծանրութունը ընկնում էր մանր հողատերերի վրա, որոնք վերջնականապես քայքայվում էին և նրանց հողերն անցնում էին խոշոր կալվածատերերի ձեռքը։ Սա իր էությամբ արդեն պետական թալանի բնույթ էր կրում, րանի որ երկրի հողային սեփականությունների յուրացման գործին ու միայն նպաստում, այլև փաստորին մասնակցում էին պետական ոլաշտոնյաները, սկսած ամենաբարձր պաշտոնյայից մինչև ստորինը։ Սեյիդ Մորթեգա Հոսեյնի Թեհրանին գրում է, որ սահմանադրութունից առաջ նահանգապետները, մեծամեծները և ընդհանրապես պաշտոնյաները թալանում էին ժողովրդին և տարբեր պատերվակներ հորինելով հրաժարվում էին գանձված հարկերը պետությանը հանձնել։ Նրանք յուրացրել էին մեծ թվով խալիսե գյուղեր և դարձել էին խոշոր կալվածատերեր<sup>5</sup>։ Ավերյանովը նույնպես ան-

<sup>1</sup> И. А. О г р а н о в и ч, Провинции Ардабильская и Серабская, Тифлис, 1876, стр. 70.

<sup>2</sup> Уч. записки Института востоковедения, VIII, Иранские сборники, М., 1953, стр. 124—125.

<sup>3</sup> А т р п е т, Рагимхан Сардар, Александрополь, 1910, стр. 19.

<sup>4</sup> Из тегеранского дневника полковника В. А. Косоговского, стр. 122.

<sup>5</sup> مرتضى حسینی تهرانی اصول علم مالیه وقواتین مالی ایران تهران  
۱۳۳۴ ص ۱۸۳

դրագառնալուծ մահալները կառավարիչների իշխանության հարցին, գրում է, որ նրանք իրականում հանդիսանում էին խոշոր կալվածատերեր, որոնց հողերը ընդարձակ տարածություն էր կազմում: Այդ հողերի սահմանները հաճախ համընկնում էին հենց սվյալ մահալի սահմանների հետ<sup>1</sup>:

Նշանակում է վերանում էր պետական պաշտոնյայի և տեղական կալվածատիրոջ միջև եղած անջրպետը և այդ երկուսը հանդես էին գալիս մեկ դեմքով: Այս երևույթը, անշուշտ նոր երևույթ էր և իր հետ բերում էր մի շարք այնպիսի հետևանքներ, որոնք ունեին շատ հեռուն գնացող անդրադարձումներ: Նոր կալվածատերը իր ձեռքում ունենալով նաև քաղաքական իշխանություն բառիս իսկական իմաստով դառնում էր իր շրջանում, հետևաբար և իր կալվածքներում աշխատող ուսյաթների տերն ու տիրակալը:

Այսպիսով սոցիալ-տնտեսական նոր պայմանները նպաստում էին այն բանին, որպեսզի տեղական խաները դառնային հողատերեր: Տիգրանովը նշում է, որ կալվածքները նոր տերերին էին անցնում ժառանգաբար: Բայց երկիրը մշտական ներքին խռովություններից քայքայված պետք է ընդուներ նվաճման իրավունքը: Եթե վերջինը կարող էր սասանել սեփականատիրական իրավունքը, ապա ժառանգության հետ միասին առաջ էր քաշում կալվածքը օտարելու հնարավորությունը: Պետությունը փաստաթղթեր էր տալիս նոր տերերին: Այսպիսով կալվածքները դառնում էին քաղաքացիական գործարքների առարկա, որոնց մեջ ակտիվ դեր էին խաղում խաները<sup>2</sup>: Դա նշանակում էր, որ ապօրինի յուրացումները, հանձինս խաների հեշտությանը ստանում էին իրենց օրինական ձևակերպումը և օրենքի պաշտպանությունը:

Երկրի առանձին նահանգների և շրջանների հողատիրության ձևերի ուսումնասիրումը ցույց է տալիս, թե ինչպիսի շահեր էր ընդունել խոշոր կալվածատիրությունը: Ադրբեջանի հյուսիսային մասում գտնվող Մեշքինի շրջանում եղած 118 գյուղերը բոլորն էլ պատկանում էին կալվածատերերին, ընդ որում նրանցից 75-ը պատկանում էր հոգևոր ծագում ունեցողներին կամ նախկին պաշտոնյաներին: Իսկ Արաշի շրջանի 51 գյուղերը գտնվում էին երկու

<sup>1</sup> П. И. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 г. Тифлис, 1900, стр. 7.

<sup>2</sup> Л. Ф. Тигранов, Из общественно-экономических отношений в Персии, СПб, 1909, стр. 5.



կալվածատերերի ձեռքում<sup>1</sup>: Կորսունը վկայում է, որ նույն շրջանի 126 գյուղերը համարվում էին խաների սեփականությունը<sup>2</sup>: Վիճակը նույնն էր նաև Մաքվի շրջանում: Եթե դարամիջին (1853 թ.) Մաքվի խանին էր պատկանում ոչ ավելի քան 70 գյուղ ապա XX դարի սկզբներին (1905 թ.) նրան էր պատկանում արդեն 300 գյուղ<sup>3</sup>: Այնհայտ է, թե ինչպիսի աճ էր տեղի ունեցել: Քերմանի նահանգի ուշակելի հողերի մոտ 90% -ը կենտրոնացված էր խոշոր կալվածատերերի ձեռքում: Արդարիլի շրջանի 210 գյուղերից 174-ը պատկանում էր խոշոր կալվածատերերին: Աստրաբազի նահանգում կային ընդամենը 229 բնակեցված գյուղեր, որոնցից 168-ը պատկանում էր կալվածատերերին, 19-ը խալիսե էր, իսկ մնացածի մասին տեղեկություն չկա<sup>4</sup>: Ղարադաղի շրջանի մասին եղած 1880—1881 թթ. ղեկուցադրում նշված է, որ այնտեղ մոտ 46 գյուղ լրիվ արբարի էին, իսկ 13 գյուղ մասամբ արբարի<sup>5</sup>: Մալալիի մասին եղած 1879—1880 թթ. ղեկուցագրից պարզվում է, որ այնտեղ եղած 236 գյուղերից 206-ը լրիվ և 7-ը մասամբ արբարի էին: Այդ գյուղերից 6-ը պատկանում էր թուրքմեն խաներին<sup>6</sup>:

Խոշոր կալվածատիրության նման տոկոսային հարաբերությունն ույություն ուներ ոչ միայն հյուսիսային նահանգներում՝ Ադրբեջանում, Խորասանում, Գիլանում, Մաղանդարանում և Աստրաբադում, այլև կենտրոնական Իրանում և հարավային նահանգներում:

Հատկապես հետաքրքիր է հարավային Իրանում գտնվող հարուստ և բերրի նահանգ Խուզիստանի հողային հարստությունների յուրացման պատմությունը Շեյխ Խաղալի կողմից, որը ոչ միայն ամբողջ նահանգի խոշորագույն հողատերն էր, այլև նրա տերն ու տիրականը:

<sup>1</sup> ناظم الاسلام كرماني تاريخ بيدارى ايرانيان تهران ۱۳۰۳ صفحه ۸۹

<sup>2</sup> Корсун, Военный обзор персидского передового театра, Тифлис, 1909, стр. 114—116.

<sup>3</sup> Л. К. Артамонов. Северный Азербайджан, военно-географический очерк, 1899, стр. 26.

<sup>4</sup> Ученые записки Института востоковедения, VIII, Иранский сборн М., 1953, стр. 123.

<sup>5</sup> A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 156.

<sup>6</sup> նույն տեղում:

Ղաչարներին օրոք Հաֆեզիյեի, Ահվազի, Ֆալահիյեի, Մոհամա-  
 րայի և Ռամհորմոզի, ինչպես նաև ամբողջ Խուզիստանի հողերը և  
 ցուրը խալիսե էին<sup>1</sup>: Նասր էդ Դին շահը և Մոզաֆար էդ Դին շահը  
 մեծ թվով կալվածքներ էին հանձնել Նեզամ էս Սալթանեին: Նրա  
 մահից հետո այդ հողերը վաճառվեցին Շեյխին: Կառավարությունը  
 մեծ թվով հողամասեր էր տվել Շեյխի հորը և եղբորը: Այդ հողե-  
 րը նույնպես մտան նրա հարստության մեջ: Բացի դրանից մեծ  
 թվով կալվածքներ էր պետությունից ստացել հենց ինքը՝ Շեյխը:  
 Քասրավին «Խուզիստանի հինգհարյուրամյա պատմությունը» գր-  
 քում անդրադառնալով Շեյխ Խազալի հողային հարստություններին,  
 գրում է, որ Խուզիստանի բերրի հողերի ավելի քան երկու երրորդը  
 պատկանում էր Շեյխին, որից նա ստանում էր հսկայական եկա-  
 մուտներ: Ըստ գոյություն ունեցող կարգի շեյխը որպես Խուզիս-  
 տանի հարկ տարեկան քառասուն հազար թուման պետք է վճարեր  
 պետությանը: Մինչդեռ նա Խուզիստանի բնակչությունից կորզում  
 էր հինգ-վեց անգամ ավելին<sup>2</sup>: Շեյխ Խազալի հողային սեփականու-  
 թյունները շեր սահմանափակվում միայն Իրանի տերիտորիայով:  
 Նա մեծ թվով կալվածքներ ուներ Իրաքում, մինչև իսկ մի շուկա  
 Բասրա քաղաքում<sup>3</sup>:

Շեյխ Խազալը այսպիսի ֆանտաստիկ շահերի հարստություն-  
 ներ դիզելով ձեռք էր բերել նաև քաղաքական մեծ իշխանություն և  
 փաստորեն համարվում էր հարավային Իրանի միակ տիրակալը:  
 Նրա այդ իշխանությունը տևեց մինչև XX դարի 20-ական թվական-  
 ները:

Մուլքագարության մյուս աղբյուրը թիուլային հողերն էին: XIX  
 դարի երկրորդ կեսին թիուլները նույնպես աստիճանաբար վերած-  
 վեցին թիուլդարների մասնավոր սեփականությանը: XIX դարի երկ-  
 րորդ կեսին արբաբի հողերի զգալի մասը հենց այդ նախկին թիուլ-  
 ներն էին կազմում: Օրինակ Արդարիլի 97 գյուղ 1870 թվականին  
 մուլքագարային էր, որի մի մասը նախկին թիուլային հողերն էին<sup>4</sup>:  
 Բայց նոր հողատերերը—մուլքագարները սկսեցին մինչև իսկ նեղել  
 նախկին ցեղապետ, այժմ կալվածատեր դարձած խաներին, շնայած

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 253:

<sup>2</sup> احمد كسروی تاریخ یا تصدساله خوزستان تهران ۱۳۳۳ ص ۱۷۶

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 177:

<sup>4</sup> И. А. О г р а н о в и ч, Провинции Ардабильская и Серабская, Тифлис, 1876, стр. 39.

որ նրանք մասամբ շարունակում էին ներկայացնել զինվորական ուրջ ուժ:

Տիրաանովը միանգամայն համողիչ նշում է, որ խոշոր հողատերերի հողային սեփականությունների ընդարձակումը հիմնականում տեղի էր ունենում մանր հողատերերի և հողատեր գյուղացիների հաշվին, որոնք ի վիճակի չէին դիմագրելու մուլքադարների ճնշմանը: Ըստ որում եթե առաջինների նկատմամբ տեղի էր ունենում հողատիրության իրավունքի տարածումը, ապա գյուղացիների հողերի նկատմամբ հաստատվում էր մուլքադարի մասնավոր սեփականատիրական լրիվ իրավունքները<sup>1</sup>:

Սակայն կասկածից վեր է, որ մուլքադարային հողային ֆոնդը աճում էր հիմնականում խալիսեի և վակֆային հողատիրության հաշվին: Հատկապես 80-ական թվականներին խալիսե հողերի վաճառքից հետո արբաբի կավածատիրությունը նշանակալից չափով աճեց, այնպես որ աղբյուրների վկայությամբ եթե 70—80-ական թվականներին արբաբի հողերը դեռևս ամբողջ հողատիրության մեջ մեծամասնություն չէին կազմում, ապա XX դարի սկզբներին դա արդեն հողատիրության գերիշխող ձևն էր:

խալիսեի վաճառքի փաստաթուղթը ստորագրում էր ինքը շահր: Նահանգապետները միայն միջնորդի դեր էին կատարում, երբեմն էլ իրենց պաշտոնը օգտագործելով էժան գնով հող էին ձեռք բերում: Պատահում էին նաև դեպքեր, երբ նահանգապետները էժան գնած խալիսեները վաճառում էին ավելի բարձր գնով: Անսարին գրում է, որ նման ֆերմաններ ձեռք բերելու համար կատարած ծախսերը, կաշառքները և այլն, գնալով աճել էին 10, մինչև իսկ 20 անգամ<sup>2</sup>: Նա նշում է, որ սկզբում ավելի ցածր խավերի ներկայացուցիչներն էին խալիսեները դնում: Բայց երբ հողի եկամտաբերությունը բարձրացավ՝ արքայազնները, մեծամեծները և ուրիշները նույնպես մասնակից դարձան այդ մրցավազքին<sup>3</sup>:

Այսպիսով Աստրարագում խալիսե հողեր էր գնել Նասր էս Սալթանեն, որը 1900 թ. արդեն այդ կավածքների մեծ մասը իր սեփականությունն էր դարձրել<sup>4</sup>: Նույնը կարելի է ասել և Շիրալի

<sup>1</sup> Л. Ф. Т н г р а н о в, Из общественно-экономических отношений в Персии. СПб, 1909. стр. 15.

<sup>2</sup> انصاری تارخ اصفهان وری اصفهان ۱۳۲۲ ص ۶۹

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 62:

<sup>4</sup> ЦГВИА, ф. 76, 241, л. 6.



շրջանի մասին, որտեղ խալիսե հողերի մեծագույն մասը անցել էր մասնավոր անձանց ձեռքը: Այդ նույն պրոցեսը տեղի ունեցավ և Մաքվի շրջանում: 1899 թ. Կոստզովսկին հաղորդում էր, որ էլըրալ էս Սալթանեն և Մոհամեդ փաշան գնել էին Մաքվի խալիսե կավածքները<sup>1</sup>: Թեհրանի հյուսիս-արևմտյան մասում գտնվող Սավեյի գավառում մոտ 300 գյուղ նախկինում պատկանում էր պետությանը, բայց XX դարի սկզբներին դրանց շորս հինգերորդը արդեն յուրացվել էին կավածատերերի կողմից<sup>2</sup>:

Ղաջարական դինաստիայի թագավորության տարիներին երկրի մշակելի հողերի ընդարձակ տարածություններ շահերի ցանկության մեջ տրվեցին որպես թիուլներ: Պետական պաշտոնյաները, վագիրները, նալիբները, հաքեմները և ուրիշներ ընդարձակ թիուլներ էին ստանում: Թիուլներից շոշափելի քանակ տրվում էր նաև շահի ընտանիքի անդամներին: Օրինակ Խորասանի նահանգի Նիշարուրը արվել էր Նալիր էդ Դոլեին: Այդ տարիներին հատկապես լայն տարածում էր գտել տարեկան ոռոգիչ դիմաց առանձին պաշտոնյաներին տրված թիուլը: Թիուլի այդ ձևը ավելի մեծ տոկոս էր կազմում, քան մյուս ձևերը: Մյուս կողմից էլ թիուլդարները ձգտում էին իրենց թիուլները դարձնել մշտական և փոխանցելի, պետության միջամտությունը թիուլների ներքին գործերին նվազագույնի հասցնել և փաստորեն նրանց տերերը դառնալով, կարողանալ որպես ժառանգություն փոխանցել իրենց հաջորդներին<sup>3</sup>:

Այսպիսով թիուլների հանձնման գործում կարելի էր նկատել հետևյալ փոփոխությունը: Եթե XIX դարի առաջին կեսին թիուլը, որպես պետական ոռոգիչ տրվում էր իշխաններին, հոգևորականներին, պետական պաշտոնյաներին, կամ տրվում էր ինչ-որ որոշակի ժառանգության դիմաց, ապա XIX դարի երկրորդ կեսից սկսած թիուլը կարող էր ստանալ նա ով ավելին կվճարեր: Հասկանալի է, որ նոր պայմաններում հողային սեփականությունը տալիս էր մեծ եկամուտ, ուստի ունեւոր խավի տարբեր ներկայացուցիչները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում ու կաշառքի և այլևայլ եղանակներով լայնատարած թիուլներ էին ձեռք բերում:

Կորստնը խոսում է Ադրբեջանի թիուլդարների մասին: Նա նշում է, որ երբեմն ամբողջ մահալի գյուղերը տրվում էին որպես

<sup>1</sup> Նույն տեղում, գ. 374, թ. 3:

<sup>2</sup> А. Трест. Мамед Али шах, Александрополь, 1909, стр. 44.

<sup>3</sup> أحمد هومن اقتصاد کشاورزی جلد اول، تصدیرات، صفحه ۱۳۴، ۱۳۹۹

թիու: Օրինակ 1900 թվականին Մեշքինի մահալի բուր 118 գյուղերը տրվել էին որպես թիու<sup>1</sup>, կամ Մաշհադսարի բազմաթիվ գյուղերը նասր էր Դին շահը տվեց Ամին էս Սուլթանին որպես թիու<sup>2</sup>: Օգրանովիչը ուսումնասիրելով Արգաբիլի և Սարաբի շրջանների սոցիալ-տնտեսական վիճակը աղյուսակներով ցույց է տալիս հողատիրության տարբեր ձևերի տոկոսային հարաբերությունը: Նա նշում է, որ կալվածատիրական հողերը, շնչին բացառությամբ են ժառանգական սեփականություններ եղել, որոնք անցյալում պատկանելիս են եղել առանձին խաների և մոշթեհիզների: Դրանց մեծ մասը այն հողերն էին, որ շահի կողմից տրվել էին որպես թիու՝ նրանցից ստացվող եկամուտները գանձելու համար, որոշակի ծառայության դիմաց կամ վարձատրության փոխարեն<sup>3</sup>:

Ինչպես ասացինք շնայած պետության կողմից տրված այդ կալվածքները շարունակում էին կոչվել թիու, սակայն նոր պայմաններում թիուդարները փաստորեն այդ հողերի տեղն ու տնօրինն էին: Այդ հողերը պետությունից ստանալով նրանք սկզբից եեթ նպատակ էին հետապնդում դրանք յուրացնել: Այսինքն թիուներ ձեռք բերելը դառնում է խոշոր կալվածատերերի ձեռքում հողային սեփականություններ կենտրոնացնելու եղանակներից մեկը: Այս հանգամանքը սկզբում որոշ չափով անհանգստացնում էր պետությանը, որը այդպիսով ղրկվում էր իր եկամուտներից: Բայց շուտով հենց ինքը կառավարությունը շարունակելով հարկերի բարձրացման եղանակով հոգալ իր դրամական մեծ կարիքները ձեռնամուխ եղավ այդ հողերի վաճառքին, հաճախ հենց իրենց թիուդարներին, այն էլ կալվածքների արժեքի ոչ ավելի քան 5—10 տոկոսի գնով:

Ուրեմն պարզորեն նկատվում էր, որ նոր պայմաններում թիուլային հողատիրությունը այլևս իրեն չէր արդարացնում և բնականաբար այն իր տեղը պետք է զիջեր մասնավոր հողատիրությանը կամ մուլքադարությանը, մի պրոցես, որը տեղի ունեցավ XIX դարի երկրորդ կեսին և աստիճանաբար թիուլը դադարեց գոյություն ունենալ:

<sup>1</sup> Н. Корсун, Военный обзор персидского передового театра, Тифлис, 1909, стр. 114

<sup>2</sup> مرتضى حسینی دبرانی... صفحه ۱۷۸

<sup>3</sup> И. А. Огранович, Провинции Персии Ардабильская и Серабская, 1875, стр. 39

Այստեղ, իհարկե, պետք է անել հետևյալ վերապահությունը: Չնայած XIX դարի վերջերին թիուղարներից շատերը փաստորեն արդեն այդ կալվածքների մասնավոր սեփականատերերն էին, սակայն, իրավական տեսակետից որոշ սահմանափակումներ շարունակում էին գոյություն ունենալ: Հենց այդ պատճառով էլ խալիսենների վաճառքի ժամանակ թիուղարները էժան դնով իրենց տրամադրության տակ եղած հողերը գնեցին, որպեսզի լրիվ սեփականատեր լինեն<sup>1</sup>:

Այսպիսով հողային սեփականությունների և կալվածքների խոշոր կենտրոնացումները այնպիսի շահերի հասան, որ XX դարի սկզբին առանձին կալվածատերեր տիրում էին ավելի քան 1200 դյուղերի<sup>2</sup>, իսկ պետության սեփականության ներքո ամբողջ կրկնում մնացել էր ընդամենը 1345 դյուղ<sup>3</sup>:

Հողային սեփականությունների այսպիսի կուտակումներ աննախադեպ էր Իրանի հողատիրության պատմության մեջ:

Ինչպես ասացինք հողային մեծ սեփականություններ էին ձեռք բերում նաև բարձր հոգևորականությունը, որը տիրելով հողային ընդարձակ տարածությունների փաստորեն վերածվում էր խոշոր մասնավոր կալվածատիրոջ: Մինչևիսկ քաղաքաբնակ բարձր հոգևորականներից շատերը, որոնք կոչվում էին մոջթեհիդներ, սկսեցին պետությունից, առանձին խաներից և կալվածատերերից գյուղեր և թիուղներ գնել և կարճ ժամանակում դարձան խոշոր կալվածատերեր: Թեհրանի, Քավրիդի և Իսֆահանի մոջթեհիդների հողային սեփականությունները աճել էին շորս անդամ և նրանցից յուրաքանչյուրի գնած գյուղերի թիվը 50—200-ի էր հասնում<sup>4</sup>: Գիլանի հայտնի մոջթեհիդ Հումամին մի քանի հարյուր գյուղերի էր տիրում և դրանցից ստացած մթերքները վաճառում: Սաբակարի մոջթեհիդ Հաջի Միրզա Իբրահիմը իր կալվածքներից ստանում էր տարեկան մոտ 200,000 թուման<sup>5</sup>: XIX դարի վերջին Քավրիդի մոջ-

1 Л. Ф. Тигранов, Из общественно-экономических отношений в Персии, Тифлис, 1905, стр. 84.

2 Атрпет, Мамед Али шах, Александрополь, 1909, стр. 135.

3 مسعود كيهان جغرافياي مفصل ايران تهران ۱۳۱۱ جلد سوم  
صفحه ۱۳۸

4 Атрпет, Указ. соч., 1909, стр. 137.

5 ЦГВИА, ф. 76, д. 197, л. 121—122.



թևհիդ Միրզա Զալադը իր սեփականութեան տակ ունեւր մոտ 200 դյուղ<sup>2</sup>։

Բարձր հոգևորականութիւնը վերածվում էր խոշոր կալվածատերերի, օգտագործելով մինչևիսկ հանդանակութիւնների և այլ նվիրատուութիւնների եղանակով կուտակված գումարները։ Նրանք այդ գումարները շրջանառութեան մեջ էին գցում և նորանոր հողային սեփականութիւններ ձեռք բերում։

Այսպիսով, որոշ իմաստով փոխվում էր նրանց սոցիալական դիրքը և նրանք այլևս հավատալիալ շրջանների վրա չէին կարողանում պահպանել իրենց նախկին ազդեցութիւնը։ Ժողովուրդը ներանց անվանում էր կեղծ մոշթեհիդներ, քանի որ նրանք խոսելով հեղեղ բարձր գաղափարներից իրականում գյուղացիներին շահագործում էին նույնպիսի ուժգնութեամբ, ինչ աշխարհիկ կալվածատերերը, դեռ գուցե ինչ-որ շափով ավելին։

XIX դարի երկրորդ կեսին քոչվոր վաշկատուն ցեղերը Իրանում դէռևս շոշափելի թիվ էին կազմում։ Պետութիւնը մինչ այդ հողեր էր հատկացնում ցեղերին՝ իրեն վերապահելով այդ հողերի գերագույն սեփականատիրական իրավունքը։ Հողը տնօրինում էր ամբողջ ցեղը և ցեղապետը չէր կարող իր հայեցողութեամբ այն վաճառել։ Բայց ապրանքա-գրամային հարաբերութիւնների դարգացումով այդ վիճակը փոխվեց և ցեղի ազդեցիկ մարդիկ սկսեցին հողամասերը յուրացնել։ Հասկանալի է, որ մեծ թվով անասունների կենտրոնացումը խաների և ցեղապետերի ձեռքում, փաստորեն նրանց դարձրեց արոտավայրերի տերը, որոնք ձևականորեն շարունակում էին համարվել ցեղի սեփականութիւնը։

Փաստերը ցույց են տալիս, որ արդեն XIX դարի կեսերին այլևս չէր կարելի հանդիսւել թեկուզ մեկ ցեղապետի, որը բացի մեծ թվով անասուններից և նրանց արոտավայրերից չտիրեր նաև նստակյաց գյուղերի՝ իր մշակելի հողերով։ Ցեղերի նստակյացութեան հետ միասին ցեղերի պետերը վերածվում էին նոր գյուղերի տերերի։ Օրինակ, Նամինի խանութեան 129 գյուղերը, որտեղ նստակյաց էին դարձել ցեղերը, գտնվում էին իլբեկների սեփականութեան ներքո։ 1859 թ. պետութեանը մի ֆերմանով թուլլատրում էր, որ քոչվոր ցե-

1 П. Н. Огородников, Страна Солнца, СПб, 1881, стр. 91.

2 Г. Каэм, Персидская земля, ...Красноводск 1914, стр. 35.

3 Л. К. Артамонов, Персия как наш противник в Закавказье, Тифлис, 1889, стр. 36.

ղերին տրված հողերը նրանց պետերի սեփականությունը դառնան՝ և նաները և բեկերը այդ ֆերմանից օգտվելով, ցեղերին պատկանող հողերը իրենց սեփականությունը դարձրին: Բայց դա, իհարկե, դեռևս համատարած չէր: Զինովևը հայտնում է, որ 1879—1881 թթ. Գիլանում բնակվող ցեղերի տրամադրության տակ եղած հողերը անցել էին ցեղապետերի սեփականության ներքո<sup>2</sup>: Լահիջանում 192 գյուղից 42-ը, Շաֆթում՝ 26-ից 12-ը, Ֆումենում՝ 110-ից մոտ 30-ը խաներին էին պատկանում<sup>3</sup>: Բախտիարի ցեղապետը արդեն համարվում էր Իրանի ամենախոշոր կալվածատերերից մեկը:

Այսպիսով քոչվոր ցեղերի նստակյաց դառնալու պրոցեսը այնքան արագ էր տեղի ունենում, որ XIX դարի վերջին արդեն իլյաթի կամ համացեղային հողեր պահպանվել էին միայն լեռնային որոշ շրջաններում: Ցեղապետերը և ազդեցիկ անձինք աստիճանաբար գրավել էին իլյաթի հողերը և վերածել դրանք մասնավոր սեփականության: XX դարի սկզբներին իլյաթի հողերը երկրի մշակելի հողերի ֆոնդում արդեն շնչին տոկոս էին կազմում:

Ինչպես ասվեց XIX դարի երկրորդ կեսին մեծ թվով առևտրականներ նույնպես հողային սեփականություններ ձեռք բերեցին:

Օտարերկրյա կապիտալը սնանկացրեց Իրանի արհեստային արդյունաբերությունը և այդ ասպարեզում գործող անձինք սկսեցին զբաղվել գյուղատնտեսությամբ: Օրինակ, Անսարին վկայում է, որ արհեստներից հեռացած և օտարերկրյա մրցակցությանը շղթմանալով առևտրից հեռացած շատ իսֆահանցիներ, սկսած 90-ական թվականներից սկսեցին գյուղատնտեսությամբ զբաղվել: Ներքանք իրենց ամբողջ ունեցվածքը վաճառելով հողեր էին ձեռք բերում, կանաթներ էին փորում և աշխատում էին հողը մշակել առավելագույն չափով<sup>4</sup>:

Արդյունաբերությունը զարգացած չլինելու պատճառով մեծահարուստները նույնպես իրենց կապիտալը ներդնում էին գյուղատնտեսության մեջ:

<sup>1</sup> عبدالله مستوفی شرح زندگانی من یا تاریخ اجتماعی واداری دوره قاجاریه تهران ۱۳۲۴ جلد اول، صفحه ۱۲۵

<sup>2</sup> И. А. Зиновьев, Статистические сведения о провинциях Гилян и Шахруд-Вастам, СПб, 1887, стр. 24.

<sup>3</sup> նույն տեղում, էջ 17:

<sup>4</sup> انصاری تاریخ اصفهان وری اصفهان ۱۳۲۲ صفحه ۵۷

1903 թ. ռուսական հյուպատոսը Իսֆահանից հաղորդում էր, որ վերջին 20 տարիների ընթացքում մասնավոր հողատիրությունը Իսֆահանի շրջակայքում շատ էր զարգացել: Իսֆահանում քիչ ունևոր մարդկանց կարելի էր հանդիպել, որ կենջանում, Ֆերիդունում և մինչևիսկ Չահարմահալում ինչ-որ հողամաս չունենար<sup>1</sup>:

Հողատիրության այս նոր ձևը կամ մուլքադարությունը, ինչպես տեսնում ենք, արդեն իրենից ներկայացնում էր սոցիալական նոր ուժ: Դա իր հետ, անշուշտ, բերում էր նաև կապիտալիստական հարաբերությունների զարգացման նախադրյալներ<sup>2</sup>:

Այսպիսով խոշոր կալվածատիրությունը այնպիսի շափերի էր հասել, որ որոշ դիտորդներ նշում էին, որ կարծես թե ամբողջ Իրանի ժողովուրդը բաղկացած էր երկու դասակարգերից՝ խան-կալվածատեր խոշոր հողատերերից և անհող հասարակ ժողովուրդից: Ըստ որում չնայած գյուղացին ուներ անձի ազատություն, սակայն կատարյալ հողազրկության պայմաններում նա ամբողջովին կախված էր կալվածատիրոջից, քանի որ միայն այգպիսով նա ի վիճակի էր գոյությունը պահպանել<sup>3</sup>:

Իսկ ռուս բժիշկ Ֆիլատովը, որը երկար տարիներ աշխատել էր Իրանում, անդրադառնալով հողատիրության հարցին նշում է, որ այդ ժամանակ ամբողջ Իրանը «իրենից ներկայացնում էր առանձին կալվածատերերի սեփականությունը»<sup>4</sup>:

Հողային սեփականություններ ձեռք բերելու մրցավազքը վերաբերում էր ոչ միայն իրանական շահագործող դասակարգերի տարբեր շրջաններին, այլև օտարերկրյա կապիտալին: Օրինակ Կայեմը դրում է, որ ինքը Ռուսաստանից Իրան էր ճամփորդել, որպեսզի ուսումնասիրեր այնտեղ ռուս մեծահարուստների կողմից հողային սեփականություններ ձեռք բերելու նպատակահարմարությունը, կապիտալ ներդրումների շահավետությունը: Նա նշում է, որ իր դիրքը գրում է, որպեսզի «գոնե մի քիչ ծանոթացնի իրանական հողերով հետաքրքրվող մարդկանց, արդյունաբերության զարգացման համար այգ երկրամասի հարստությունների, այնտեղ իշխող կարգերի, մշակելի հողեր ձեռք բերելու հնարավորությունների

<sup>1</sup> АВПР, ф. Персидск. стол, д. 3869, л. 368.

<sup>2</sup> М. Павловнч, Экономическое развитие и аграрный вопрос в Персии XX в. М., 1921, стр. 20.

<sup>3</sup> Максимович-Васильковский, Отчет о поездке по губерпаторствам Западной Персии... Тифлис, 1903, стр. 25.

<sup>4</sup> П. Филатов, Письма из Персии, Одесса, 1909, стр. 109.



և արլճի մասին»<sup>1</sup>։ Արդեն XX դարի սկզբներին ռուսահայատականերին սլատկանող հողային տարածությունները փոքր թիվ չէին կաղմում։ Այդ սեփականությունները շարունակեցին գոյություն ունենալ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Անհրաժեշտ է կանգ առնել մեկ հարցի վրա ևս։ Դա ջրի և նրա սեփականության հարցն էր Իրանում։ Զուրը հանդիսանում էր Իրանի գյուղատնտեսության հիմնական պրոբլեմներից մեկը։ Զրառատ գետերի պակասը, տեղումների ցածր մակարդակը, հատկապես կենտրոնական և հարավային Իրանում, գյուղատնտեսությունը մեծ մասամբ դարձրել էր ջրովի, ուստի ոռոգումը շատ մեծ նշանակություն ուներ։ Ոռոգման հիմնական եղանակներից մեկը հանդիսանում էր կսնաթային սիստեմը, որը մեծ ծախսեր էր պահանջում։

Իրանում ոչ միայն հողը, այլև ջուրը մասնավոր սեփականություն էր։ Շատ տեղերում խոշոր կալվածատերերը բաղմաթիվ գյուղերի և ընդարձակ հողամասերի տիրելով, տիրում էին նաև ջրին։ Ունեւոր խավի երկակի այս սեփականատիրությունը, այսինքն հողին և ջրին տիրելը որոշակի փոփոխություն էին մտցնում ագրարային հարաբերություններում, այն էլ հօգուտ կալվածատիրոջ և ի վնաս գյուղացու։

Կորսունը գրում է, որ մուլքադարները բացի հողից տիրեցին նաև ջրին. որը նոր եկամուտների աղբյուր էր նրանց համար։ Այսպիսով ոռոգվող հողերի վարձակալման պայմաններից անկախ մուլքադարները իրենց մասնավոր սեփականատիրական իրավունքները տարածում էին նաև ոռոգման աղբյուրների վրա, թեկուզ այն կատարվեր գետից<sup>2</sup>։

Առանց ջրի հողը ընդհանրապես արժեք չուներ և վաստորեն որևէ հողամասի դինը որոշելիս նկատի էր առնվում ջրի այն քանակը, որը այդ հողը մշակելի էր դարձնում։ Հաճախ էր պատահում, որ որևէ հողամասի ոռոգման համար անհրաժեշտ ջրին վճարվում էր անհամեմատ ավելի մեծ գումար, քան հողամասի համար<sup>3</sup>։

Հանրի Ռենն Դը Ալեմանը գրում է, որ մշակելի հողի դինը կախված էր ջրի քանակից և հողի բերրիությունից։ Որևէ կալված-

<sup>1</sup> Г. Каэм, Персидская земля или «Новая апельсинная», Красноводск, 1914, стр. IV.

<sup>2</sup> Корсун, Военный обзор персидского передового театра, Тифлис, 1909, стр. 100.

<sup>3</sup> М. Л. Томара, Экономическое положение Персии, СПб, 1895, стр. 5.

քի գինը այսպիսով կարող էր կես միլիոն ֆրանկի հասնել, բայց կարող էր և եկամուտների քչության պատճառով մի քանի հազար ֆրանկից ավելին չլիներ<sup>1</sup>։

Հենց այս պատճառով էլ խաները և խոշոր կալվածատերերը բացի հողային սեփականություններից ձեռք էին բերում նաև ջրային սեփականություններ և ջրի օգտագործման բնագավառում մենաշնորհը իրենց ձեռքը վերցնում։ Սա մի հանգամանք էր, որը ուժեղացնում էր գյուղացու կախումը հողի և ջրի տիրոջից։

Ջրի նշանակության տեսակետից հետաքրքիր է անդրադառնալ նաև հետևյալ երևույթին։

Արդեն նշեցինք, որ մասնավոր սեփականությունը ձեռք էր բերվում ժառանգարար, գնումով և պետական հողերի յուրացումով։ Բայց հողային սեփականություններ ձեռք բերելու գործում նշանակալից տեղ էր գրավում նաև ամայի հողերի յուրացումը, որը Իրանում շոշափելի տարածություն էր զբաղեցնում։ Ով որ որևէ ամայի անապատային հողամաս ոռոգելով մշակելի դարձներ, նա պետությանը համապատասխան հարկ վճարելով դառնում էր նրա լիիրավ սեփականատերը<sup>2</sup>։

Չնայած շարիաթի նորմաների համաձայն արգելվում էր բնական ավաղանների ջրի առ ու ծախը, սակայն շատ գետեր և առուներ ունեին առանձին տերեր, որոնք ջրի առևտրով էին զբաղվում։

Այսպիսով XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին մուլլադարային տիպի հողատիրությունը մեծ չափերի հասավ։ Որոշ աղբյուրների համաձայն XX դարի սկզբներին Իրանի հողային սեփականությունների ընդհանուր քանակի 66—68%—ը կազմում էր մուլլադարային սեփականությունը<sup>3</sup>։

Բայց անհրաժեշտ է նշել, որ չնայած մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Իրանում գերիշխում էր խոշոր հողատիրությունը, սակայն, հողօգտագործումը շարունակում էր մնալ տրոհված և մանր։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարձակալման սխստեմի զարգացումը տեղի էր ունենում մասնավոր սեփականու-

<sup>1</sup> هادی زنده دامانی سفرنامه ازخراسان تا بختیاری تهران ۱۹۰۶ صفحه ۷۳

<sup>2</sup> М. Л. Томара, Ук. соч., СПб, 1895, стр. 4.

<sup>3</sup> Сенджаби, К изучению аграрного вопроса в Персии, Баку, 1930, стр. 15—16.

թյան աճի և ծաղկման հետ զուգահեռ: Դրա հետ կապված էլ մուլ-բաղարների եկամուտները մեծանում էին ոչ թե վարձակալման սիստեմի աճի հետ, այլ դա կատարվում էր ի հաշիվ ունետայի աճի: Առաջվա պես գյուղացին շարունակում էր հողը մշակել: ամենապրիմիտիվ միջոցներով: Նոր պայմաններում փոփոխությունը կայանում էր նրանում, որ նա ստիպված էր ավելի շատ աշխատել և ավելի նեղ ապրել:

Բիշոփը նշում է, որ մեծահարուստները և կալվածատերերը գլխավորապես ապրում էին քաղաքներում: Հազվագյուտ էր պատահում, որ նրանցից որևէ մեկը գյուղում ապրեր: Հարուստ և բազմաթիվ գյուղերի սեփականատեր կալվածատերերը բնակվում էին Թեհրանում, Քերմանշահում կամ Իսֆահանում: Նշանակում էին մի ներկայացուցիչ, այսպես կոչված նասր, որը կառավարում էր նրա կալվածքները, կարգավորում վարձակալների գործերը և գանձում եկամուտները<sup>1</sup>:

Այսպիսով՝ խոշոր կալվածատերերը կազմելով հողատերերի շնչին տոկոսը տիրում էին երկրի հողային հարստությունների մեծ մասին: Խոշոր կալվածատերերը XIX դարի վերջին բռնագրավեցին նաև համայնական կամ «Ումումի» կոչվող հողերը:

Ինչպես նշեցինք երկրում գերիշխում էր խոշոր հողատիրությունը: Սակայն չպետք է ենթադրել, որ հողատիրական դասակարգը միատարր էր: Նա, անշուշտ, կազմված էր սոցիալական տարբեր խմբերից, որոնք մի շարք հատկանիշներով տարբերվում էին միմյանցից: Այստեղ կարելի էր բնորոշ կերպով տեսնել երեք հիմնական խումբ. խոշոր հողատերերը, միջին հողատերերը և մանր հողատերերը: Աղբյուրները վկայում են, որ խոշոր հողատերերը, որոնք կազմում էին բոլոր հողատերերի մեկից երկու տոկոսը, տիրում էին ամբողջ մշակելի հողերի ավելի քան կեսին: Միջին հողատերերը կազմում էին բոլոր հողատերերի մոտ 30% և աիրում էին մշակելի հողերի մոտ 15%-ին: Նրանց շարքերում էին մեծ մասամբ նախկին թիրուղարները, առևտրա-վաշխառուական շրջանների ներկայացուցիչները, պետական պաշտոնյաները և միջին հոգևորականության ներկայացուցիչները: Մանր հողատերերը կազ-

<sup>1</sup> I. B. Bishop. Journeys in Persta and Kurdistan, vol. II, London, 1891, p. 251.



ում էին բոլոր հողատերերի մոտ 70 տոկոսը և տիրում էին մշակելի հողերի մոտ 30 տոկոսին<sup>1</sup>։

XIX դարի երկրորդ կեսին մանր հողատերերի կամ խորդեմալեքների կազմը արմատապես փոխվեց։ Ապրանքա-դրամային հարաբերությունների դարգացման և տարբեր խավերի ներկայացույիչների հողեր ձևք բերելու հետևանքով առաջացավ խորդեմալեքների նոր խումբ։ Այդ խորդեմալեքները դուրս էին եկել առևտրականների, հոգևորականների, պաշտոնյաների և վաշխառուների խալիերից։ Էդվարդ Մթեյքը նշում է, որ մեծ թվով կալվածքների տիրումը արբաբների կողմից, ինչպես օրինակ Կավամի, Շիրազի Մուշիրիի կամ Ֆիրուզբադի Իլխանի կողմից դեռևս չէր նշանակում, որ խորդեմալեքներ չկային։ Կային նաև հողատերեր, որոնք ընդամենը մեկ դուռ ունեին, ինչպես Զավաքանը կամ Շալուդանը։ Այդտեղ գյուղացիները ավելի շատ անկախություն ունեին, քանի որ նրանք ավելի պակաս զորեղ կալվածատիրոջ տնօրինության տակ էին<sup>2</sup>։

Ինչպես արդեն նշեցինք մանր կալվածատերերին էին պատկանում մշակվող հողերի մոտ 30 տոկոսը։

Խորդեմալեքային գյուղերի մասին ուշագրավ տվյալներ են հաղորդվում 1880—1881 թթ. Ղարաղանի մասին եղած զեկուցագրում։ Այնտեղ կային երեք լրիվ կամ մասամբ խորդեմալեքային գյուղեր 50 ընտանիքից պակաս բնակչությամբ, չորս լրիվ կամ մասամբ խորդեմալեքային գյուղեր 50—100 ընտանիքից բաղկացած, երեք այդպիսի գյուղեր 100—200 ընտանիքով և մեկ խորդեմալեքային գյուղ ավելի քան 200 ընտանիքով<sup>3</sup>։ Բայց տեղեկեցրեցին էր, որ խորդեմալեքային գյուղերը կուլ էին դնում խոշոր հողատերերին։ Օրինակ՝ մի շրջանում, որտեղ կային չորս լրիվ խորդեմալեքային և 10 մասամբ խորդեմալեքային գյուղեր, կարճ ժամանակում ձեռքից ձեռք անցնելով յոթը դարձան արբաբի, երեքը գնեցին Շահսևանները և երեքն էլ նասիր օլ Մուլքը<sup>4</sup>։

<sup>1</sup> И. А. Зиновьев, Статистические сведения о провинциях Гилян и Шахруд-Бастам, СПб, 1887, стр. 13—28.

<sup>2</sup> E. Stack, Six months in Persia, vol. II, London, 1882, p. 254.

<sup>3</sup> A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 156.

<sup>4</sup> նույն տեղում։

խորդեմալեքային գյուղերի յուրացման գործին մասնակցում էին նաև հոգևորականները: Այդ տեսակետից հետաքրքիր է հետեւյալ փաստը. Սեմնանի և Դամղանի շրջաններում կասկերտ գյուղը ժամանակին խորդեմալեքային էր: Բայց հետագայում այն նվիրվեց Մաշհադի Իմամ Ռեզայի մզկիթին: Սակայն այն երկար ժամանակ շարունակում էր խորդեմալեքային համարվել: 70 թվականին, երբ երկրում սով էր, մզկիթում գտնվում է գյուղի նվիրատուության փաստաթուղթը և գյուղը վարձով է տրվում նույն գյուղի բնակիչ շորս ավագների: Գյուղը տարեկան 1300 թուման կանխիկ և 100 խարվար հացահատիկ եկամուտ էր տալիս: Դրանից 100 թուման կանխիկ և 90 խարվար հացահատիկ տրվում էր պետությանը, 10 խարվարը ծախսվում էր տեղական նպատակներով, իսկ մնացած 1200 թումանից 600-ը մուծվում էր մզկիթի գանձարանի<sup>1</sup>:

Կային մանր հողատերեր, որոնց հողերի տարածությունը կազմում էր 1-ից մինչև 30 ջարիք: Կային շրջաններ, որտեղ որևէ գյուղ ուներ մի քանի տեր: Հաճախ մանր այդ հողատերերի վիճակը մոտենում էր գյուղացի-հողատերերի դրուժյանը<sup>2</sup>: Իսկ գյուղացի խորդեմալեքների վիճակն էլ առանձնապես չէր տարբերվում ուրա-գյուղացու վիճակից:

Հենրի Ռենն Դը Ալեմանը գրում է, որ գյուղացիներին պատկանող հողամասերի թիվը շատ քիչ էր: Հաճախ պատահում էր, որ գյուղացին մի փոքր հողամաս էր ունենում որևէ գյուղում: Օրինակ, Արաքի շրջանում այդպիսի հողամասեր ունեցող, կամ խորդեմալեք կոչվող գյուղացիները համեմատաբար քիչ չէին<sup>3</sup>:

Խորդեմալեքների մոտ 65%-ը չքավորներ էին: Այսպես օրինակ, XX դարի սկզբներին մինչև երկու դեսյատին հող ունեցող չքավոր գյուղացիները կազմում էին 68%: 2-ից մինչև 20 դեսյատին հողամաս ունեցող միջակ գյուղացիները կազմում էին բոլոր գյուղացիական տնտեսությունների 12%-ը: Մնացած 20%-ը կազմում էին հողազուրկ գյուղացիները՝ բատրակները<sup>4</sup>: Հաճախ կարելի էր հանդիպել այնպիսի գյուղերի, որոնք պատկանում էին մինչև 100 տե-

1 ЦГВИА, ф. 76, д. 213, л. 7.

2 И. А. Зпиковъев, Статистические сведения о провинциях Гилли и Шахруд-Бастам, СПб, 1887, стр. 28.

3 هانری رنه دامانی صفحه ۷۳

4 «Биолетень прессы Среднего Востока», 1928, кн. 6—7, стр. 32.

րևրի: Օրինակ, Զարանգի հովտի Շադրուզ գյուղի հողերը պատկանում էին մոտ 700 տերերի<sup>1</sup>: Այդ տիպի գյուղերը կոչվում էին «ռա-լալի»: Այստեղ պատահում էր, որ որպես հողատեր հանդես էր գալիս առանց լրացուցիչ աշխատուժի օգնության հողը մշակող գյուղացիները: Բայց դա հազվադեպ էր: Մազանդարանում, Նասր էդ Գին շահի ճամփորդության ժամանակ, 1875 թվականին 53 գյուղերից միայն մեկն էր ռալալի: Նույն վիճակն էր տիրում նաև երկրի այլ մասերում: Օրինակ, Ուրմիայի շրջանում խորդեմալեքային հողերից միայն 26% -ն էր գյուղացիներինը: Գիլանում, Շիրազում և այլ շրջաններում նույնպես խորդեմալեքները գլխավորապես գյուղացիներն էին<sup>2</sup>: Բայց կային նաև տոկոսային այլ հարաբերություններ: Օրինակ, Քաշանի շրջանի 360 գյուղերից 160-ը գյուղացիական էր<sup>3</sup>:

Ավերյանովը նշում է, որ Ադրբեջանում գյուղացի հողատերեր համարյա չկային, միայն Արդաբիլի շրջանում կային փոքրաթիվ հողատեր գյուղացիներ, որոնց ինչ-որ ձևով հաջողվել էր հողային սեփականություն ձեռք բերել<sup>4</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ռալալի հողերը չպետք է շփոթել գյուղացիների ունեցած, այսպես կոչված, տնամերձ հողերի հետ: Ռալալի հողերը ավելի լայն տարածություն էին կազմում քան վերջիններս:

Խոսելով գյուղացու տնտեսության անկայունության մասին Կորսունը գրում է, որ կարելի էր խանից ու մոլլայից որևէ հողամաս դնել, սակայն դա դեռ գյուղացուն սեփականատեր չէր դարձնում: Խանը կարող էր դալ գյուղացու մոտ և ասել, որ այդ հողամասը նա մի քանի տարի առաջ վաճառել է ցածր գնով, իսկ այժմ դինը բարձրացել է և պահանջել գնի տարբերությունը: Եթե գյուղացին չհամաձայնվեր, ապա նախկին տերը վերադարձնելով ստացած գումարը նորից տիրանում էր հողամասին<sup>5</sup>:

<sup>1</sup> S. Stack, Six months in Persia. vol. II, London, 1882, p. 260.

<sup>2</sup> ЦГВИА, ф. 76, д. 236, л. 53—54.

<sup>3</sup> Отчет о поездке по Персии капитана генерального штаба Томшова в 1900 г. Тифлис, 1902, ч. I, стр. 62.

<sup>4</sup> П. И. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1889 г., Тифлис, 1900, стр. 19.

<sup>5</sup> Корсуни, Военный обзор персидского передового театра. Тифлис, 1908, стр. 31.



Ամփոփելով, կարելի է նշել, որ XIX դարի երկրորդ կեսին Իրանի հողատիրության բնույթի մեջ ամենաաչքի ընկնող փոփոխությունը հանդիսանում է մուլքադարական հողատիրության առաջացումն ու զարգացումը: Սա արդեն հողի մասնավոր սեփականությունն էր, որը մեծապես տարբերվում էր ֆեոդալական հողատիրությունից: Դա իր հետ բերում էր հողային սեփականության էության փոփոխություն, այսինքն նրա կապիտալիզացիան և շահագործման եղանակների փոփոխությունը:

Г. М. ЕГАНЯН

## РАЗВИТИЕ МУЛЬКАДАРСКОГО ЗЕМЛЕВЛАДЕНИЯ В ИРАНЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

### Резюме

Вторая половина XIX в.— важнейший этап в истории Ирана, особенно его социально-экономического развития. Период этот характерен проникновением и развитием капиталистических отношений, в том числе и в сельском хозяйстве. Вызванное вовлечением Ирана в сферу мирового капиталистического хозяйства возрастание спроса на продукты сельского хозяйства обусловило рост его товарности, а это, в свою очередь—возникновение крупнотоварного земледельческого хозяйства. Капиталистический характер такого товарного производства обуславливал изменение отношений собственности на землю. В это время широкое развитие получает форма собственности, известная в Иране под названием «мюльк». В отличие от прежних форм собственности мюлькадарство—это частная собственность. На основе данных русских, иранских, английских источников в статье рассматривается процесс превращения части земель халисе и вакуфных владений в частную собственность и превращения параллельно этому феодалов в землевладельцев-помещиков.

Новым в этом процессе было то, что развитие частного землевладения шло не только за счет ее вызревания из род-

ственных владений, но и его формирования в результате покупки земли. Превращение земли в предмет купли-продажи открыло дорогу в сельское хозяйство торговому и ростовщическому капиталу. В результате, наряду с традиционными ее владельцами—многочисленными каджарскими принцами, светскими и духовными феодалами, появляется новый тип помещиков из среды купцов, ростовщиков, чиновников и т. д.; развивается кулацкие хозяйства.

На основе данных источников по различным районам Ирана в статье дается описание процесса развития крупного землевладения, основанного на товарном производстве, и частной собственности на землю; описание того, как в результате двухстороннего процесса—превращения феодалов «сверху» и купцов, ростовщиков и т. д. «снизу» в помещиков—в Иране складывается небольшая группа крупных земельных собственников, в руках которых оказалась значительная часть всех обрабатываемых земель. Занимая все прочное положение в экономике, эта группа еще в XIX в. начала играть ведущую роль в политической жизни страны.

ՇԱՀ-ԱՐՔԱՍ Ա-Ի ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Իրանում Սեֆյան հարստության տիրապետության (1502—1722) ժաղկման շրջանն իրավամբ դիտված են Շահ-Աբբաս Ա-ի թագավորության տարիները (1587—1629): Այդ գործունյա տիրակալը թագավորեց ավերելով ու ստեղծելով, տիրեց փառքի ու համընդհանուր ճանաչման դասնեպասակին և ժամանակակիցների կողմից արժանացավ «Մեծ» կոչմանը: Եվ իրոք, մեծ է եղել նրա դերը Իրանի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում:

Սակայն առանձին ուշադրության արժանի է արևելյան այգ բռնակալի՝ քրիստոնյաների նկատմամբ վարած կրոնական քաղաքականությունը, որը բխում էր առաջին հերթին Իրանի սոցիալ-քաղաքական իրավիճակից:

Հայտնի է, որ իսլամը և շարիաթի օրենքները մեծ դեր են խաղացել Արևելքի երկրների սոցիալ-տնտեսական կյանքում: Էնզելսի բնորոշմամբ, իսլամը «պատմական մեծ շրջադարձ» է եղել այն երկրների համար, որտեղ նա հանդիսացել է տիրապետող գաղափարախոսություն<sup>1</sup>:

Սեֆյանների օրոք շիիզմը տիրող դասի ձեռքում ղենք դարձավ՝ միավորելու Իրանի տարացեղ շրջանները մի ամբողջության մեջ, ի հակակշիռ թշնամի սուննիզմի<sup>2</sup>: Կրոնական բողի տակ էին ընթանում Իրանի երկարատև պատերազմներն ինչպես ուղբեկների, այնպես էլ Թուրքիայի դեմ՝ իբրև պայքար շիաների և սուննիների միջև:

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XIV, стр. 646.

<sup>2</sup> В. Осетров, Духовенство в Персии («Международная жизнь», М., 1924, № 1, стр. 49).



Թշնամական էր և մահճակականության վերաբերմունքը քրիստոնեությունից նկատմամբ: Սևֆյան Իրանում կրոնական անհանդուրժողականությունը քրիստոնյաների նկատմամբ վերջիններին ասի-միլյացիայի և նիսարկելու միջոց էր: Ըստ որում, կրոնական ֆանատիզմն ուժեղ էր և բացահայտ:

Սակայն Շահ-Աբբաս Ա-ի թագավորության ժամանակ կրոնական անհանդուրժողականությունն այլ պատկեր ստացավ: Ինչպես նևրբին և արտաքին քաղաքականության մեջ ընդհանրապես, այն-ույս էլ կրոնական հարցում Աբբաս Ա-ն դրսևորեց ուրույն և իր նախորդներից տարբեր մոտեցում: Օժտված լինելով խոշոր պետական դործին հատուկ հնարամտությամբ և մտահոգվելով իր ժտոանգած պետության վերականգնման ու բարգավաճման խնդիրներով, Շահ-Աբբաս Ա-ն իր թագավորության հենց առաջին տարիներից լայնորեն ձևնամուխ եղավ երկրի ներքին վերափոխումներին և արտաքին հարաբերությունների բարելավմանը, գործելով մեծ հմտությամբ, անհրաժեշտության դեպքում շխուսափելով նույնիսկ զիջումներ անել կրոնական սկզբունքներում:

Ուստի և, ելնելով երկրի քաղաքական և տնտեսական շահերից, Աբբաս Ա-ն մերթ հովանավորում էր իր երկրի քրիստոնյաներին, մերթ հալածում ու բռնի կերպով մահճակականացնում:

Այս հակասական (թվացող) քաղաքականությունը նույնպիսի հակասական արտացոլում է դտել սլատմական աղբյուրներում ու հետադոտություններում, որտեղ Շահ-Աբբաս Ա-ի՝ քրիստոնեության նկատմամբ վարած քաղաքականությունը և դրա պատճառներն ու հետևանքները տարբեր գնահատականների են արժանացել:

Շահ-Աբբաս Ա-ի պալատական պատմիչ Իսքանդար-բեկ Թորքեմանի (Մոնչի) «Աբբասյան աշխարհարար պատմության»<sup>2</sup> մեջ «աստծո ստվեր», «նորին սրբություն» Շահ-Աբբաս Ա-ն պատկեր-

1 Այսպես, օրինակ, Քերզնի հաղորդման համաձայն, երբ 1561 թ. Անտոնի Ջենկինսոնն Իվան Ահեղի և Անդրիայի թագուհի Նիզավետայի կողմից ներկայացավ շահ Քահմասպին և հանձնեց նրանց բարեկամական նամակները, շահն ասաց. «Դուք անհավատ եք, և մենք անհավատների հետ բարեկամության կարիք չունենք»: Եվ երբ այն «անհավատին» պալատից դուրս տարան, մի հողի մոխրով լի սկուտեղը ձեռքին հետևեց նրան ու նրա ոտնահետքերը «մաքրելու» համար մոխիր ցանեց ճանապարհին: Տե՛ս

نصرالله فلسفی، زندگانی شاه عباس اول، مجلد ۳، تهران، ۱۳۳۹

77

اسکندر بیگ ترکمان (منشی)، تاریخ عالم آرای عباسی، جلد ۳، ۳

۱۳۳۴-۱۳۳۵

ված է ամենագրական ու իդեալական գույններով<sup>1</sup>: Ուստի դարձա-  
նալի չէ, երբ հեղինակը, խոսելով Շահ-Աբբասի կողմից քրիստոն-  
յաներին բռնի հավատափոխության ենթարկելու մասին, այն ար-  
ձանագրում է որպես «բարի գործ»՝ կատարած «արքայի աշխար-  
հարար ձայնի» թելադրանքով, հօգուտ մահմեդականացվող քրիս-  
տոնյաների<sup>2</sup>:

Պալատական պատմագրության ներկայացուցիչների նման  
մեկնաբանություններն իրենց ազդեցությունն են ունեցել պարսիկ  
հեղինակների ուսումնասիրությունների վրա<sup>3</sup>: Թեհրանի համալսա-  
րանի պրոֆեսոր Նասրուլլա Ֆալսաֆին «Շահ-Աբբաս 1-ի կյանքը»  
քառահատոր աշխատության մեջ շահի կրոնական հանդուրժողա-  
կանության և «քրիստոնեասիրության» հիմքում դնում է նրա մե-  
ծահոգությունն ու անձնական բարեմասնությունները<sup>4</sup>:

«Պատմություն Նոր Զուղայու» աշխատության հեղինակ Հ. Տեր-  
Հովհանյանցի կարծիքով, քրիստոնյաների և հատկապես հայերի  
նկատմամբ Շահ-Աբբաս Ա-ի բռնությունները «մեծամեծների»  
դրդմամբ էին կատարվում<sup>5</sup>:

Ա. Ալպոյաճյանը, որը Սեֆյան իրանի բարգավաճման հիմքում  
տեսնում էր միայն Շահ-Աբբասի անձնական սուսվելությունները,  
նրա կատարած կրոնական հալածանքի մասին ասում է, որ դա  
միայն փորձ էր, որը «ձախողեցաւ, և շահը... շուտով դադրեցուց  
կրոնական հալածանքը»<sup>6</sup>:

Մինչդեռ XVIII դարի հեղինակ Խաչատուր Զուղայեցին անհուն  
կսկիծով նկարագրում է Աբբաս Ա-ի կրոնահալած քաղաքականու-

1 Ընդհանրապես XVI—XVIII դարերի պարսկական պալատական պատմող-  
րությունն աչքի է ընկնում արտակարգ ներբողական ոճով:

2 97. منشی، تاریخ عالم آرای عباسی، جلد ۲، ص 97.

3 Տե՛ս Շահ-Աբբաս Ա-ին նվիրված աշխատություններից՝ էջ 78

4 به انقاسم سحاب تاریخ زندگانی شاه عباس کبیر، تهران ۱۳۳۵،  
سرهنک محمد پرنگ، شاه عباس کبیر، تهران ۱۳۳۱

5 نصرالله فلسفی، زندگانی شاه عباس اول، ج ۱، ص ۴۱-۴۲

6 Հ. Տեր-Հովհանյանց, Պատմութիւն Նոր Զուղայու, որ յԱսպաճան,  
Նոր-Զուղա, 1880, էջ 76:

6 Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, Կ. Պ., Կահի-  
րէ, 1961, էջ 184:

իյան հետևանքով քրիստոնյաների և հատկապես հայ ժողովրդի կրած տառապանքը<sup>1</sup>։

Ուսումնասիրողներից ոմանք Շահ-Աբբասին խորթ են համարել կրոնական մոլեռանդությունը<sup>2</sup>, ոմանք՝ ընդհակառակը։ Օրինակ՝ իտալացի ուղեղիր Պլետրո դելա Վալեն Աբբաս Ա-ին համարում է խիստ ֆանատիկ մահմեդական<sup>3</sup>։

Արրաս Ա-ի մասին եղած հակասական կարծիքների առկայությունն ևն հաստատում Զաքարիա Սարկավագի հետևյալ խոսքերը. «... թէ սլարոսանք և նախատինք լինին, և թէ գոհութիւնք և գովութիւնք լիցին...»<sup>4</sup>։

Տարակարծությունները և հակասական տեսակետները բխում ևն ինչպես տարրեր սկզբնաղբյուրների կամ ժամանակակիցների սուրյակաիվ վերաբերմունքից, այնպես էլ Շահ-Աբբասի կրոնական կրկդիմի բաղաբականությունից, որն անխզելիորեն կապվում էր Իրանի տնտեսական-բաղաբական սլահանջների հետ։

Հայտնի է, որ 1604—1605 թթ. Շահ-Աբբաս Ա-ն ստրատեգիական, բաղաբական ու տնտեսական նպատակներով Անդրկովկասից Իրան դաղթեց բաղմահալար բնակչության, որոնց մեջ մեծամասնություն էին կաղմում հայերը։ Բացի թուրքական բանակի սասղխաղացման ճանապարհն ամալսցնելու մտաղրությունից, Արրաս Ա-ի նպատակն էր նաև՝ Իրանի կենտրոնական շրջաններում արկ տալ արտաբին և ներբին առետրին, ինչպես նաև արհեստներին։

Իրանի շահի ուղաղրության կենտրոնում էր հատկապես Հին Աուղայի խոշոր վահառականությունը։ Շահը նպատակ ուներ օղտագործել Աուղայի առետրական կապիտալը, ինչպես նաև՝ մետաբուի արտահանման բարավանային ճանապարհը փոխաղրել դեպի հարավ։

Գնահատելով շուղայեցիների, հայ խոջայության առետրական հնարավորությունները ու ձղտելով դրանք ծառայեցնել Իրանի շահ-

<sup>1</sup> Տե՛ս նալատուր արեղայ ձուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 112։

<sup>2</sup> Տե՛ս Пигулевская и др., История Ирана с древнейших времен до конца XVIII в., Л., 1958, стр. 278, հմմտ. Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, стр. XIII, էջ 78։

احمد تاج بخشى ، ايران در زمان صفويه تهرينز ، ۱۳۴۰ ص ۱۰۴

<sup>3</sup> نصرالله فلسفى ، زندگانی ..... ج ۳ ص ۸۷

<sup>4</sup> Զաքարիայ Սարկավագի Պատմագրութիւն, հ. 1, Վաղարշապատ, 1870, էջ 15։



հերին, Աբբաս Ա-ն լայն արտոնություններ տվեց նրանց և սկսեց հովանավորել ըստ ամենայնի՝:

Խոշոր վաճառականության հետ սերտ կապ ունեւր հայ հոգևորականությունը, որը նույնպես արժանացավ շահի առանձին ուշադրությանը: Հայ հոգևորականների մեջ Շահ-Աբբասը տեսնում էր իր համար օգտակար գործակալների, որոնք կարող էին նպաստել ամրապնդելու Իրանի տնտեսական և քաղաքական կապերը եվրոպական պետությունների հետ: Միաժամանակ նրանց միջոցով շահը փորձում էր հնազանդ պահել Իրան գաղթեցված հայ բնակչությանը, որովհետև, եթե մի բուռ հայ խոջայությունը և հոգևորականությունը, վայելելով շահի տված արտոնությունները, արդարացրին նրա հույսերը, ապա հայերի հոծ զանգվածները ոչ մի կերպ չէին հաշտվում նոր «հայրենիքի»։ Նոր պայմանների ու բարքերի հետ: Մանավանդ, որ բացի կենտրոնական քաղաքներից, Իրանի մյուս շրջաններում հայերի վիճակը ծայր աստիճան ծանր էր<sup>5</sup>: Նույնիսկ մայրաքաղաքում գաղթականների միայն որոշ մասն էր ապահովված<sup>6</sup>:

Տնտեսական դժվարությունները զուգորդվում էին տեղի մահ-մեղական բնակչության ֆանատիկ վերաբերմունքի և նրանց կողմից քրիստոնյաների հալածանքի հետ: Եվ չնայած այն բանին, որ Շահ-Աբբասը Իրան տեղափոխվածների մեծ մասին ապահովել էր բնակարաններով<sup>7</sup>, հայերը շարունակ փորձեր էին կատարում ետ վերադառնալու հայրենիք: Ուստի Շահ-Աբբասը շնորհակցով բաղում և պէս-պէս հնարս վասն ազգին հայոց, զի մնասցեն յաշխարհս Պարսից, զի թէ ոչ էր այնպես հնարեալ, ոչ մնային»<sup>8</sup>:

Շահի խիստ հրամանով արգելվեց գաղթականների վախուսար կամ տեղափոխվելն այլ վայր<sup>9</sup>:

1 Շահ-Աբբաս Ա-ի հրամանը քրիստոնյա վաճառականների գույքի, կրոնի ապահովության մասին՝ տե՛ս

احمد تاج بخش، 'ایران در زمان صفویه'، ص. ۱۰۴-۱۰۳

2 «История Ирана с древнейших времен...», стр. 277

3 Ա. քահ. Եղգարյան, Իրանի Զարմհալ զաւար. Թեհրան. 1963, էջ 173, հմմտ. Эзов, Сношения Петра Великого... стр. XII.

4 Առաքել Գավրիսեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 148-149:

5 նույն տեղում, էջ 65:

6 նույն տեղում, էջ 64:

7 նույն տեղում, էջ 70, 149:

Սակայն արգելելու ամենամեծ միջոցը Շահ-Աբբաս Ա-ն տեսնում էր քրիստոնյաներին սիրաշահելու մեջ: Նրա «քրիստոնեասիրական» խոշոր քայերից էր եկեղեցիներ կառուցելու թույլտվությունը, որ տվեց հայերին<sup>1</sup>: Մեծ նշանակություն է ունեցել դա քրիստոնյաների համար, որոնք օտար, մահմեդական երկրում հնարավորություն ստացան իրենց կրոնական ավանդական ծեսերը վարելու այնպես, ինչպես հայրենիքում: «Հրամայեաց (Շահ-Աբբաս Ա-ն—լ. Դ.) շինել ...վեկեղեցիս ըստ հաճութեան կամաց իւրեանց (հայերի—լ. Դ.), դրում է Ջուղայեցին,— որովք խորամանկութեամբ յանկոյց զսիրտ նախնեաց մերոց առ ինքն և մնացին մինչև ցայսօր ի ծառայութիւն Պարսից»<sup>2</sup>:

Ի թիվս այլ միջոցների, որոնց շնորհիվ հայերը մնացին Սպահանում, Դավրիժեցին շեշտում է և եկեղեցիներ հիմնելու թույլտրվությունը<sup>3</sup>: Շարգևնի վկայությամբ հայերն Աբբաս Ա-ի ժամանակ ունեին 24 եկեղեցի և մի հոյակապ վանք՝ Ամենափրկիչ անունով<sup>4</sup>: Սեկ այլ ֆրանսիացի ճանապարհորդի՝ Տավերնյեի հաղորդումից երևում է, որ եկեղեցիների այդ թիվը գնալով պակասել է և շահ Սուլեյմանի (1666—1694) օրոք հասել է 15—16-ի<sup>5</sup>:

Պետք է ասել, որ այդ եկեղեցիների մեծ մասը կառուցվում էր հայ խոշաների ծախսերով, թեև Ֆալսաֆին դրում է, որ թագավորն էլ մեծ մասնակցություն էր ունենում՝ իր գանձարանից գումարներ տրամադրելով քրիստոնյաներին<sup>7</sup>:

Սակայն միայն եկեղեցիներ ունենալու իրավունք շնորհելը բավական չէր քրիստոնյաների, մասնավորապես ծանր փորձությունների ենթարկված հայերի կրոնական զգացմունքները շոյելու համար: Անհրաժեշտ էր այնպիսի մի ազդեցիկ դեմքի սերն՝ ու համակրանքը քրիստոնեության նկատմամբ, ինչպիսին երկրի տիրակալ շահնշահն էր: Վերջինիս համար քրիստոնեասերի համբավն անհրա-

1 Նույն տեղում, էջ 276:

2 Խ. Ջուղայեցի, Պատմություն Պարսից, էջ 114:

3 Հարկերի որոշ թեթևացումը, գաղթականներին տեղ ու անդամատան տալը, շուղայեցիների հովանավորումը և այլն. տե՛ս Դավրիժեցի, էջ 65:

4 Նույն տեղում, հմմտ.

احمد تاج بخش ' ايران در زمان صفويه ص ۲۰۴

5 Ալպոյան ճյան, Պատմություն, հ. 9, էջ 169, հմմտ.

فلسفی ' آندکاتی ... ص ۳ ص ۲۱۰

6 Նույն տեղում

7 Նույն տեղում, էջ 71:

ժեշտ էր և՛ քրիստոնյա ժողովրդին հանգստացնելու, և՛ նրա բարձր խավերին սիրաշահելու համար: Աղբյուրները մեծ թվով վկայություններ են պահպանել այն մասին, թե ինչպես Շահ-Արրասը մասնակցում էր քրիստոնյաների տոնախմբություններին, եկեղեցական ծիսակատարություններին: Ավելին, Շահը «հայրաբարձ ինքն էր հոգում, որ քրիստոնյաներն իրենց կրոնական տոները պատշաճ անցկացնեն»:

«Այնքան համարձակութիւն ետ շահն քրիստոնէից,— դրում է Դավրիժեցիին,— մինչ ի հրապարակս և ի շուկայս, թէ հանդիպէր կարգ և կոիվ քրիստոնէից ընդ մահմեճականաց, համահաւասար զմիմեանս հարկանէին և հայհոյէին առանց երկիրի»<sup>2</sup>: Իսկ եթե քրիստոնյայի և մահմեդականի միջև ծագած վեճը պարզելու առիթ էր լինում, Շահը «զքրիստոնեայս իրաւացուցանէր և զմահմեդականս դատապարտէր»<sup>3</sup>:

Անշուշտ դա պետք է առաջ բերեր մահմեդականների զայրույթը: Եվ իրոք, ինչպես հաղորդում է Դավրիժեցիին, պարսից «կարողացողքն և մեծամեծքն» բողոքում են այդ բանի դեմ: Պետք է ենթադրել, որ այդ «մեծամեծների» թվում եղել են նաև շիա բարձրաստիճան հոգևորականության ներկայացուցիչները, որոնք անտարբեր չէին ընդունի քրիստոնեության ազատությունը: Եվ Շահ-Աբբասն շտապում է բացատրել իր իսկական նպատակը: «...Մի վշտանայք և մեղադրեք ինձ,— ասում է նա իրեն բողոքողներին,— զի ես բազում ծախիւք, ջանիւք և հնարիւք հազիւ թէ կարացի բերել զնոսալայս յաշխարհս. ոչ թէ վասն օգտի նոցա՝ այլ վասն օգտի մեր՝ զի աշխարհս մեր շինեսցի և ազդն մեր յաւելցի»: Այնուհետև՝ «Եվ վասն այնորիկ առնեմ ես զայս սերս ընդ նոսա, զի այսու կապեալ մնայցեն յաշխարհս մերս»<sup>4</sup>: Ինչպես տեսնում ենք, Դավրիժեցու մոտ բոլոր պարզունակությամբ, սակայն ճշմարտացիորեն բացահայտված է Շահի նպատակը, որը հաստատվում է նրա հետագուս քայլերով:

Շահ-Աբբասը նույնիսկ փորձ է արել քանդել էջմիածնի տաճարը և տեղափոխել իրան, որպես «բարություն» հայ զաղթականներին, նրանց վերջնականապես իրենց հայրենիքից կտրելու դիտա-

1 Դավրիժեցի, էջ 234, 302, հմմտ.

2 «فلسفی زندگانی» 3 - 80

2 Դավրիժեցի, էջ 65

3 նույն տեղում.

4 նույն տեղում. էջ 66.



վորութեամբ, բանի որ, Դավրիժեցու արտահայտութեամբ՝ «ի վերայ Աջոյն և էջմիածնի աննայն ազոյն հայոց կապեալ կան»<sup>1</sup>: Սակայն այդ աղետալի նախագիծը ավարտվեց էջմիածնի վանքի մի յանի բարևի, ինչպես նաև «Լուսավորչի աչի» փոխադրումով: Դասեղի ունեցալ 1614—1615 թթ.<sup>2</sup>:

Առանձին ուշադրություն էր հատկացնում Շահ-Աբբասը հայերին հետո: յահելու եվրոպական պետությունների և հատկապես Հոռոմի ազդեցությունից և նրանց խնամակալությունից<sup>3</sup>, Հոռոմը դուռն խաչակրաց սուլթանների ժամանակներից ջանում էր իրեն ննթարկել հայկական եկեղեցին: XVII դարում այդ ջանքերն ավելի ուժեղացան<sup>4</sup>, Հայ եկեղեցու ննթարկումը կնշանակեր կաթոլիկության կողմը դարձել նաև իրանահայերին և հատկապես ջուղայեցիներին, որոնց ղերը գնալով աճում էր: Նոր Զուղայի առևտրական կառիտալը հանդես էր գալիս որպես իրանա-ևվրոպական առևտրի միջնորդ և իր ձևքում էր կենտրոնացնում իրանի արտաքին առևտրի նշանակալից մասը: Ուստի Շահ-Աբբասը շահագրգռված էր պահպանելու իր տիրապետությունը հայերի նկատմամբ, որոնք իրանի համար և՛ առևտրի միջնորդներ էին, և՛ հարկատու հպատակներ:

Մյուս կողմից, Շահը, ձգտելով Եվրոպայի հետ առևտուրը կատարել առանց Թուրքիայի միջնորդության և վերջինիս՝ իրանի գըլլավոր ախոյանի դեմ ունենալ ևվրոպական պետությունների դաշինքը, անհրաժեշտ էր համարում քրիստոնյա Եվրոպայի և հատկապես Պապի առաջ հաճոյանալ ու նրա բարեկամությունն ու օժանդակությունը կորգել: Այդ պատճառով Շահը երկդիմի քաղաքակա-

1 Նույն տեղում, էջ 200—201:

2 Այս փաստի մասին (թիւ այլ տարրերակով) վկայում է և Շարգենը. տե՛ս ۲۹۴ ص ۱۳۳۵ ' تهران ' ر ج ' ترجمه محمد عباسی ' سياحتنامه شاردن ' Դավրիժեցին անձամբ գնացել է Սպահան և տեսել էջմիածնի տաճարի քարերը: Տե՛ս Դավրիժեցի, էջ 213

3 իրանում կաթոլիկական միսիանների գործունեության մասին տե՛ս Տ. Հ. Հակոբյան, Հայերի պայքարը կաթոլիկական միսիանների ասիմիլյատորական ձգտումների դեմ իրանում (XVII—XVIII դդ.), «Արևելագիտական ժողովածու» 1, հր., 1960: Վ. Բայբուրգյան, Նոր Զուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիանների կազմակերպություններ, ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), Եր., 1964, № 9:

4 Л. А. Семенова. «Орден Кармелитов как орудие проникновения европейцев в Иран. «Ближний и Средний Восток», сб. статей, М., 1962. стр 98.

նություն էր վարում: Նա եվրոպական պետություններին տվել էր մի շարք արտոնություններ<sup>1</sup>, ղրան ավելացնելով նաև իր արտակարգ «քրիստոնեասիրությունը»՝ ծայրահեղությունների հասնող ցուցամոլությամբ, որի մասին վկայում են ժամանակակիցները, հատկապես՝ Ավգուստինյան միաբանության միսիոներ Անտոնիո դե Գուվեան և Պյետրո դելա Վալեան:

Շահ-Աբբասի շոյալ հովանավորությունն ավելի է թևավորում կաթոլիկ միսիոներներին, որոնք Շահի պալատում ժրաջան բանակցություններ են վարում՝ Իրանի քրիստոնյաներին կաթոլիկացնելու, մահմեդականություն ընդունածներին վերադարձնելու քրիստոնեության և նույնիսկ շահին քրիստոնյա դարձնելու ուղղությամբ, քանի որ, իրեն նվիրված քրիստոնեասեր ձևացնելով, Աբբաս Ա-ն չէր խորշում խոսել նույնիսկ իր կողմից քրիստոնեություն ընդունելու մասին<sup>2</sup>:

Երբեմն Շահն իր խոսքը գործի էր վերածում. հայտնի է Շահ-Աբբաս Ա-ի հրամանն այն մասին, որ մահմեդականություն ընդունած այն քրիստոնյաներին, որոնք կցանկանան նորից քրիստոնեություն ընդունել, արգելք չլինեն<sup>3</sup>:

Բայց Շահ-Աբբասը ոչ միշտ էր կոմպրոմիսի դիմում:

Երբ 1601—1602 թթ. Իսպանիայի թագավոր Ֆիլիպ Յ-րդի հրամանով Անտոնիո դե Գուվեան Շահին առաջարկում է, որ վերջինս հրամայի հայոց կաթողիկոսին՝ հնազանդվելու Պապին, Շահը պատասխանում է. «Գիտե՞ք, որ իմ երկրում ամեն ինչ ավատ է... ես չեմ կարող հայոց կաթողիկոսին ստիպել...»<sup>4</sup>:

Բայց կաթոլիկ քարոզիչները չեն նվազեցնում իրենց ջանքերը: 1607 թ. Իրանի կառավարությունը նորից է առաջարկ ստանում (ևրկու կաթոլիկ կրոնավորի միջոցով) Ջուղայի հայությանը ստիպելու՝ հնազանդվել Հռոմին: Շահն այս անգամ որոշում է դրական պատասխան տալ, հիշելով, ի հարկե, իր ակնկալությունները:

---

1 Շահ-Աբբաս Ա-ի մի շարք հրամանները եվրոպական կաթոլիկական տարբեր միաբանություններին տրված արտոնությունների վերաբերյալ ամփոփված են Նեպոլի Ազգային գրադարանում գտնվող «Շահ-Աբբաս Ա-ի շրջանի վերաբերյալ նամակներ և փաստաթղթեր» ժողովածուի մեջ:

2 ۷۶ ، ۷۴ ج ۳ .... فلسفی ، زندگانی

3 Զ. Ս արկավագ, Պատմություն, հ. 1, էջ 21,

4 ۷۸ ، ۳ ج .... فلسفی ، زندگانی

Սակայն շուտով ամեն ինչ փոխվում է: Ինչպես հաղորդում է Գուվհան, մի բանի օր հետո, երբ լուր է հասնում, որ Գերմանիայի կայսր Լուդոլֆ 2-րդը Օսմանյան սուլթանի հետ դաշն է կնքել, Շահ-Աբրասը վերոհիշյալ կաթոլիկների վրա խիստ զայրանում է և ասում. «Երբ քրիստոնյա թաղավորներն իրենց խոստումներից հրաժարվում են և թշնամու հետ դաշն են կնքում, դուք ուզում եք իմ երկրում եկեղեցիներ ունենալ, հայերին ձեզ ենթարկել և բարձրաձայն կոչնա՞կ զարկել: Հանցանքն իմն է, որ ձեր զանգերը չեմ ջարդում եկեղեցիները չեմ քանդում ու ձեզ իմ հողից չեմ վռնդում»:

Այսուհանդերձ, Շահ-Աբրասը զրավոր պայման էր կնքել կաթոլիկների հետ, որ նա Օսմանյան Թուրքիայից գրավելիք յուրաքանչյուր քաղաքում մի եկեղեցի կկառուցի, եթե Իսպանիայի թագավորն իր աված խոստումներին հավատարիմ մնա, այսինքն Օսմանյան սուլթանի զեմ սյատերադմի մեջ մտնի և Իրանին հրետանի ու զինվորական մասնագետներ տրամադրի, այդ դեպքում ինքն էլ կթույլաբարի, որ քրիստոնյա քարոզիչները ողջ Իրանում քրիստոնեության սարածամբը զրաղվեն<sup>3</sup>:

Այսուիսով տեսնում ենք, թե քաղաքական ու տնտեսական ինչպիսի նկրտումներ կային Շահ-Աբրաս Ա-ի «քրիստոնեասիրության» ևսեում:

Իհարկե, շատերն էին հասկանում Շահ-Աբրասին: Սակայն դա չի խանդարել, որ Աբրաս Ա-ն նվիրված քրիստոնեասեր թագավորի համբավ ձևոք բերի, քանի որ դրան նպաստել են շատ հանդամանքներ նախ, Շահ-Աբրասը հաջող կերպով ձևացել է և գրանուվ շատերին մոլորության մեջ գցել. բացի դրանից, նա մեծ գործ է կատարել Իրանի բարգավաճման համար և արժանացել ընդհանուրի դրվատանքին. քիչ դեր չի խաղացել նաև այն, որ Իրանում քրիստոնյաների վիճակը հարևան Թուրքիայի հետ համեմատած տանելի էր և Թուրքիայից հալածված շատ քրիստոնյաների է Շահ-Աբրասն ապաստան տվել<sup>4</sup>: Այնուհետև Աբրաս Ա-ից հետո, հատկապես Սեֆյան վերջին թագավորների օրոք ֆանատիկ կրոնամոլությունը և քրիստոնյաների բացահայտ հալածումը հետսողայում կոնտրաստ են ստեղծում և նպաստում Աբրաս Ա-ի քրիստոնեասի-

1 Տե՛ս Սիտվատորոկի դաշնագիրը. А. Д. Новичев, История Турции, т. I., 1963, стр. 140.

2 فلسفی : دینی : کتابی .... ج ۳ ص ۸۴

3 Նույն տեղում, էջ 73:

4 Դավրիժեցի, էջ 15:





կեղևնու և հայ հասայնքի դեմ դրսևորվող կրոնական հալածանք-  
ները ընդհանրապես Բացի այդ, իր իսկ վկայութեամբ, պատմիչը չի բա-  
վարարվել միայն յսած տեղեկութիւններով, այլ ստուգել է դրանք  
դրաւոր աղբյուրները՝ ձեռագիր մատյանների, հիշատակարանների,  
կոնդակների և այլ սկզբնաղբյուրների միջոցով և ապա միայն գրել՝  
«Պատահական չէ, որ Դավրիժեցու տվյալների հավաստիութիւնն  
ընդհանուր ճանաչում է գտել: «Անկախութիւնն իրանական կառա-  
վարական պաշտոնական տեսակետից...»,— գրում է Ի. Պետրուշև-  
սկին,— թույլ է տալիս մեզ օգտվելու Ա. Դավրիժեցու տվյալներից՝  
ստուգելու համար պարսկական աղբյուրների հաղորդած տեղեկու-  
թիւնները»<sup>2</sup>։ Իր դարաշրջանի ճշմարիտ արտացոլումը լինելով,  
«Դավրիժեցու «Պատմութիւնը» մինչև օրս էլ նպաստում է վեր հա-  
նելու և ճիշտ լուսաբանելու պատմութեան որոշ հարցեր: Մերկաց-  
նելով թուրք կեղծարարների այն պնդումը, ըստ որի հայերը թուր-  
քական պարսկական ինքնութեան ներքո մինչև 1878 թ. իրենց շատ լավ էին  
պահում և հաշտ էին սպանում թուրքերի հետ, գերմանացի պոռֆ.  
Մարկվարտը գրում է. «Բավական է մի հայացք ձգել հայ վարգա-  
սիւտ Առաքել Դավրիժեցու պատմութեան վրա, գաղափար կազմելու  
համար, թե ինչ ձևով էին վարվում օսմանցիները հայերի և ընդհան-  
րապես բրիտանացիների հետ, տակավին XVII դարում»<sup>3</sup>։

Չնայած որոշ կրոնական սահմանափակութեանը, Դավրիժեցին  
հիանալի ըմբռնել է ժամանակի ոգին և Շահ-Աբբասի բազաբակա-  
նութիւնն ու նպատակները: Մ. Աբեղյանի արտահայտութեամբ  
«...կարծես մի բազաբադեա և հոգերան լինի...»<sup>4</sup>։

Ա. Դավրիժեցու «Պատմութիւնը» հնարավորութիւն է տալիս  
տեսնելու Շահ-Աբբաս Ա-ի քրիստոնեասիրութեան հակառակ երեսը:

«Պատմութեան» մեջ կարմիր թելի պես առկա է այն փոստը,  
որ «բրիտանեասեր» Շահ-Աբբասը շարունակ հետամուտ է եղել բրիտ-

<sup>1</sup> Դավրիժեցի, էջ 416, 417, 432—433, հակառակ այն կարծիքի, թե  
Դավրիժեցին իր ձեռքի տակ գրավոր աղբյուր չի ունեցել (տե՛ս «Առաքել  
Դավրիժեցի», «Ալիք», Թեհրան 1945, № 209)։

<sup>2</sup> И. П. Петрушевский. Очерки по истории феодальных отношений  
в Азербайджане и Армении в XVI, XIX вв., Л., 1949, стр. 49.

<sup>3</sup> Prof. D-r J. Marguart, L'origine et la reconstitution de la nation  
armenienne. Traduction de Marie K. J. Barmadjian, Paris, 1919.  
Երևում է ըստ Ռ. Գ. Սահակյանի «Մարկվարտն արևմտահայերի գեներոլի մա-  
սին» (ՀՍՍՀ ԳԱ տրամբեր, հաս. գիտ. 1966, № 7, էջ 109)։

<sup>4</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գ. 2, Երևան,  
1946, էջ 452։

Վ ան ա գ գ յ ու ղ ը—Հայկական Վանագ գյուղը գտնվում է համանուն պարսկական գյուղի մոտ և ընկած է Թեհրանից հյուսիս՝ 8—9 կմ հեռավորության վրա: Ներկայումս, Թեհրանի սահմանների՝ հիմնականում դեպի հյուսիս ընդլայնվելու կապակցությամբ Վանագ գյուղը մտել է քաղաքի սահմանագծի մեջ: Սակայն այն փոքր-ինչ մեկուսացած է, չի առնչվում քաղաքային շինարարությանը, չնայած նրա շուրջն արդեն բարձրանում են առանձին ժամանակակից շինություններ: Բնական է, որ դյուզը, եթե այն դեռևս կարելի է այդպես անվանել, գտնվում է մայրաքաղաքի ուժեղ ազդեցության տակ:

Հայերը Վանագը հիմնել են XIX դարի սկզբին<sup>1</sup>: Մոտավորապես այդ ժամանակ, կամ փոքր-ինչ ավելի ուշ, Թեհրանի հյուսիսալին ծայրամասերում առաջացել են հայկական մյուս գյուղերը՝ Դարուը, Խորթունն ու Մանսուրաբազը:

Այդ գյուղերի բնակիչների մեծ մասը ծագումով Ղարաղանի, Քաղազի և այլ շրջաններից էին<sup>2</sup>: 1935 թ. Վանագում ապրում էր 127, Խարթունում՝ 48, Դարուում՝ 80, և Մանսուրաբազում՝ 112 հայ: Այն ժամանակ մի քանի հայ ընտանիքներ կային նաև մոտակա պարսկական լաշքերանք և Դավուգիե գյուղերում<sup>3</sup>: Ներկայումս Վանագում և այդ գյուղերում հաշվվում է մինչև 500 հայ:

Ար ա ք (ն ա խ կ ի ն Ս ու լ թ ա ն ա բ ա դ)—Քաղաքը տեղավորված է կենտրոնական գավառում, Թեհրանից 300 կմ հարավարևմուտք: Առաջին հայ բնակիչները քաղաքում երևացին XIX դարի վերջին, XX դարի առաջին տասնամյակում Արաքի՝ որպես հայկական գաղթօջախի նշանակությունը այնքան մեծացավ, որ նա դարձավ հարակից շորս հայաբնակ շրջանների՝ Քաղազի, Քամարալի, Գյափլայի ու Բուրվառի կենտրոնը (նախկինում դրանք հարում էին Համադանին ու Մալաբրին): Այդ բանին նպաստեց Արաքի՝ այն ժամանակվա Իրանի առևտրական կենտրոններից մեկի դիրքը: Արաքի

1 «Ալիք», 1935, հուլիսի 26:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

հայ ընակչութիւնը կազմված էր Իրանի տարբեր մասերից եկածներին, որոնց այդտեղ էր բերել տեղի հայ արդյունաբերողների գորգագործակտն Դաբրիկաներում ու հայ վաճառականների առևտրական տնկրում աշխատանք դտնելու հույսը:

Տեղի հայերը հիմնականում եկել էին Քաղազ, Քամարա, Գլափլա ե Քուրվառի գավառներից, ինչպես նաև Թեհրան, Համադան, Նոր Զուղա քաղաքներից ու Իրանական Ադրբեջանից:

Տեղական բնակիչների մեջ կային հայեր Արևմտյան Հայաստանից, Միջագետքից ու Կովկասից: 1932 թ. Արաքում բնակվում էր ընդամենը 931 հայ<sup>1</sup>:

Պաբրիկաների մեծ մասի փակվելուց հետո Արաքի նշանակութիւնն ընկավ: Շատ ընտանիքներ փոխադրվեցին Թեհրան: Այժմ Արաքում ապրում է 700—800 հայ:

Քաղազ, Քամարա, Քուրվառի և Գլափլա շրջաններին գյուղերը — Դարասկղբին Արաքից հարավ և արևմուտք ընկած Քուրվառի, Գլափլա, Քաղազ ու Քամարա շրջաններում բնակվում էին բավականին մեծ թվով հայ գյուղացիներ: Այդ շրջանի բնակիչները XVII դարի գաղթածներ են, ինչպես նաև Իսֆահանի դավառի Փերիա շրջանի բնիկներ, որ այստեղ են տեղափոխվել XVIII—XIX դարերում:

Այս տեղերում հայ գյուղացիների առաջին բնակավայրը եղել է Քուրվառին<sup>2</sup>: Հարութիւն Տեր-Հովհանյանցի տվյալներով, XIX դարի կեսերին Քուրվառիում կար 22 հայկական գյուղ<sup>3</sup>: Քուրվառի շրջանը այն կետն էր, որտեղից ճյուղավորվում էր հայ գյուղացիների տարածումը դեպի կենտրոնական գավառի հարավային մասերն ու Լորեստանի հյուսիս-արևելյան ծայրամասերը (Գլափլա, Քամարա և Քաղազ շրջանները): Այդ իսկ պատճառով շրջանի հայկական բնակչութիւնը շարունակ նվազում է:

1919 թ. այնտեղ ապրում էր 4242 հայ<sup>4</sup>: 1932 թ. շրջանի հայ բնակչության թիվն իջել էր 1500-ի: Հայերն ապրում էին 20 գյուղերում, բայց հիմնականում տեղի պարսիկ գյուղացիների հետ խառը<sup>5</sup>:

1 «Ալիք», 1932, փետրվարի 2 և 10:

2 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 46:

3 Հարութիւն Տեր-Հովհանյանց, Պատմութիւն Նոր Զուղայի, 1. էջ 32—33:

4 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 60:

5 «Ալիք», 1932, փետրվարի 10 և 18:



1946 թ. հարկահավաքման ժամանակ շրջանի հայ գյուղացիներին մի մասը փոխագրվեց Սովետական Հայաստան, մյուս մասը՝ բնակութուն հաստատեց Թեհրանում: Այդուհանդերձ, 1952 թ. այնտեղ մնացել էին հետևյալ ութ գյուղերը՝ Նասրաբադ, Տարաջաբադ, Խորշենդ, Բազմանբադ, Խաբաբադ, Մուղանաբ և Արարիք: Շրջանի հայ բնակչության ընդհանուր թիվն այն ժամանակ 1132 էր<sup>1</sup>:

Ներկայումս բուրվառցի հայերը հիմնականում ապրում են երեք գյուղերում. Խորշենդ (մոտավորապես 300—350 մարդ), Տարաջաբադ (մոտ 250 մարդ) և Նասրաբադ (մինչև 150 մարդ):

XVII դարից մինչև ընդհուպ մեր դարի 40-ական թվականները Բուրվառիին հարևան Գյափլա շրջանում կային մի քանի հայկական դյուղեր: 1932 թ. այնտեղ կային մեծ ու փոքր 10 գյուղեր՝ Քերթ, Հուսեյնաբադ, Մարդիան, Հաջիաբադ, Թոխմար, Գուրջի, Ջառնա և այլք: Այնտեղ հայերի թիվը հասնում էր 2500-ի<sup>2</sup>:

1946 թ. շրջանի բնակչության մեծ մասը հայրենադարձվեց Սովետական Հայաստան<sup>3</sup>: Մնացած այն բնակիչները, որոնք հայրենադարձության դադարեցման հետևանքով չկարողացան վերադառնալ իրենց նախնիների հայրենիքը, հարկադրված եղան բնակութուն հաստատել Թեհրանի հյուսիսային արվարձաններում: Ներկայումս Գյափլայում կա 30 հայ ընտանիք:

Քամարայի շրջանի հայ գյուղացիները հիմնականում Գյափլայի նախկին բնակիչներն են: Նրանք նոր վայրերում են հաստատվել մոտավորապես XVII դարի կեսերին, 1932 թ. տեղի հայերը բնակութուն հաստատեցին յոթ գյուղերում՝ Լիլան, Ղուրչիբաջի, Չարբախ, Ռութաբ-Քանդլենբը, Սաքի, Մըղրա-Դարաշուր և Դանիան-Մաշիան գյուղերում: Շրջանի ամենամեծ հայկական գյուղ Լիլանում այն ժամանակ կար 1400 բնակիչ: Մյուս գյուղերում կար 355 հայ ընտանիք<sup>4</sup>:

Քամարա շրջանից Հայկական ՍՍՀ հայրենադարձվեցին շատ քիչ հայեր: 1952 թ. շրջանի հայկական բնակչությունը կազմում էր 2158 մարդ<sup>5</sup>:

Այժմ Քամարայի 800—850 հայեր ապրում են չորս գյուղերում՝ (Լիլան, Սաքի, Դարաշուր և Դավիթաբադ): Շատ ընտանիքներ փոխադրվել են Թեհրան ու հարևան Քաղաղ շրջանը:

1 «Ալիք», 1952, փետրվարի 5:

2 Նույն տեղում, 1932, փետրվարի 10 և 18:

3 Նույն տեղում, 1952, փետրվարի 5:

4 Նույն տեղում, 1932, փետրվարի 10 և 18:

5 Նույն տեղում, 1932, փետրվարի 5:

Քաղաղ շրջանը դադարում է Արաքից 30 կմ հեռավորության վրա: Փերիալից առաջին գաղթածները այստեղ ևն հաստատվել 1815 թ.: Նախապես նրանք բնակվել են Գուրեղալում, ապա նրանց մեծ մասը շարժվել է հարավ-արևմտյան ուղղությամբ ու հիմնել է մի շարք հայկական գյուղեր: 1932 թ. դրանք 12-ն էին (Աղնա, Քալավա, Իդիսաբադ, Աբբասաբադ, Ումրիա, Մարանդ, Ալիպուրջ, Սեյլան, Գուրեղալ, Հուսեյնաբադ և երկու Ղալաները: Այնտեղ բնակվում էր ընդամենը 4 հազար հայ:

1952 թ. շրջանում բնակվում էին 3618 հայ գյուղացիներ<sup>2</sup>: Հետագայում շրջանի հայ բնակչությունը որոշ չափով նվազեց՝ Արաք և Թևհրան փոխադրվածների հաշվին: Սակայն, շնայած դրան, այժմ այստեղ ներկայումս էլ կա թվապես խոշոր հայ գաղթօջախ: Հայերը բնակվում են Աղնա, Աբբասաբադ, Քալավա, Ումրիա, Մարանդ, Ալիպուրջ, Գուրեղալ, Գարդուղար, Հուսեյնաբադ և Մեհդիաբադ գյուղերում: Արաքի և Քազազ, Քամարա և Բուրվառի շրջաններում ներկայումս (բնական աճի հետ մեկտեղ) կա 5000 հայ: 1919 թ. այդ շրջաններում (Գյափլայի հետ մեկտեղ առանց Արաքի) ապրում էր 10186 հայ<sup>3</sup>: Որոշ տվյալներով, 1946 թ. Արաքում և հարակից շրջաններում հաշվվում էր 20 հազար հայ<sup>4</sup>:

1946 թ. Հայկական ՍՍՀ վերագարձավ մոտ 6000 հայ: Բացի այդ, 6000 տեղացի հայեր 1946—1947 թթ. փոխադրվեցին Թեհրան<sup>5</sup>: Նախկին բնակավայրերից գյուղացիների հեռանալու հիմնական պատճառը հողազրկությունն է: Նախկինում, մինչև XIX դարը, Իրանում գյուղացիները մշակում էին պետական հողերը: Ապրանքադրամային հարաբերությունների զարգացման ու երկրի միջազդային, ապրանքափոխանակության ոլորտը ներգրավվելու հետևանքով հողատիրության նախկին ձևը՝ պետական հողատիրությունը, անկում ապրեց:

XIX դարի վերջին ու XX դարի սկզբին սկսվեց հողերի՝ խոշոր հողատերերի կալվածատերերի, վաճառականների, խաների, ցեղապետների ու բարձրաստիճան հոգևորականության ձեռքում կենտրոնանալու պրոցեսը: Վերջինիս ընթացքում հայ գյուղացիների հիմնական զանգվածը իրանցի գյուղացիների մեծամասնության հետ

1 «Ալիք», 1952, փետրվարի 10 և 18:

2 Նույն տեղում, 1952, փետրվարի 5:

3 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 60—61:

4 «Ալիք», 1952, փետրվարի 5:

5 Նույն տեղում:

մեկտեղ հողագրկվեց ու ընկտվ կալվածատերերի կապալի տակ: Այդ տեսակետից հատկապես ծանր էր Բուրվառի և Գյափլա շրջանների գյուղացիության վիճակը: Հենց դա էլ պատճառը, որ Գյափլայում գրեթե բոլորովին հայեր չմնացին, իսկ գյուղական ամենահին բնակավայրերից մեկում՝ Բուրվառիում նրանց թիվը խիստ նվազեց:

Ղաղվիհն—Քաղաքը հայերով սկսեց բնակեցվել XIX դարի երկրորդ կեսին, հիմնականում ի հաշիվ Նոր Զուղայից, Համադանից, Թավրիզից փոխադրված ընտանիքների, ինչպես նաև Իսֆահանի գավառի գյուղացիների: Հետագայում, ընդհուպ մինչև մեր դարի 50-ական թվականները, քաղաքի հայ բնակչությունը շարունակ ավելանում էր: Պատերազմից հետո այնտեղ կար 1,5—2,000 հայ:

Վերջին տարիներս ղաղվիհնցի հայերի շատ ընտանիքներ փոխադրվում են մոտակա Թեհրան: Այժմ Ղաղվիհում մնացել է մոտ 300 հայ:

Ղարաղանի շրջանի գյուղերը—Ղարաղանի շրջանն ընկած է Ղաղվիհից 40—50 կմ արևմուտք: Հայ գյուղացիները (հատկապես Իսֆահանի գավառից) այս շրջանն են տեղափոխվել XIX դարում, 1919 թ. այնտեղ կար մինչև 1750 հայ, որոնք բնակվում էին վեց գյուղերում, պարսիկ գյուղացիների հետ մեկտեղ: Մինչ 1962 թ. այդ երկրամասում տեղի ունեցած հայտնի երկրաշարժը, հայերն ապրում էին Վերին Չանախչի, Ներքին Չանախչի, Ներքին Ղալա և Լար գյուղերում: Նրանց թիվը հասնում էր 1400-ի: Չնայած երկրաշարժի պատճառած ավերածություններին, այդ գյուղերը մինչև հիմա էլ գոյություն ունեն, սակայն գրանցում շատ ավելի պակաս թվով են հայեր ապրում: Ղարաղանցի մի քանի հայ ընտանիքներ, որոնք մնացել էին անօթևան և ղրկվել էին գոյության միջոցներից փոխադրվեցին Թեհրան:

Ռաշտ—Ռաշտը՝ Գիլան գավառի կենտրոնի հայ դաղութը Իրանում ամենահներից մեկն է: Պատմական տվյալները վկայում են որ այդ բնակավայրը գոյություն ունեւր արդեն XIII դարում<sup>1</sup>: Ռաշտի հայ գաղթօջախը միշտ կայուն է եղել ու չի դադարեցրել իր գոյությունը մի քանի դարուց ի վեր: 1916 թ. այնտեղ կար 571, 1954 թ.՝ 590, 1931 թ.՝ 596 հայ<sup>2</sup>: Ներկայումս Ռաշտում բնակվում է մինչև 600 հայ: Մի քանի հայ ընտանիքներ են ապրում Ռաշտի մերձակա փոքր

1 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 102—103:

2 Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, Ա., էջ 242:

3 «Ալիք», 1932. մայիսի 28:



բաղաբնկերում ու ավաններում (Հահիջան, Լանգերուզ, Յուժեն, Ռադսեր, Շահսևար և այլն)։

Փ ա հ յ ա վ ի ( ն ա խ կ ի ն է ն գ ե լ ի ) — Կասպից ծովի ափին դասվող այդ հովեկային ու նավահանգստային քաղաքն ընկած է Ռաշտից 40 կմ հեռավորության վրա։ Տեղի հայ գաղութն ունի մի քանի դարի սլատմութուն, բայց հավանաբար ավելի ուշ է ստեղծվել, քան Ռաշտի հայ գաղութը։

Վերջին սարիներս Փահլավիի հայ բնակչությունը նվազել է և այժմ այնտեղ կա ոչ ավելի, քան 400 հայ։

Մ ա շ հ ա դ — Անցյալ դարի վերջին խորասանի նահանգում ու նրա կենտրոն Մաշհաղում ապրում էին մեծ թվով հայեր։ Ռուսաստանի հայերն այդ տարիներին Սաբդեար քաղաքում հիմնել էին բամբակապտիչ գործարան, որտեղ աշխատում էին շատ հայեր։ Դարասկզբին, երբ Մաշհաղը խոշոր առևտրական կենտրոնի դեր ուներ Իրանա-ռուսական առևտրական հարաբերություններում, այնտեղ կար 120—150 հայ ընտանիք։ Այս բանից հետո, երբ Մաշհաղը կորցրեց իր վազեմի նշանակությունը, իսկ Սաբդեարի գործարանը փակվեց, քաղաքի ու նահանգի հայ բնակչության թիվը նկատելիորեն նվազեց։ Այժմ արդեն այնտեղ բնակվում է ընդամենը 200 հայ։ Մի քանի հայ ընտանիքներ կան Ղուչան ու Նիշաբուր քաղաքներում<sup>1</sup>։

Ք ի ը մ ա ն շ ա հ — Իրաքին սահմանակից Քերմանշահ գավառի կենտրոնն է։ Առևտրական կենտրոն լինելով, նա իր կողմը հրապուրեց մի քանի հայ ընտանիքներ։

Քսանական թվականներին այդտեղի հայերի թիվը զգալիորեն աճեց։ Այդ շրջանում տեղի հայ բնակչությունը ավելացավ նաև ի հաշիվ Արևմտյան Հայաստանից փախստականների<sup>2</sup>։

Սափայն, առաջանալով փաստորեն միայն 20-ական թվականներին, քաղաքի հայ բնակչությունը շուտով սկսեց նվազել։ Դրա գլխավոր պատճառներից մեկը 1929—1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամն էր։ 1931 թ. այնտեղ կար 272 հայ<sup>3</sup>։

Նետագա տարիներին քաղաքի հայ բնակչությունը քիչ աճեց։ Այժմ Քերմանշահում կա ոչ ավելի քան 400 հայ։

Հ ա մ ա դ ա ն — Իրանի այդ հնագույն քաղաքը (հնագույն էր բաթանը) հայերով բնակեցվել է դեռևս XVII դարում։ Ըստ եղած

<sup>1</sup> «Ամենուն տարեգիրք», Բեյրութ, 1958, էջ 387։

<sup>2</sup> «Ալիք», 1931, օգոստոսի 16։

<sup>3</sup> Նույն տեղում։

տեղեկութիւնները ոչ մեծ թվով հայ դաղթականներ Շափ-Աբբասի օրոք բնակութիւն են հաստատել քաղաքի Ղալի թաղամասում: Քաղաքի հայ բնակչութիւնը հետագայում համալրվեց երկրի մյուս գավառներից փոխադրվածներով, ինչպես նաև արևմտյան հայերով: Հայերի թիվը Համագանում հասավ 820-ի<sup>1</sup>:

Բալզ մինչև 1605 թվականը Համադանի արվարձաններում հայեր էին բնակվում. որոնց կենտրոնը Շավար (կամ Շավարին) գյուղն էր<sup>2</sup>:

Տեղացի հայերի շատ ընտանիքներ վերջին տասնամյակներում փոխադրվել են Թեհրան: Այնտեղ այժմ մնացել է 550 հայ:

\* - \*

Վեց հարյուրից վեց հարյուր հիսուն մարդ կա Մտլանդարան գավառի առաջին բնակավայրերում: Հայ ընտանիքները փոքր խմբերով բնակվում են Բանդարշահում, Շահուղում ու Գոլեստանում, ինչպես նաև դրանց շրջակա մի քանի գյուղերում: Մի քանի հարյուր հայ հաստատվել են Գորգան գավառում:

### Հ յ ու ի ս ա յ ի ն շ ր ջ ա ն

Հյուսիսային շրջանի գաղութի հայերը հիմնականում բնիկներ են: Այդ շրջանը Իրանի հայկական հին բնակավայրերից մեկն է: Թավրիզից բացի շրջանի մեջ են մտնում Ռեղաիե, Խոլ, Սալմաստ, Մաբու, Ղարադաղ ու Մարաղա մարզերի հայ բնակատեղիները:

Ռեղաիե (նախկին Ուրմիա)— Արևմտյան Ադրբեջան նահանգի ադմինիստրատիվ կենտրոն Ռեղաիեում 1928 թ. կար 226 հայ<sup>3</sup>: Ներկայումս նրանց թիվը հասնում է 550—600-ի:

Թավրիզի թեմական խորհրդի տվյալների համաձայն 1922—1923 թթ. Ռեղաիեի շրջանում կար 2400 հայ, որոնք բնակվում էին 33 գյուղերում<sup>4</sup>: Այժմ մարդում կա 14 հայկական գյուղ՝ Գեարդաբադ, Նախիջևան Թապա, Իքաղաջ, Կարակեզ, Կարաչալու, Դարբառու, Բալանիշ, Դիղաթաթա, Արդիշատաթա, Շիրաբադ, Բազլոո. Դարգառու, Ռիհանբադ, Տակիբեկլու:

<sup>1</sup> «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 79:

<sup>2</sup> «Ալիք», 1954, հունիսի 28:

<sup>3</sup> «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 152:

<sup>4</sup> Նույն տեղում, 1927, էջ 52—53:

Բնական աճի հետ մեկտեղ մարզում պետք է որ բնակվելու լինի 3,5 հազար հայ:

Խոյ — Իրանի այս հին հայկական բնակավայրի մասին հիշատակվում է դեռևս XIII դարից<sup>1</sup>: Ներկայումս Խոյում և նրա շրջակայքում հայեր գրեթե չեն մնացել: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական արշավանքների ժամանակ տեղի հայ բնակչությունը կոտորվել կամ փախել է այլ շրջաններ ու կոկլաս: Մարզի որոշ գյուղերում ապրում են մի քանի հայ ընտանիքներ, որոնց թիվը, սակայն, աննշան է:

Սալմաստ — Սալմաստում հայերը բնակվել են դեռևս XIII դարից<sup>2</sup>: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը մարզում (կենտրոնն է Շահիուրը, Կախկին Դիլիմանը) բնակվում էր մինչև 15000 հայ<sup>3</sup>: Հավթվան գյուղն այդ ժամանակ ուներ 4500 բնակիչ: Այն մինչև այժմ էլ մնում է մարզի ամենամեծ հայաբնակ գյուղը, սակայն ունի միայն 200 բնակիչ, որոնք բոլորն էլ հայեր են:

1930 թ. մայիսին այդտեղ, ինչպես նաև նրա շրջապատի գյուղերում մեծ երկրաշարժ եղավ, սակայն մի քանի տարի անց գյուղը վերականգնվեց ու կառուցապատվեց ժամանակակից ոճով<sup>4</sup>:

Խոսրովա, Մահլամ, Ղալասար գյուղերում հայերն ապրում են տեղի բնակիչների հետ կողք-կողքի, Մահլամում ու Ղալասարում՝ բրդերի, Խոսրովում՝ ասորիների հետ:

Հայ մեծ վիպասան Բաֆֆու ծննդավայր Փայաջուկը խիստ ավերվել է: Այնտեղ ապրում է ընդամենը ինը հայ ընտանիք, իսկ Շահիուրում՝ 25 հայ ընտանիք<sup>5</sup>:

1943 թ. մարզի հայերի ընդհանուր թիվը հասնում էր 4000-ի<sup>6</sup>: 1946 թ. Սալմաստի գյուղացիների մի մասը հայրենադարձվեց Սովետական Հայաստան, իսկ մյուս մասը փոխադրվեց Թավոզի ու Թեհրան: Այժմ այնտեղ մնացել է հազարից ոչ ավելի հայ:

Մաբո — Այստեղ, ինչպես և Խոյում հայեր չեն մնացել, Մաբովում ապրում է 50—60 հայ, մեծ մասամբ արհեստավորներ: Մի քանի հայ ընտանիք է ապրում սուրբ Թադևոսի վանքի շրջակայքում, որոնք և հիմնականում հանդիսանում են հայկական ճարտարապե-

1 Ա. Արրահամյան, Համառոտ ուրվագիծ, Ա, էջ 242:

2 Նույն տեղում:

3 «Վերածնունդ», 1943, ապրիլի 25:

4 Նույն տեղում, 1944, օգոստոսի 27—28:

5 «Ալիք», 1960, օգոստոսի 21—24:

6 «Վերածնունդ», 1943, ապրիլի 25:



տուժյան նշանավոր այդ կոթողի սպասավորներն ու պահպանողները: Դատելով վանքի հիմնադրման տարեթվից, այդ վայրերում հայերը բնակվում են դեռևս մեր թվականության VI դարից:

Ղարադաղ — Լեռներում, Արաքսի ափերին կից այս հնագույն օջախում 20-ական թվականներին կար 2,5 հազար հայ: Ներանք բնակվում էին 21 գյուղերում<sup>1</sup>: Ներկայումս մարզում կա 11 հայկական գյուղ՝ Սըղն, Մեհղավ, Ղասեմաշեն, Վինա, Ամբագուլ, Քարագուլիս, Վարդաշեն, Սեահող, Ողան, Նորաշեն և Ուրգուժյան<sup>2</sup>: Մարզի հայկական բնակչության թիվը 3,5 հազար է:

Ղարադաղի հայերը խոսում են Ղարաբաղի բարբառին մոտ խոսվածքով:

Մարաղա — Մինչև դարասկիզբը Մարաղայում կար համեմատաբար մեծ թվով հայ բնակչություն, և քաղաքը համարվում էր հայ և ասորական բնակակենտրոններից մեկը: Տեղեկություններ կան, որ մարաղացի հայերը ծագումով մոտակա Փերավա կամ Փերաբադ գյուղից են, որ գոյություն ունի 300—400 տարուց ի վեր: Այդ գյուղերում մինչև այժմ էլ կանգուն է հայկական եկեղեցին<sup>3</sup>: Պատմական աղբյուրները վկայում են, որ Մարաղայում հայկական գաղթօջախը գոյություն ունի XIII դարից<sup>4</sup>:

Մեր դարի 20-ական թվականներին Մարաղայում և շրջակա գյուղերում ապրում էր 1300 հայ<sup>5</sup>: 1946 թ. տեղի շատ հայ ընտանիքներ վերադարձան Սովետական Հայաստան: Մարաղա քաղաքում այժմ կա մոտ 500 հայ: Գյուղերում հայկական բնակչությունը փոքրաթիվ է:

Թավրիզ — Այդ քաղաքում հայերի մասին հիշատակություն կա դեռևս XIII դարում<sup>6</sup>: Թավրիզը գաղութի հյուսիսային շրջանի կենտրոն դարձավ 1833 թ. (մինչև այդ, դարեր շարունակ գաղութի կենտրոնը սուրբ Թադևոսի վանքն էր): Թուրքմենչայի 1828 թ. պայմանագրից հետո, Արևելահայաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո, սուրբ Թադևոսի վանքը ընկավ անմիջապես իրանա-թուրքական սահմանի վրա և կորցրեց իր կենտրոնի ունեցած նշանակությունը:

1 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 52—53.

2 «Ալիք», 1954, հոկտեմբերի 6:

3 Նույն տեղում, 1956, սեպտեմբերի 11:

4 Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ..., Ա, էջ 242:

5 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 52—53:

6 Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ..., Ա, էջ 242:

XIX դարի սկզբին քաղաքում բավականին մեծ թվով հայեր կային: Թուրքմենչայի պայմանագրից հետո հարյուրավոր ընտանիքներ (մոտ 45 000 մարդ) Թավրիզից ու հյուսիսային Իրանի այլ վայրերից փոխադրվեցին այն ժամանակվա Երևանյան ու Նախիջևանի նահանգները, ինչպես նաև Կովկասի ու Ռուսաստանի այլ շրջաններ: Այն ժամանակ Թավրիզում մնաց 40 հայ ընտանիք<sup>1</sup>:

1922—1923 թթ. Թավրիզում կային 5 500 հայեր<sup>2</sup>:

Արդեն 9 տարի անց այնտեղ կար պիլի քան 6,5 հազար հայ<sup>3</sup>: Այժմ քաղաքում բնակվում է շրջանի հայ բնակչության կեսը:

Թավրիզի հայ ընտանիքները հիմնականում բնակվում են քաղաքի երկու՝ Ղալա (կամ Բերդաթաղ) և Լիլավա թաղամասերում:

\* \* \*

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը, 1912—1914 թթ. մարգահամարի տվյալներով Հյուսիսային շրջաններում կար 32,750 մարդ<sup>4</sup>: 1926—1927 թթ. այնտեղ կար 14,480 հայ<sup>5</sup>:

Տեղի ալևի քան 5 000 հայեր ներդաղթեցին Սովետական Հաստան:

Մի քանի հայ ընտանիքներ կան իրանական Քուրդիստանում, Միանդաբ քաղաքում ու մի ջանի շրջակա գյուղերում: Այդ վայրերի 10 դյուղերում 20-ական թվականներին բնակվում էր 1000 հայ<sup>6</sup>: Նրանց մեծ մասը հայրենադարձվեց ՀՍՍՀ:

## Հ ա ր ա վ ա յ ի ն շ Ր Ջ Ա Ն

Հարավային շրջանում բնակվող հայերի մեծամասնությունը ծաղումով Արևմտյան Հայաստանի արևելյան գավառներից, Նախիջևան և Ջուլֆա քաղաքների ու նրանց հարակից շրջաններից ու ներկայումս Հայկական ՍՍՀ-ի սահմանում գտնվող տերիտորիայի մի մասից են:

Հարավային շրջանում հայկական բնակավայրերի գլխավոր օջախներն են՝ Նոր Ջուղա, Չհարմհալ և Փերիա շրջանի գյուղերը:

<sup>1</sup> «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 123:

<sup>2</sup> Նույն տեղում, 1927, էջ 52—53:

<sup>3</sup> «Ալիք», 1931, դեկտեմբերի 3:

<sup>4</sup> «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 156:

<sup>5</sup> Նույն տեղում, 1927, էջ 52—53:

<sup>6</sup> Նույն տեղում:

Արագանը, Խորրամշահը, Մասչեղե-Սուլեյմանը, Աղա-Ջարին, Ահվաղը և Շիրաղը:

Օջախներն այդ գտնվում են Խուզխտանի, Տարս գավառներում ու Բախտիարի գեներալ-նահանգապետութունում<sup>1</sup>:

Նոր Ջուղա — 1606 թ. Իսֆահանը հարավից օղակող Ջալանդե-Ռուդ գետի աջ ափին կառուցվեց մի փոքրիկ եկեղեցի, որը հայերը Արաքսի ափին գտնվող Ջուլֆայի տաճարի անունով կոչեցին Ամենափրկիչ<sup>2</sup>: Ըստ էության քաղաքն էլ կառուցվել սկսեց այդ իսկ թվականին ու ստացավ նոր Ջուղա (Նոր Ջուլֆա) անվանումը:

Քաղաքը բաժանված էր ութ թաղամասերի՝ Մեծ Մեյդան, Փոքր Մեյդան, Չարսու, Հակոբջանեց, Կաբագյուլ, Քոչեր, Դավրեժ և Երեվան:

Իրանցի և եվրոպացի պատմագետները տարբեր տվյալներ են թողել այդ ժամանակաշրջանում նոր Ջուղայում եղած հայ բնակչության թվի մասին<sup>3</sup>:

Ըստ Ջոնսոնի վկայության նոր Ջուղայում կար 12 000, ըստ Մորրերի՝ 3400, իսկ ըստ Մալկոմի՝ 2500 հայ ընտանիք: Իրանցի պատմաբան Ջավահիր-օլ-Քյալամը նշում է, որ այդ թիվը հասնում էր 30 000-ի<sup>4</sup>: Մոտավորապես նույն թիվն է նշում Ջ. Անանյանը, որը քննել է հայ և օտար աղբյուրների տվյալները<sup>5</sup>: Պետք է ենթադրել, որ նոր Ջուղայի բնակչության թիվը չէր անցնում 30 000-ից:

1724 թ. նոր Ջուղան ավերվեց աֆղանների կողմից և քաղաքը մայրաքաղաքի իր նշանակությունը կորցրած Իսֆահանի հետ մեկտեղ անկում ապրեց: Նոր Ջուղայի բնակիչների նշանակալից մասը (առավելապես հարուստ խավը) քաղաքից փախավ տարբեր ուղղություններով. Բուշիր նավահանգստով՝ Հնդկաստան Թասքայով՝ Իրաք, իսկ Կասպից ծովի նավահանգիստներով՝ Կովկաս և Ռուսաստան:

Ըստ Ջավահիր-օլ-Քյալամի տվյալների, մեր դարի 30-ական թվականներին նոր Ջուղայում ապրում էր 4000 հայ, որոնք բնակվում էին քաղաքի 9 թաղերում (Դավրեժ, Սանգթերաշան, Մեծ Մեյ-

1 Գեներալ-նահանգապետության կենտրոնն է Շահբուրդ քաղաքը:

2 1655 թ. եկեղեցին քանդվեց ու նրա տեղում կառուցվեց ներկայիս Ամենափրկիչ վանքը:

3 Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ..., Ա, էջ 256:

4 «Վերածնունդ», 1934, հուլիսի 12—սեպտեմբերի 12:

5 «Ալիք», 1952, հունիսի 16—17:



դան, Զորսու, Երևան, Փոքր Մեյդան Հակոբջանենց, Կարազյուլ) և վերսկսուցված Նազարի փողոցում<sup>1</sup>։

Վերջին տասնամյակներում Նոր Զուղայի հայ բնակչության թիվը կազմում է 5000 մարդ։

Զ հ ա Ր մ հ ա լ ու Փ եր ի ա շ ը շ ա ն ն եր ի գյուղերը—XVII դարի սկզբին Հայաստանից Իրան գաղթածների մեծ մասը գյուղացիներ էին։ Նույնիսկ մասնապարզ հաշվումներից պարզվում է, որ այդ տարիներին Իսֆահանում և Նոր Զուղայում բնակություն հաստատեց մոտ 80 000 հայ։

Ըստ Առաքել Դավրիժեցու վկայության 1586 թ. Հայաստանի արևելյան գավառներից՝ Դիզաբ, Աղվանք, Գողթան և այլն, Իրան փոխադրվեցին մի քանի խումբ հայ գյուղացիներ (հաճախ ընտանիքներով)։ Նրանք հաստատվեցին Իսֆահանում։ 1603 թ. Շահ-Աբբասը Իրան փոխադրեց 60 000 հայ։ Նրանց կեսը բնակեցվեցին Քաշանի շրջակայքում, մյուս կեսը՝ Իսֆահանում։ 1605 թ., ըստ պատմաբանների հաշվումների, Իրանի մայրաքաղաքի շրջակայքը եկավ գաղթականների 75 000 հոգուց բաղկացած քարավան։ Հետագա տարիներին Իսֆահան փոխադրվեց ևս մի քանի հազար հայ։

Եթե հայ գաղթականների ընդհանուր թիվը Իսֆահանում (չհաշված նրանց ուլքեր բնակեցվել էին այլ վայրերում) ընդունելու լինենք 110 000 մարդ, ապա եթե դրանից հանենք 20 000 արհեստավորներին, վարպետներին ու առևտրականներին, ինչպես նաև Իսֆահանում հիմնված 10 000 մարդկանց, կստանանք մեր ենթադրելի թիվը։ Հայտնի է, որ 1630 թ. հայերը Իսֆահանից սկսեցին փոխադրվել Նոր Զուղա։ Հենց այդ տարիներից էլ Նոր Զուղայի բնակչության թիվը հասավ 30 000-ի։

Սրբ և ինչպես տեղաբաշխվեց հայ գյուղացիությունը Իսֆահանի գավառում և Բախտիարի լեռնաշղթայի նախալեռնային շրջանում։

Հարուստը Տեր-Հովհանյանցը հիշատակում է, թե հայաստանից հայերը բնակեցվեցին Լնջան, Ալիջան, Գյանդուման, Ջղախոր, Զհարմհալ, Փերիա և Բուրվառի շրջաններում<sup>2</sup>։

Ինչպես հայտնի է, Հարուստը Տեր-Հովհանյանցն իր աշխատությունը գրել է XIX դարի երկրորդ կեսին։ Այդ իսկ պատճառով

<sup>1</sup> «Վերածնունդ», 1934, սեպտեմբերի 1։

<sup>2</sup> Հ ա Ր ու թ յ ու ն Տ եր - Հ ո վ հ ա ն յ ա ն յ, Պատմություն Նոր Զուղայի, հ. 1, էջ 31։

այդ շրջանները թվարկելիս նա նկատի է առել Իրանի հայարնակ գյուղերի այդ ժամանակ արդեն կազմավորված աշխարհագրությունը: Սակայն, պետք է նկատել, որ այդ շրջանները Իսֆահանից ու Նոր Զուղայից միևնույն հեռավորության վրա չեն գտնվում: Եթե Լնջան ու Ալիխջան շրջանները անմիջականորեն հարում են Իսֆահանին, ապա Չհարմհալն ու Փերիան նրանից հեռու են միջին հաշվով 150 կմ, Բուրվառին՝ 200 կմ: Մի շարք հայկական գյուղերի Իսֆահանից ունեցած հեռավորությունը միայն ցույց է տալիս, որ Իրանում հայկական գյուղական բնակավայրերի առաջացումը երկարատև ու աստիճանական է եղել:

Հայ գյուղացիների առաջին ապաստարանները, անկասկած, եղել են Լնջան ու Ալիխջան շրջանները: Հարություն Տեր-Հովհանյանցը նշում է, որ այդ շրջաններում բնակեցման առաջին տարիներին հիմնվեց 17 հայկական գյուղ. յոթը՝ Ալիխջանում և 10 Լնջանում<sup>1</sup>: Այդ գյուղերից մեկը մինչև այժմ էլ կրում է Բյալե Արմանի («հայկական գյուղ») անունը: Լնջան ու Ալիխջան շրջանները գյուղացիների՝ Փոքրսիւի ու Չհարմհալ գավառներում, ինչպես նաև Իրանի մյուս մասերում տարածվելու ելակետերն էին:

Հայկական գյուղերի ստեղծման հետագա պրոցեսը ընթացել է հիմնական երկու ուղղություններով: Լնջան ու Ալիխջան շրջաններից հարավ ու հարավ արևմուտք՝ Չհարմհալի շրջանը, գրանցից արևմուտք՝ Փերիայի, Քեարվանգ, ինչպես նաև Բուրվառի և Գյափլա շրջանները: Չհարմհալ, Փերիա և Քեարվանգ շրջաններում սյրոցեսն այդ ընթացքի է XVII—XVIII դարերում: Բուրվառի, Գյափլա, ապա և Քամարա ու Քաղազ շրջանների բնակեցումը հայ գյուղացիներով տեղի է ունեցել XVI—XIX դարերում:

Այդ վայրերը բնակեցվել են ոչ անմիջապես: Վերանի Չհարմհալ գավառը գրքի հեղինակ Ա. Եղգարյանը որոշակի լույս է սփռում Չհարմհալում և այլ հայկական գյուղական բնակավայրերի ստեղծման պատմության վրա: Նա ենթադրում է ու դրանում նրա հետ չի կարելի չհամաձայնել, որ ճանապարհների ու ժամանակակից փոխադրամիջոցների բացակայության պատճառով հայ գյուղացիների բնակեցումը Չհարմհալ ու Փերիա շրջաններում կարող էր սկսվել ոչ ավելի վաղ, քան 1610 թ.<sup>2</sup>:

Հարություն Տեր-Հովհանյանցի վկայությամբ, ժամանակի ըն-

1 Հարություն Տեր-Հովհանյանց, Պատմություն Նոր Զուղայի, հ. 1, էջ 32:

2 Ա. Եղգարյան, Իրանի Չհարմհալ գավառը, Թեհրան, 1963, էջ 27:

Թացքում բոլոր հայ գյուղացիները հեռացան Լնջան ու Ալինջան շրջաններից: Նրանց այդտեղ լինելու հետքերը լրիվ անհետացել են, չհաշված վերոհիշյալ «Քյալե Արմանի» գյուղը:

Չհարմհալի շրջանը — XVII դարի առաջին տասնամյակներին հայ գյուղացիները շարժվելով դեպի հարավ ու հարավարևմուտք, մտան Չհարմհալ շրջանն ու այնտեղ մի քանի գյուղ հիմնեցին: Առաքել Դավրիժեցին մի քանի անգամ հիշատակում է Չհարմհալի շրջանի հայ գյուղացիների Գեանդուման և Ջղախոր բնակավայրերի անունները<sup>1</sup>:

Առաքել Դավրիժեցու և Հ. Տեր-Հովհանյանցի, ինչպես նաև իր ժողոված տվյալների հիման վրա Եղգարյանը ենթադրում է, որ Չհարմհալում բնակություն հաստատած հայերը ծագումով եղել են Արևմտյան Հայաստանի Բասենի շրջանից, Նա մասնավորապես նշում է, որ մինչև հիմա էլ շրջանի բնակիչներից կարելի է լսել «Բասենայ դովրեն» («Բասենի ժամանակ») արտահայտությունը<sup>2</sup>:

Հարություն Տեր-Հովհանյանցի աշխատության մեջ տրված տեղեկությունները ամբողջական պատկերացում չեն տալիս Չհարմհալում հայերի տեղաբաշխման թվի և աշխարհագրության մասին: Հարություն Տեր-Հովհանյանցի տվյալների համաձայն Չհարմհալի շրջանում կար 4 հայկական գյուղ: Նրա տվյալներով դարակեսին հայ ընտանիքների մի մասը դուրս գալով Ահմադաբադ և Գիշնիգան գյուղերից հիմնել է Մամոքան (Մամուրան) և Բուղաջի նոր գյուղերը<sup>3</sup>:

1856 թ. մարդահամարի տվյալներով (ըստ երևույթին այն առաջինն էր Նոր Ջուղայում և նրան ենթակա գյուղական հայ բնակավայրերում) Չհարմհալի շրջանում կային 5 հայկական գյուղեր՝ Սիրաք, Ահմադաբադ, Գիշնիգան, Մահամբա և Լիվասիան: Բոլոր այդ գյուղերում այն ժամանակ կար 2063 հայ<sup>4</sup>:

Սակայն Եղգարյանը վկայում է, որ Չհարմհալում կային նաև ուրիշ գյուղեր, որոնք մոռացվեցին: Դրանցից էին Ոստիգանը, Շալամաղարը, Սուլուգանը, Ջիվրիգանը և Ռոստովը<sup>5</sup>:

1 Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 46, 215—216:

1 Ա. Եղգարյան, Իրանի Չհարմհալ գավառը, էջ 26:

3 Հարություն Տեր-Հովհանյանց, Պատմություն Նոր Ջուղալի, հ. 2, էջ 296:

4 Նույն տեղում:

5 Ա. Եղգարյան, Իրանի Չհարմհալ գավառը, էջ 28:





հայկական գյուղը՝ Սիրաբը (հիմնված է մոտավորապես 1610 թ.) ունի խառը բնակչություն՝ հայեր ու պարսիկներ:

Տեղի բախտիարի խաների ֆեոդալական շահագործումից փրկվելու համար հայերը լքում էին իրենց գյուղերը ու հիմնվում քաղաքներում ե արդյունաբերական կենտրոններում: Հնդկական հալոցի հետ ունեցած բազմաթիվ կապերի շնորհիվ այդ շրջանի հայ բնակչության մի մասը, ինչպես նշվեց, փոխադրվեց Հնդկաստան: Սակայն չհարմհալցիները մեծ մասը հաստատվեց Իրանի նավթարդյունաբերական կենտրոններում՝ Մասջեդե-Սուլեյմանում, Ալաս-Ջարիում, Արագանում, Ահվազում և այլուր:

Փ և ր ի ա յ ի շ ը շ ա ն ր—Սկսած XVII դարից այդ շրջանի տերիտորիայում գոյություն է ունեցել հայ գյուղական բնակչության օջախ: Չհարմհալի համեմատությամբ այն կայուն է և ավելի քան երևի և կես դար հանդիսանում է երկրում հայ բնակչության կենտրոնացման հիմնական կետերից մեկը:

Ինչան և Ալինջան շրջանների հայ գյուղացիները Փերիայի շրջան են եկել XVII դարի առաջին տասնամյակներին: XVII դարի 20-ական թվականներին, աֆղանների արշավանքների ժամանակ, հայ գյուղացիները տեղաշարժվեցին դեպի արևմուտք և բնակություն հաստատեցին այժմյան վայրերում: Հարություն Տեր-Հովհանյանցի սոլյալների համաձայն, XIX դարի կեսերին շրջանում կար 22 հայկական գյուղ<sup>1</sup>:

1919 թ. մարդահամարի տվյալներով Փերիայի շրջանում կար 27 հայկական գյուղ, ընդամենը 12 130 բնակչությամբ<sup>2</sup>: 1946 թ. այստեղ կար 24 հայկական գյուղ. 1946 թ. օգոստոսին Սովետական Հայաստան հայրենադարձվեցին 8 գյուղերի բնակիչներ (Սելբարգի կամ Դեհ Արմանի, Ագիդան, Մաղրաբադ, Մուզան, Բշկերտ, Դաջան, Ագնալու և Հաջիկալա), ընդամենը 2395 մարդ:

Հարևան Քևարվանդի շրջանից այդ ժամանակ հայրենադարձվեցին երկու՝ Դովլաթբադ և Վերին Քրգեր գյուղերը: Հայրենիք վերադարձան նաև Փերիայի շրջանի տարբեր գյուղերից առանձին ընտանիքներ: Հայրենադարձությունից հետո շրջանում մնաց 12 712 հայ<sup>3</sup>:

1949 թ. շրջանում մնացել էր 16 հայկական գյուղ: Հետադադարում

1 Հարություն Տեր-Հովհանյանց, Պատմություն նոր Զուղայի հ. 1, էջ 32:

2 «Պարուկահայ տարեցույց», 1927. էջ 60:

3 «Այիր», 1949, հունիսի 20 և 30:

ըրջանում ավելացավ ևս մեկ հայկական դյուղ: Ներկայումս այնտեղ կան հետևյալ գյուղերը.

1. Խոյզան	1450 մարդ	10. Սվարան	590 մարդ
2. Նամակերտ	1430 >	11. Մնկերտ	490 >
3. Բոլորան	1160 >	12. Խունկ	440 >
4. Սանգիբարան	1150 >	13. Շահբուլաղ	320 >
5. Ղարղուն	950 >	14. Զիզան	230 >
6. Լեղարջրիբ	835 >	15. Դբախտակ	210 >
7. Շուրիշքան	760 >	16. Ղալամելիք	153 >
8. Հազան	690 >	17. Դաճան	60 >
9. Միլակերտ	685 >		

Այդ շրջանների բնակչության ընդհանուր թիվը (բնական աճով) ներկայումս կազմում է 15 000 մարդ<sup>1</sup>: Գրեթե բոլոր հայկական գյուղական բնակավայրերի համեմատությամբ Փերիայի շրջանում առավել շատ են մանր հողատերերը: Այդ պատճառով այն չի հնթարկվել այնպիսի ուժեղ դեգրադացիայի, ինչպես Գյափլայի, Բուրվառիի, Զհարմհալի և (ավելի պակաս) այլ օջախները:

Աբադան — Իրանի նավթարդյունաբերության խոշորագույն կենտրոնն է: Հայերով սկսեց բնակեցվել «նավթային պատմության» արշալույսին՝ XX դարի սկզբին: Տեղի հայ բնակչությունը հատկապես ավելացավ 20-ական թվականներին: Ի հաշիվ Իրանի տարբեր շրջանների, ինչպես նաև Վան-Վասպուրականի, Խոյի, Սալմաստի փախստականների համար Իրաքի Նայր-օլ-Օմար վայրում անգլիացիների կառուցած գաղութի հայերի:

Քաղաքի հայ բնակչության թիվը հետագայում մեծացավ, սակայն նավթային ընկերության ձեռնարկություններում նավթարդյունաբերման ավտոմատացման հետևանքով վերջին տարիներս դադարեց հայերի հոսքը Աբադան: Այժմ քաղաքում կա 4,5—5000 հայ:

Խորրամշահր (նախկին Մոհամարա) — Աբադանից հեռու է 14 կմ, Իրանի հարավի կարևորագույն նավահանգիստն է: Մինչև վերջին ժամանակներս Խորրամշահրի հայկական բնակչությունը Աբադանի հետ մեկտեղ վարչական մի ամբողջություն էր կազմում: Զնայած փոքրաթիվ լինելուն (ընդամենը 200 մարդ) 1960 թ. այն կազմեց առանձին համայնք<sup>2</sup>:

1 Հայկական գյուղերից բացի շրջանում կա 10 վրացական, 34 թրքախոս, 3 պարսկական, 30 լուրական և 27 խառը բնակչությամբ գյուղեր (տե՛ս «Ալիք», 1949, հունիսի 20):

2 «Ալիք», 1960, մայիսի 3:



Մ ա ս ջ ե դ և - Ս ու լ ե յ մ ա ն — Ի նչպես Արադանը, սա ևս Խուզիստանի առավել հին հայկական բնակավայրերից է: Առանձին հայ բնտանիքներ այստեղ հաստատվել են 1908 թ.:

Մասջեդև-Սուլեյմանում հայերի թիվը զգալիորեն աճեց 1920 թ. և հետագա տարիներին: 1930 թ. այնտեղ կար 500, 1955 թ.՝ 1500 հայ: Քաղաքի հայկական բնակչության մեծ մասը ծագումով փերիա, Չհարմհալ շրջաններից են ու նոր Զուղայից<sup>1</sup>:

Այժմ քաղաքում 2000 հայ կա:

Աղա-Ջարի—Իրանի հարավի ավելի հարուստ նավթահանքերի կենտրոնը հանդիսացող այս քաղաքում հայերը բնակվում են 1936 թ., Քաղաքի հայ բնակչությունը սկսեց համալրվել 40-ական թվականների կեսերին, ի հաշիվ Խուզիստանի այլ շրջաններից ժամանածների:

Աղա-Ջարիում այժմ 1000 հայ է բնակվում:

Ա հ վ ա դ — Խուզիստանի նահանգի կենտրոնն է: Հայերն սկսել են այստեղ բնակվել XX դարի սկզբին: Հետագայում քաղաքի հայ բնակչությունը սկսեց ավելանալ, բայց ոչ զգալի շահով, այժմ այնտեղ ապրում է 800 հայ:

Շ ի բ ա զ — Շիրազի հայերը հիմնականում այն 3000 հայերի անացորդներն են, որոնց Շահ-Աբբասը որպես «նվեր» 1605 թ. հանձնեց իր զորավարներից մեկին: XVII դարում այդ բնակավայրը զգալիորեն աճեց, Սակայն աֆղանների կողմից Շիրազի գրավումից հետո (1725) տեղի հայերին վիճակվեց այն բախտը, ինչ որ նորջուլայիյիներիս: Ներկայումս Ֆարս նահանգի կենտրոն Շիրազում կա բնգամենր 40 հայ ընտանիք:

\* \* \*

Փոքր խմբերով հայ ընտանիքներ կան Բանդեր Մաշուրում (մոտ 65 ընտանիք), Նաֆթ Սեֆիդում, Լալիում, Նաֆթ Կելեում և Խուզիստանի այլ վայրերում:

Երկար ժամանակ հայ գյուղական բնակչություն կար Իսֆահանի նահանգի Քերավանդ շրջանում<sup>2</sup>: 1919 թ. այստեղ կար երկու հայկական գյուղ, 690 բնակիչներով<sup>3</sup>: 1946 թ. այդ գյուղերի բնակչու-

1 «Ալիբ», 1955, հունվարի 31:

2 Ա. Երեմյան, Սոհահանի Փերիա դավաոր, նոր Զուղայ, 1919, էջ 130—136:

3 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 60:

թյան մեծ մասը, ինչպես նշվեց, փոխադրվեց Հայկական ՍՍՀ, իսկ մնացածը մեկնեց Փերիա<sup>1</sup>։

• • •

Որպեսզի ճիշտ պատկերացում ստեղծվի իրանահայամբողջ դաշուլթի բնակչության թվի մասին, պետք է նշել, որ մեր հետազոտած ժամանակաշրջանում, ինչպես և նախկինում երկրի հայ բնակչությունը շարունակ տեղաշարժվել է։ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին իրանում կար 60 000 հայ<sup>2</sup>։

Պատերազմի սկզբին մոտ 35 000 հայ իրանի հյուսիսային շրջաններից փախել է Կովկաս և Ռուսաստան։ Նրանց մեծ մասը հետադադարում հետ վերադարձավ, մյուս մասը իրան վերադարձավ 1932—35 թթ.<sup>3</sup>։

1917 թ. Վան-Վասպուրականից իրան անցան մոտ 55 հազար հայեր։ Նրանցից 15 000 փոխադրվեցին իրաք։ իրաք դնացած հայերի այն մասը, որ սկզբում բնակություն հաստատեց Բաղդադի, Բաքուբեի շրջակայքում, ապա նայր-օլ-Օմարում (Բասրայի մոտ), իրանի վրայով վերադարձավ Հայաստան, իսկ մնացած մասը մնաց Արաղանում։

Ենթադրում են, որ մինչև 1922 թ. իրան է ժամանել 35 000 հայ<sup>4</sup>։ Հետևաբար այդ թվականին իրանում կար մոտավորապես 95 000 հայ։

Իրանցի հայերի թիվը այդ թվականից ի վեր մեծացել է բնակչության բնական աճի հաշվին (եթե նկատի չառնենք այն մի քանի հազար իրանահպատակ հայերին, որոնք ՍՍՀՄ-ից փոխադրվեցին 1936—38 թթ.)։ Սակայն հայերի թիվն իրանում մինչև 1944 թվականը շատ չաճեց, քանի որ ամբողջ այդ ժամանակամիջոցում պարբերաբար կազմակերպվում էր հայրենադարձություն Սովետական Հայաստան։

1944 թ. իրանահայության թիվը անցնում էր 100 հազարից, իրանահնդկական թեմի եկեղեցական խորհրդի տվյալներով, 1944 թ. մայիսին հարավային շրջանում (չհաշված Թեհրանը) բնակ-

1 «Ալիք», 1949, հունիսի 20 և 30։

2 Ե. Խաթանասյան, Հայոց թիվը, Բոստոն, 1965։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

վում էր 50 302 մարդ<sup>1</sup>։ Ինչպես նշվեց վերը, այդ ժամանակ Թեհրանում կար ավելի քան 25 000 հայ։ Մինչև 20 000 հայ կար գաղութի հյուսիսային շրջանում, Հայերի այդ ընդհանուր թվին պետք է ավելացնել նաև 6—7 հազար կաթոլիկներին ու բողոքականներին։

Իրանահայերի հայրենադարձման կենտրոնական կոմիտեի տվյալների համաձայն 1946 թ. Սովետական Հայաստան մեկնեց 20 700 մարդ<sup>2</sup>։ Հետևաբար, բնակչության բնական աճի հետ մեկտեղ 1947 թ. գաղութում մնում էր 90 000 մարդ։

Քսան տարում գաղութի բնակչությունը (բնական աճի հետ մեկտեղ) կարող էր ավելանալ մոտավորապես 40—45 000-ով և 1966 թ. դրությամբ կազմել 130—135 հազար, Այդ հաշվումներով կենտրոնական շրջանում այժմ կա 88—90, հյուսիսայինում՝ 16, իսկ հարավայինում՝ 30 000 հայ։

Ինչպես և նախկինում, 1926 թ. սկսվեց նոր հայրենադարձություն Իրանից՝ Հայկական ՍՍՀ։ Անցած ժամանակաշրջանում իրենց նախնիների հայրենիքը վերադարձան մի քանի հազար իրանահայեր։ Որոշ տվյալներով 20-ական թվականներից հետո Իրանից Հայկական ՍՍՀ է հայրենադարձվել 50 000 հայ<sup>3</sup>։

Գյուղական վայրերից ու դավառական քաղաքներից դեպի մեծ քաղաքներն ու արդյունաբերական քաղաքները տեղի հայերի տեղաշարժերի հետևանքով խիստ փոխվել է գաղութի քաղաքային ու գյուղական բնակչության հարաբերակցությունը։

Մինչև 1917 թ. ամբողջ երկրի մասշտաբով այդ հարաբերակցությունը հետևյալն էր. գյուղերում բնակվում էր ամբողջ հայկական բնակչության ավելի քան 75% -ը, իսկ քաղաքներում՝ մինչև 25%։

Այժմ գաղութի բնակչության հարաբերակցությունը գրեթե հակառակ պատկերն ունի։ 130—135 հազար իրանահայերից 100 000-ը այժմ բնակվում է քաղաքներում։ Տոկոսային արտահայտությամբ համապատասխանաբար կազմում է 73 և 27%։ Ուշագրավ է այն հանդամանքը, որ գյուղական և քաղաքային բնակչության տոկոսային հարաբերակցությունը այժմ շի համընկնում նույն հարաբերակցությանը՝ ամբողջ երկրի մասշտաբով։ Այսպես, Իրանի գյուղական բնակչությունը (պաշտոնական տվյալներով) կազմում է 63%, քաղաքայինը՝ 37%։

1 ՀՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. 57, «Ջեկուցում Իրանա-Հնդկաստանի թեմի հայոց կրոնական խորհուրդի», Նոր-Ջուղայ, 1944, մայիսի 22։

2 ՀՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. 362, ց. 2, գ. 17, էջ 87։

3 Ե. Խաթանասյան, Հայոց թիվը։



## 2. 2. ՄՈՎՍԻՍՅԱՆ

### Էջերի ՊԱՐՍԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ

Արաբական արշավանքից հետո Իրանի սասանյան կուլտուրան իր անկումն ապրելով, տարիներ հետո միայն վերածնվեց՝ արաբական կուլտուրայի հետ զուգակցված:

Պարսկական արվեստի տարբեր ճյուղերը (նկարչություն, գրականություն, թատրոն) զարգանում են մահմեդական կրոնի ուժեղ ազդեցության ներքո: Մի հանգամանք, որ սահմանափակում էր իրականության ճշմարտացի արտացոլումը արվեստի մեջ, թեև կրոնական շղարշի տակ ևս իրականությունը արտահայտվում էր այլաբանական բարդ միջոցներով:

VII դարից հետո պարսկական գրականության էջերում երևան է գալիս «Թաազիյե»<sup>1</sup>, «Շարի-խանի»<sup>2</sup> ժանրը: Այս ժանրի տակ պարսիկ հեղինակները զանազան տարբերակներով շարադրում էին Քարբալյում տեղի ունեցած կրոնական պատերազմների ընթացքում Մոհամմեդի և նրա հետևորդների սխրագործությունները, նրանց ողբերգական վախճանը: «Թաազիաները» գրվում էին մեծ մասամբ թատերգության ձևով<sup>3</sup>:

Հետագայում XVI դարի ընթացքում, շիրիմի ուժեղ տարածման հետ կապված «Թաազիաները» լայն տարածում գտան ամբողջ Իրանում: Այդ պատեհ միջոցը օգտագործեցին ժամանակի իշխող շրջանները: Քաջալերելով թաազիաների «դերասաններին» հաճախակի

<sup>1</sup> Թաազիյե— բառացի նշանակում է ողբ, ցավակցություն, չասանի և Հոսեյնի տառապանքների և մահվան ողբում:

<sup>2</sup> Շարի-խանի—դերասանություն:

<sup>3</sup> E. Յ. Բերտելս, Персидский театр, Л., 1924; Charles V. rolleaud, Le theatre persian au Le drame de Kerbecia. Paris, 1950; Wilhelm Litten, Das Drama in Persie, Berlin, 1929.

«ներկայացումներ» կազմակերպելով՝ իրենց քաղաքական ու վարչական սկզբունքը սկսեցին թելադրել հպատակ ժողովրդին՝:

«Թաաղիաների» ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներուանք լիովին հետու շեն մնացել աշխարհիկ կյանքից ու պատմական իրադարձություններից, և շատ հաճախ համեմված են եղել հումորային նրբերանգներով<sup>2</sup>:

Որպես օրինակ կարելի է բերել «Թաաղիաներից» մեկի համառատ բովանդակությունը: Դա կոչվում է «Ամիր Թեյմուրը և Սիրիայի իշխանը»:

Պարսկաստանի թաղավոր Ամիր Թեյմուրը Ալի մարգարեի արյան փրձի: առնելու նախադեպով մեծ գորախմբով մտնում է Նաջաֆ քաղաքը: Այստեղ նա Ալիի դերեղմանի վրա երգվում է, որ մինչև Սիրիայի բնակչությունից վրեժխնդիր շիինի և Հալեպ քաղաքը :ա-

1 Կրոնական թատերախաղերի ունկնդիրները Իրանում, բուրաձև նաուձ էին բեմի (դեմոնի մակերեսից քիչ բարձրությամբ պատրաստված հարթակ, որը կոչվում էր «սաբու») շուրջը և շարքերից մեկը ազատ էին թողնում երթևեկության համար: Հունաստանում ինչպես դիտենք, հանդիսականները նստում էին բեմի շուրջ պայտաձև շարքերով պատրաստված աստիճանների վրա, որը կոչվում էր «թատրոն»: Իրանում ես «Թաաղիաները» մեծ մասամբ ներկայացվում էին շափածո խոսքի ձևով, որի բնթացքում կարևոր դեր էր կատարում երաժշտությունը:

2 Ուշագորավ է մի հանգամանք, որ տարիներ շարունակ Քարբալայի ողբերգությունը նկարագրող «Թաաղիաների» պատճառած ձանձրույթը հոգնեցրել էր անզամ մասնակցող դերակատարներին:

Հաճախ «ողբերգություն» ամենալարված և ամենատրագիկ պահին դերակատարների երբեմն դիպուկ և իմաստավոր սրախոսությունը խզել է ներկաների խոր հուղականությունը, բեկանել է «Թաաղիայի» խորհրդավորությունը, առաջանելով բուռն ծիծաղ հանդիսականների մեջ:

Ինրեեր մի օրինակ:

«Թատուիաներից» մեկում համաղանցի մի դերասան հրաշալի կատարում էր Մուամմեդ մարգարեի նպանող «Շեմրի» դերը, (Համաղան քաղաքը Իրանում հայտնի է իր կաշվի արտադրությամբ: Համաղանցի կաշեգործները նույնիսկ էշի կաշի էին մշակում և այդ պատճառով էլ թեհրանցիները համաղանցիներին ծաղրելու համար նրանց «էշ րեթող» մականունն էին տվել):

Ով ահա, ներկայացման այն պահին, երբ «Շեմրի» դերակատարը «Բեմամին» սպանելու համար թուրը բարձրացրած արտասանում է շափածո այս խոսքերը.

— Ինչու իմ թուրը անգոր է այնքան,

Որ մի հարվածով չի կտրում թուրդ...

Այս խոսքերի վրա «Բեմամին» դերակատարը լհամբերելով իսկույն սրախոսում է.— «...նամարդ, այնքան էշ ես քերթել, որ թուրդ բթացել է»:

Այս սրամիտ ոեպիկան ընդհանուր քրքիչ է առաջացնում հանդիսականների մեջ, «Թաաղիան» խափանվում է սակայն «հանցավորը» ոչ մի պարսավանքի կամ պատժի չի ենթարկվում:

վերի չի հանգստանա: Նույն երգումը նա կրկնում է Հոսեյն մարդա-  
րեի գերեզմանի վրա և ուղևորվում է դեպի Սիրիա:

Տեղեկանալով այդ մասին՝ Սիրիայի իշխանը՝ իր կյանքը փրկե-  
լու համար, որոշում է աղջկան կնության տալ Ամիր-Թեյմուրին:  
Վերջինս ոչ միայն մերժում է այդ նվիրատվությունը, այլև հրամա-  
նում է պատռել աղջկա երեսի քողը, հանել նրա թանկագին հա-  
գուստները, իսկ հորը գանահարելուց հետո բանտարկել: Բացի այդ  
Ամիր-Թեյմուրը հրամայում է գանահարել նաև Հալեպի պալատա-  
կան բոլոր նախարարներին:

Փաստերն ապացուցում են, որ «թաազիաները» ունեցել են  
իրենց հատուկ գործիչները: Նրանց ղեկավարել են հմուտ «մասնա-  
գետներ», որոնք ղբաղվել են՝ դերասանների ընտրությամբ, նրանց  
հագուստով, զրիմով և ներկայացման տեղը հարգարելով:

Ժամանակի ընթացքում «թաազիաները» աստիճանաբար կորց-  
նում են իրենց միատիկ նշանակութունը: Ժողովրդի հոգևոր կյանքի  
պահանջները այլևս չէին բավարարվում կրոնական միապաղաղ և  
արդեն ձանձրալի դարձած «ողբերգություններով»: Նոր խոսքի պա-  
հանջ էր զգացվում: Եվ պատահական չէ, որ «Քերբելայի սզո տե-  
սարաններին» գալիս են փոխարինելու անցյալի պտտմության ու  
ներկայի հետ առնչվող աշխարհիկ թեմաները: Սզո արարողություն-  
ները մղվում են հետին պլան (միայն ներկայացման վերջում եր-  
բման ձևի համար ցուցադրվում է մի փոքրիկ պատկեր Քերբելայի  
զեպքերից):

Նոր «թաազիաները» նույնիսկ ստանում են հումորային երանդ:  
Իրանում տարածված «թաազիաներից» եղել են՝ «Ամիր Թեյմու-  
րը», «Դորրաթ-օլ-Սադաֆը», «Հովսեփ մարգարեն և զորեյջցի  
աղջկա մուսնությունը» և այլն:

«Թաազիաներ» կաղմակերպող և ղեկավարող վարպետներից  
Իրանում մեծ հռչակ է վայելել Միրզա Մոհամմեդ Թազին: Նա ստա-  
ցել էր «թաազիե-գարգան» («թասուզիաներ ղեկավարող») համրավր  
և իր շուրջն էր հավաքել լավագույն գերակատարներին:

Այդ տարիներին Իրանում որոշ տարածում էր գտել նաև տիկ-  
նիկային թատրոնը իր կենցաղային բովանդակությամբ:

Տիկնիկային թատրոնը սկսած XII—XIII դարերից, Սելջուկ-

عبدالله مستوفی ، تاریخ اجتماعی و اداری دوره قاجاریه ، جلد ۳ ، ص ۳۸۸

اول تهران ۱۳۲۱ ، ج ۳ ، ص ۳۸۸



յւերի իշխանութեան օրոք, եղել է ժողովրդի սիրած ժամանցներից մեկը: Այդ դարաշրջանում այն կոչվել է «լոուբաթ» (տիկնիկ), իսկ ձեռնածուներին անվանել են «լոուբաթ-բազ» (ստիկնիկ պարեցնող):

XIII դարի հռչակավոր բնաստեղծ Օմար խայամի քառյակներից մեկում հիշատակութուն կա այդօրինակ թատրոնի գոյութեան մասին: Բնաստեղծն այսպես է ներկայացնում մարդկային կյանքի անցողիկութեան գաղափարը.

Մենք տիկնիկներ ենք, կյանքը ձեռնածու,  
Ճշմարտութուն է սա և ոչ թե կատակ,  
Խաղում ենք անվերջ գոյութեան բեմում  
Ու մեկ-մեկ ընկնում անէութեան գիրկը:

XVI դարում, Սաֆավիների տիրապետութեան ժամանակ «լոուբաթ-լադին» սկսեց կոչվել Իրկու անունով՝ «Խեյմե-շաբբազի»<sup>1</sup> և «Ֆահլեան քաչալ»: Ժողովրդական այս պարզունակ թատրոնի համար արդեն գրվում էին երգիծական բնույթի հատուկ պիեսներ զանազան թեմատիկայով (լիրիկական, կենցաղային և այլն):

Պարսկական թատրոնի զարգացման պատմութեան մեջ զգալի դեր են ունեցել պալատական ծաղրածուները:

Այստեղ կարևոր է նշել մի հանգամանք, պալատական ծաղրածուները շատ անգամ հենց թագավորի գաղտնի ցուցումով իրենց յատերախաղի ընթացքում ծաղրի առարկա էին դարձնում այս կամ այն պալատական նախարարի բնավորութեան կամ արարքի պախարակելի կողմերը: Նասեր-էդդին շահի օրոք գրված հետևյալ քառյակը վկայում է պալատական ծաղրածու՝ Քարիմ Շիրեյի համարձակ ելույթների մասին.

Նասեր-էդդին շահի օրոք, հիմարը,  
Բամբասում է միշտ ամեն գիտունի,  
Այնպես է կորել խելքի նժարը,  
Որ Քարիմը հեգնում է Ֆախրե Ռայիին<sup>2</sup>:

1 Խեյմե-շաբբազին ներկայացվում էր մեծ մասամբ դիշերը: Տիկնիկները շարժման մեջ էին գրվում վերևից կապված թելերի օգնութեամբ: Փաշլեան քաչալը ներկայացվում էր ցերեկով, վրանի տանիքի վրա հարմարեցված հարթակի վրա: Վրանի մեջ մտած դերասանը մատների օգնութեամբ խաղացնում էր տիկնիկներին:

2 Միջնադարյան հայտնի պարսիկ փիլիսոփա մտածող:

Պալատական ծաղրածուներից իրանում մեծ համբավ է ստացել Շահ-Աբբասի պալատական ծաղրածու Քալ-Անայաթը, նասեր-էդդին շահի օրոք՝ Քարիմ Շիրեյին, Իսմայիլ Բազզազը, Շաղալ օլ-Մուլքը:

Պալատական ծաղրածուներից բացի իրանում կային նաև այլ կարգի զգվարճացնող-դերասաններ» որոնց ժողովուրդը «լուծի» էր անվանում:

Սոցիալական ծագման պատճառով նրանց չէր թույլատրվում պալատ մտնել (որքան էլ շնորհալի լինեին): «Լուծիները» մնում էին հասարակության մեջ և նրանց գնահատողը հենց ինքը ժողովուրդն էր: Ներկայացման առիթները լինում էին հարսանյաց հանդեսները կամ այլ տոնակատարությունները: Հյուրերին զվարճացնելու համար տանուտերը հրավիրում էր «լուծիներին»: Այդ ներկայացումները կոչվում էին «Բախթե հոուլի» (աավագանի բեմ), որովհետև բեմը պատրաստվում էր տան մեջտևիցում գտնվող ավագանի վրա (իրանում համարյա բոլոր տների բակերի մեջտեղում կար կլոր ավագան), որի շուրջը նստած հանդիսականները դիտում էին ներկայացումը:

Պարսիկ հայտնի բանասեր պատմաբան Ռեզազադե Շաֆադն այդ մասին գրում է.

«...Ծրգիծական ներկայացումների մասսայականացումը կատարվում էր «լուծիներին» միջոցով: Իրանում պարսիկ լուծիներին կարելի է համեմատել Եվրոպայի ծաղրածուների հետ: Որպես Իրանի հասարակական ու սոցիալական ախտերը մերկացնող հմուտ կատարողներ, այդ մարդիկ իրոք որ կատարյալ դերասաններ էին»<sup>1</sup>:

«Լուծիներին» մեջ մեծ համբավ ունեին Հոսեյն Դուդին, Շեյխ-Չեյխուրը, Շեյխ-քառը, Հասան-գորբեն և ուրիշներ: Նրանց հորինած և ներկայացրած վոդեկիները, ինչպես «Փահլևան քաշա»<sup>2</sup>,

1 دکتر رضا داد شفق، «دایه معاصر ایران» نشریه امیر خارجه،  
خاومیهانہ

2 جلد چهارم شماره اول، ص ۱۳۱۱، «تتر خلیل ثقی» صدو بیجاہ

مقاله «تهران» ۱۳۱۴ ص ۱۹۹

Դոկտոր Խալիլ Սադաֆին իր «150 հողված» աշխատության մեջ որում է. «Փահլևան քաշա» վոդեկիի նման ներկայացումների հանդիպում ենք նաև Թուրքիայում «Ղարա գլոզ», իսկ եվրոպական երկրներում «Polichinelle» անվան տակ: Այդպիսի թատերախաղերում պիսավոր և պատասխանատու գերը կատարում էր

«Փահլևան փանքե» («Քամբակե փահլևան»), «Արուսե հալու» («Տխմար հարսը»), «Խալե Ռոու-Ռոու» («Ռոու-Ռոու մորաքույրը»), «Քարբեք քաշի» («Քաշանցի բժիշկը») և այլն, մինչև օրս էլ շին կորցրել իրենց թարմությունը: Նրանց մեջ բացահայտվում էին կյանքի դառնությունները, քննադատվում էին հասարակության մեջ արմատավորված բարոյական ախտերը, որոնք կատակի ու ծիծաղի քաղցր քսուկով հրամցվում էին ժողովրդին:

XIX դարի սկզբից եվրոպական կուլտուրան աստիճանաբար մուտք է գործում Իրան:

Յաթալի շահի որդի, թագաժառանգ Աբբաս Միրզայի նախաձեռնությամբ Եվրոպա ուղարկված պարսիկ ուսանողների վերադարձից հետո, որոշակի փոփոխություններ տեղի ունեցան Իրանի պետական հիմնարկներում: Հատկապես զգալի բարեփոխումներ մտցվեցին լուսավորության և կրթության բնագավառներում: Զարկ տրվեց տպագրական գործին, որի հետևանքով ժողովուրդը հնարավորություն ունի ստացալ ծանոթանալու և ազգային, և եվրոպական պրակտիկայի: ան, լեզվի և մշակույթի հետ:

Դա մի ժամանակաշրջան էր, երբ Իրանի քաղաքական ու տրնախական կյանքում տեղի էին ունենում զգալի տեղաշարժեր: Տնողական կարգերին զալիս էին փոխարինելու դասակարգային նոր հարաբերություններ: Հասարակական միտքը հարստանում էր համաժամարար ավելի առաջադեմ գաղափարներով, և պարսկական նորաստեղծ մամուլն ու դրականությունը հետզհետե զարգանալով, առաջատար դիրքեր էին գրավում:

Այդ ժամանակաշրջանում աշխուժացում է ապրում նաև պարսկական թատրոնը<sup>1</sup>: Դա շրջադարձային մի էտապ էր, երբ պալատական ծաղրածուների զվարճալի ելույթներին, շրջիկ «լուսիներին» կենդանային բարքերը ծաղրող կոմիկական փոքրիկ թատերախաղերին

---

«խափրիկը» سياه نمايشی նա պետք է խոսեր և անվրևպ տաներ դժվարին դերը: Կարելի է ասել, որ մրցության դեպքում պարսիկ դերակատարները կարող էին շատ բանով գերազանցել Եվրոպայի կոմիկ դերասաններին:

<sup>1</sup> ملك الشعراء بهار سبک شناسی ، چند سوم ، تیرات ۱۳۲۹ ، ص ۱۳۵ ، نخستین کنگره نویسندگان ایران ، تیرات ۱۹۴۷ ، ص ۱۲۸ ، عباس اقبال تاریخ تمدن اروپا و ایران ، تیرات سال ۱۳۳۳ ، ص ۵۹ ، علی نصیریان نظری بهنرمایشی در ایران ، مجله نمايش شماره ۹ تیرات ۱۳۳۶ ، ص ۱۶



փոխարինելու եկան սոցիալական լուրջ հարցեր շոշափող պիեսներ, և որ կարևորն է, դուրս գալով իր նեղ սահմաններից թատրոնը աստիճանաբար դարձավ պարսիկ ժողովրդի հոգևոր կյանքի պահանջները բավարարող բնագավառներից մեկը:

Այս ժամանակաշրջանում հանդես են գալիս օտար լեզուներից թարգմանված պիեսներ: Մեծ ժողովրդականություն են վայելում ադրբեջանական հայտնի լուսավորիչ-դեմոկրատ Միրզա Ֆաթալի Ախունդովի, աշխարհահռչակ կատակերգու Մուխեթի ստեղծագործությունները: Հետաքրքրական է նշել, որ պարսիկ թարգմանիչները օտարազգի կատակերգությունները պարսկերենի վերածելիս աշխատում էին նրանց տալ ազգային կոլորիտ: Փոխում էին գործող անձանց անունները, շատ անգամ դեպքերը համապատասխանեցնում պարսկական իրականությանը, հնարավորության դեպքում դրանք համեմտում էին իրենց ժողովրդի ասուլթներով ու առակներով, պարզեցնում լեզուն և այդպիսով մատչելի դարձնում հանդիսականներին<sup>1</sup>:

